

30.

9(3)  
M-29



~~111~~

~~111~~

135

ՄԻԶ ՆԱՊԵԿ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԵՆՔՆ

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 27 марта 1864 г.

9(3) ~~Դաստիարակություն~~ 4

Ե - 29

ՄԻԶԱԱՎԵՊ

ՀԱՅՈՑ ՍՀԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՔՆ

ՆԻԿՈԼ


կամ

ՀԱՅՈՑ ՍՀԿԻ ԿՐԾՎ - ՏԱՐԱԾՎԱԴՈՒԹՅՈՒՆ  
ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԷՀ.

ՀԱՅՈՑ


Աշխարհական պատմություն:

A 1  
170296



Ա. ՊԵՂԱՐՄԱՆԴ

1864




Пр. Чайковского въ № 18

По Офицерской улицѣ, (напротивъ Демидова сада), домъ № 46.

~~18990~~

~~5848~~



# ՄԻԶԱՎԵԼԿԱՊ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ:

ՆԻԿՈԼ

ԳԼՈՒԽ 1.



Հայերը՝ որ իրանց առևտրական գործերով բնակուած էին Տաւրիկեան (Ղեղան) նահանգումը, իրանց համազգի Հայերից միշտ գործակատարներ էին ունենում Լեհաստանի քաղաքներու մեջ (\*), և այս խակ պատճառով Լեհաստանի մեջ Հայերու բնակութեան սկիզբն դնելու ժամանակագրությունը պիտի ընծայել այն դարերուն, եթի որ Լեհաստանը դեռ նոր էր ձեռք գձել իւր անկախութիւնը: //

(\*) Ինչպէս որ ասած է Նոր-Նախիչևանով քաղաքի հիմնարկութեան Միջնավերումը:

Հայերը՝ թէսլէտ պանդուխտ էին այս  
երկու աշխարհներումն-էլ՝ թէ՝ Վրիմումը և  
թէ՝ Լեհաստանումը (որովհետեւ իրանց  
հայրենիքէն դուրս էին եկած), բայց Վրիմու  
մէջ աւելի շատացած լինելով, և շատ ժա-  
մանակէ վեր բնակուած լինելով, այն եր-  
կիրը, համարեալ թէ՝ նոր հայրենիք էին  
արել իրանց. իսկ Լեհաստանի մէջ ժամա-  
նակաւոր բնակիչները՝ Վրիմու երկիրը իրանց  
մայրաշխարհ էին կարծում և իրանց «Վրիմ-  
ցի Հայ» էին անուանում։

Ասաշակիր զօրաց արշաւաններն-էլ Կիլի-  
կիոյ Հայերու համար ևս Ճանապարհ բա-  
ցին գէալ ի Լեհաստան. բայց Կիլիկիոյ Հա-  
յերը միայն վաճառաշահութէան համար էին  
զնում այս կողմը, և զանազան հանգամնք-  
ներով ձնում այն տեղ. եթէ Հեթում 2-դի  
և Լէոն 5-դի ժամանակը լինէր՝ Հայերը, որ  
զզուած էին Լատինադաւան իշխաններէն և  
կրօնաւորներէն, տաք Հաց-էլ որ գէմ անէին  
նրանց՝ ոչոք չէր խարուիր, և ոչոք չէր  
երթար Լեհաստան։

Ասեղք Անիի Հայերն էին, որ այն ժամա-  
նակներումը սկսել էին ցրուիլ, և արդէն  
Յունաց ձեռքէն խմած գտնվելով դառնութիւն  
բաժակի մրուրը, որ ըստ օրէ աւելանում

Էին Եւրոպայի մէջ, ուր որ (որովհետեւ գեռ  
շատ տեղ թագաւորում էր միջին դարերու  
բարբարոսութիւնը) Հայերը երևում էին նո-  
ցա մէջ աւելի կենցաղակիրթ, և բազմա-  
նում էին Լեհաստանի մէջ մանաւանդ :

Հակ 1475 թուին, այսինքն՝ Անիի թա-  
գաւորութեան վերանալէն չորս հարիւր  
տարի յետ, իսկ Ոտոքենեանց սրբազնու-  
թեան վերջանալէն հարիւր տարի յետոյ,  
երբ որ Քէփէ քաղաքը առին Օսմանցիք, և  
Հայոց երևելի իշխաններուն դլսատեցին՝  
Պրիմու Հայերը սկսան ամեն կազմ ցրուիլ,  
և շատերը գունդագունդ դիմեցին դէպ ի  
Լեհաստան :

Հահ-Աքրասի՝ Հայերուն՝ Հայաստանէն  
Պարսկաստան քշէլից եօթն տարի յետոյ,  
այսինքն՝ 1614 թուին, Պրիմու Հայերը մեծ  
բազմութեամբ գաղթուեցան Լեհաստան և  
այսպէս՝ Հայերու թիւը Լեհաստանի մէջ  
հասաւ մինչև քառասուն հազար գերդա-  
տան, որոց երևելի բնակված քաղաքները  
էին՝ այսպէս կերնովիցա՝ Բուհուն նահան-  
գումը . ի) Ատանիսլաւով . դ) Լեմ-  
բերդ (Խլով կամ Խլովլ, կամ Լվով, կամ  
Լէովլազլիս), Գալիչիայուն, որ Աւատրիայի  
ձեռքի տակն են . դ) Վարչական .

Ե) Կամենիցա, որ Ոռոսաց Տէրութեան  
ներքոյ են այժմ:

Այսօտ մէջ այնպիսի բազմամարդ հայտ-  
րնակ քաղաքներ առաջացան, որ հաղարաւոր  
Հայ բնակիչ գերգաստաններ ունէին, ինչպէս  
որ մի միայն Խլով քաղաքումը հաղար տու-  
նէն աւելի Հայք կային: Թող այլ քաղաք-  
ները, ուր որ Հայերը կտոր կտոր ցրուած  
էին:

Եյս Հայերը իրանց վաճառաշահութեան  
գործունեութիւնով այնքան ծաղկեցուցին  
Լեհաստանի առուտուրը, որ այն երկրի  
թագաւորները տեսնելով նրանց պիտանա-  
ւորութիւնը, արդիւնարարութիւնը և օգ-  
տաբերութիւնը՝ շնորհեցին նրանց ժամա-  
նակ ժամանակ շատ արտօնութիւններ: >

Ապօկիմիր 3-դ, Սիկիզմունդ և Վլադի-  
լաւ 4-դ՝ ցանկանալով, որ Հայերը ևս առա-  
ւել չոխացնեն Լեհաստանի միջի վաճառա-  
կանութիւնը, ծաղկեցնեն արհեստները,  
ընդարձակեն խաշնարածութիւնը և ամեն  
տեսակ անասնաբուծութիւնը, և քաջալե-  
րեն և խրախոյս տան հողագործութեան՝  
պարզեապրերով հրամացել էին, որ Հայերը  
կարողանան իրանց կրօնական տատուած-  
պաշտութիւնը ազատ կատարել իրանց ոռ-

վորական ծէսերով՝ Հայաստանեայց սուրբ  
Եկեղեցւոյ կարգաւորութեան համեմատ .  
ունենան ամեն քաղաքներու մէջ այն իրա-  
ւունքները, ինչ որ մէկ անգամ ունին այն  
տեղերու քաղաքացիները, չըհամարվին սլան-  
գուխտ, չըհամարուին օտարազգի, այլ բնիկ  
քաղաքացի ճանաչվին, և կարողանան իրանց  
մէջէն ընտրել պատառող, հոդաբարձու, էշխոն,  
որ իրանց ազգային օրէնքներով՝ իրանց  
մէջ ծագած վէճերը դատեն, դատակնքեն  
և վճռեն: >

Հայերը ոչ թէ միայն առաջանում էին  
առևտրական գործերի մէջ, այլև զինուորական  
սպաշտմաններումը պատճենվելով՝ համում էին  
զօրապետութեան, և քաղաքապետներ ևս  
էին դառնում, և իրանց յանձնուած զօրքը  
և բնակիչները լաւ կառավարելով՝ մեծ օգուտ  
էին բերում Լեհաստանի յառաջադիմու-  
թեան, որ այն ժամանակները կարօտ էր  
նոցա և նոցա նման աշխատասէր ազգերու  
օգնութեան: >

Հայերը պատճառ, գործի և միջոց էին  
դառնում Լեհաստանի երջանկութեան, հե-  
ռաւոր աշխարքներու ճոխութիւնը և գան-  
ձը այն երկիրը ժողովելով, և այն երկրի  
բերքերը օտար աշխարհների մէջ ցրուե-

լով. որով լեռնարնակ և անտառաբնակ կիսավայրենի և աղքատութեան մէջ ձընշված և թաղված Աեհաստանցիք ոչք էին բաց անում, չքառորութեան և կարիքներու տակէն իրանց գլուխը օր ըստ օրէ գուրս էին հանում, և սկսում էն քաղաքականացեալ ապրուստի համը և ճաշակը հականալ :

Իսայց ժամանակի հանդամանքը ուրիշ ուղղութիւն ունէր: Անխոհեմ տէրութեան կառավարչութիւնը համաշխարհային օգուտը զոհեց կրօնական մոլեռանդութեան: Ոչ միայն Հայերը ընկան չարաբաստիկ վիճակի մէջ, այլև ամեն աղքերը, որոնք որ Հռոմեական կաթոլիկութենէն կամենում էին ապահովել իրանց գլուխը: Բողոքարկուաց (Պատրիարքան) վարդապետութիւնը Հիւսիսային Գերմանիային դալով դալով՝ մտել էր Աեհաստան, և արդէն բաւական զօրացել էր. և Աեհաստանի բնակիչքը օր ըստ օրէ իրանց ջանքը տւելացնում էին, որ կարողանան իրանց խղճմանքի ազատութիւնը հոգեսրականաց անկուսպար հոգաբարձութեան տակէն հանել, և այնպէս սրաշտել իրանց կրօնը, ինչպէս որ իրանց հոգին էր թելագրաւմ:

Թիադաւսրութիւնը ո՛չ միայն չէր կտմե-  
նում հասկանալ թէ՝ բողոքարկութեան հե-  
տեւղներուն Գիտական անուն դնելով՝ կրօ-  
նամոլ Հոռմադարանները սերմանում են  
այն երկրի մէջ մէկ անկարկատելի երկապա-  
ռակութիւն, այլև մէկ ծիծաղաշարժ սլարդ-  
մտութեան դիմայլակի տակ ծածկում էր  
իւր խորամանկ գիտաւորութիւնը, որով՝  
որպէս թէ անտարքեր հաւասարակշռու-  
թեամբ մտիկ էր տալիս Կաթոլիկ Հոգեու-  
րականաց հայթայթանքներու վրայ, երբ որ  
նոքա սկսում էին Պետրոսի Հովուական  
գաւաղանի տեղ, որով որ Քրիստոս ասել  
էր «Արածեալ զուխարս իմ», Մաղքոսի  
անկաջ կտրելու սուրբ ամեն տեղ շողայնել։  
Այսպէս՝ Ահաստանի թագաւորութիւնը  
իւր հիմքը փորփորել էր տալիս Հոգեուրա-  
կանաց ձեռքով, և չէր խմանում, որ իրան  
է տկարացնում։ Այսիթէ այսպէս ճանփանե-  
րով շառաջան Փարէզի և բոլոր Ֆրան-  
սիայի մէջ Բարեւուամշան Գէշենիքը, և խոա-  
լիացումը՝ Սէն-Լեն սրածութիւնները։

Ահաստանի մէջ, դեռ ևս տանտավեց-  
երորդ դարու կիսումը, ըսրբոքուել էր Եկե-  
ղեցւոյ միութեան քարոզող Ունիւունիքուու վա-  
ռած բոցը, և արդէն տուրում էր Առու-

սաստանի մէկ քանի սահմանակից արևմտեան գաւառներու բնակիչներուն : Հռոմայ քահանայապետութիւնը ուրախ էր, որ արևելեան եկեղեցոյ որդոցը կարողանում էին քարոզիչները որսալ, և արևմտեան եկեղեցոյ ծոցը բերելով՝ հպատակեցնել իւր փափական իշխանութեան :

Իսոյց որովհետև Վիւթեր և նորա համախոհները արդէն սկսել էին Պապի ծոցէն-էլ հանել արևմտեան եկեղեցոյ ծնունդները, և ցոյց տալ նրանց բողոքարկուներու ճանապարհը «գողը գողէն գողանալով՝ վերն Աստուծուն զարմացնելով», որով խղճմտանքը կապանքներու մէջէն դուրս գալով՝ ինքն էր մնում իրա համոզմանց համար պատսսխանատու, — Հռոմայ գահը յառաջվանէ գուշակելով, որ այդ թևակօխութիւնը թէ կանուխ և թէ անագան պիտի նորա ափէն աշխարհական իրաւունքները առնու, և յանձնէ օրինաւոր իշխանութեան ձեռքը, հանել էր խորհրդական երկրէն Եղու՛մ կրօնանաւորներուն, որ իւր՝ բողոքարկութենէն ստացած վէրքը առողջացնէ :

Լեհաստանի տէրութիւնը վեշտասաներորդ դարու վերջերումը հրաւիրեց Եղուիթներուն, որ բողոքարկուներու դէմ ոգո-

րին։ Ընդարձակ ասալարէս բացուեցաւ այս  
անձանձիր կարգաւորներու համար Պոլո-  
նիայի և Լիթուայի երկիրներու մէջ։ Եղուի-  
թականք իրանց ամենաճարտար հնարագի-  
տութիւններու շնորհօք և ինչպէս կողովոյն կը-  
րակներով բաւական նուազեցուցին պրո-  
տեստանտութեան ուժը։ և երբ որ տեսան՝  
թէ էլ բողոքարկուներէն Հռոմեական իշխա-  
նութեան համար վտանգի երկիւղ և կաս-  
կած չըկայ Լեհաստանի մէջ, գարձուցին  
իրանց ուշքն ու միտքը դէպ ի ուրիշ եկե-  
ղեցիններու դաւակունքը, որ նրանց-էլ կա-  
րողանան արևմտեան դաւանութեան ծառա-  
յեցնել, որ այն Լեհաց աշխարքի մէջ բը-  
նակուած ամեն ազգերէն շինվի մէկ հօտ,  
և նոցա վրայ Հռոմայ քահանայազետը լինի  
մէկ հովիւ։ Ահա՝ այս էր Միութիւնը (Սուս),  
և այս էին ցանկանում այն միութեան և  
միաբանութեան քարոզող Ունիոնի կամ  
Ունիոնի բանակը։

Եւ ի՞նչպէս որ ցանկացել էին՝ այնպէս-  
էլ արել էին, և իրանց բաղձանքին հասել  
էին. մէկ քանի թեթևահաւատ և թուլա-  
միտ ոռու եպիսկոպոսներ կարողացել էին  
որսալ, և նրանց ձեռքով այն իրանց ռահին,  
այսինքն միութիւնը՝ Ռուսաստանի արև-

մտեան գաւառներու մէջ արմատացնել :  
ի՞նչ էր այս ՌԱՆԻԱՆ : Ռուսերը իրանց բնիկ  
եկեղեցական ծէսերը արտաքուստ սկիտի  
պահէին, իրանց լեզուով պատարագը և ա-  
մեն ժամերգութիւնը կատարէին, բայց  
Փափին Հնագանդվէին և Հռոմէական գաւա-  
ռութիւնը ընդունէին : (Միթէ Եզրուիթա-  
կանք կամ ուրիշ Հռոմէադաւանքառողիչ-  
ները քիչ ներողամտութիւններ էին ցոյց  
տալիս կռապաշտներուն, նրանց զանազան  
խտրութիւններու առջև իրանց աչքերը  
փակելով, միայն թէ Փափին ճանաչեն գը-  
լուխ եկեղեցւոյ և փոխանորդ Քրիստոսի.  
միւս բաները ամենն-էլ կարելի էին անում,   
մինչև խաչի հետ հաւասար կուռք-էլ էին  
դնում սեղաններու վրայ, որ կռապաշտնե-  
րուն որսան):

Այս Ռուսաց ազգի-էլ որսալու դիտա-  
ւորութեան ճանվաները ինչո՞վ էին հեշ-  
տացրել . որ Հռոմի մէջ և Վիլնա քաղա-  
քումը վարժատուններ շինուին, և նոցա  
մէջ Ռուսաց մանկունքը Հռոմէադաւան վար-  
դապետներէ ուսումն առնուն: ի՞նչ-էլ յար-  
մար ժամանակ էին գտել անիրաւ Եզրուի-  
թականք Ռուսաց գլխին սյօ խաղարկու-  
թիւնը անել: Խվան Վասիլեվիչ Գոօղնին,

որին շատ էին ուզացել Եղուիթականք որ-  
սաւ իրանց ցանցի մէջ, ու չէին կարողա-  
ցել, վախճանել էր 1584 թուին, և նորա  
աթոռը ժառանդել էր Ֆէօդոր Խվանովիչը,  
որոյ թագաւորութեան եօթներորդ տարին,  
այսինքն 1591 թուին՝ ասում են թէ խող-  
խողվել էր սրիկաներու ձեռքով Գիմիտ-  
րիյ արքայորդին, Ֆէօդոր Խվանովիչի համա-  
հայր, բայց ո՛չ համամայր մանկահասակ  
կրտսեր եղբայրը, Խվան Վասիլեվիչ Գոօդ-  
նիի վերջին կնոջն ծնած որդին, որով  
Ռուսաստանի աթոռոց յաջորդութիւնը 1598  
թուին ընկաւ Ֆէօդոր Խվանիչի աներձագի՝  
Բորիս Գոդունովի ձեռքը:

Առ որովհետեւ կատած կար ժողովրդեան  
մէջ թէ՝ Գիմիտրիյ արքայորդւոյ սպանու-  
թեան մէջ մատ է ունեցել Բորիս Գոդու-  
նովի հաճութիւնն-էլ, Ռուսաստանի բնիկ  
և անհաշտ թշնամի Լեհաստանի թագա-  
ւորութիւնը և Եղուիթականք դուրս հա-  
նեցին մէկ անձն, և Ռուսաց թագաւորի  
առջեւ ախոյեան հնարեցին, որ յետոյ կոչ-  
ուեցաւ սուտ-անուն Գիմիտրիյ, և ասացին  
թէ՝ ստ է Գիմիտրիյ արքայորդին, որ  
մահուանէն ազատուել է: Լեհաստանցիք և  
Եղուիթականք շփոթ, խոռվութիւն և աղ-

մուկ հանեցին Ռուսաստանի մէջ . խաժա-  
մուժ ամբոխին մոլորեցուցին, ոտքի կանդ-  
նեցրին, զրահաւորեցին Բորիս Գոդունով  
թաղաւորի դէմ, և սուտ-անուն Պիմիու-  
րիի համար օգնականներ, համախոհներ և  
զօրավիգներ ժողովեցին:

Բորիս Գոդունովը վախճանեցաւ թաղը  
գլխին, բայց նրա որդին՝ Ֆեօդորը զոհ  
գնաց աղմուկին: Այնուհետև 1605 թուէն  
սկսած համարեա՛ թէ մինչև 1645 թիւը  
շարունակ քառասուն տարի, այսինքն՝ մինչև  
ի Միկուտիւ Ֆեօդորովիսի Ռոմանովի մահը՝  
տեսց այն ունիթուններու վնասապարտու-  
թիւնը, և շատ ռուսեր ընկան Եզուիթա-  
կանաց ռւոկանը, և աւելացուցին Պապա-  
գաւան կրօնամոլներու եռանդը և յանդգ-  
նութիւնը: Այս այն ժամանակներն էին,  
երբ որ Շահ-Աբրասու Հայաստանը քարու-  
քանդ էր արել, և Հայերուն գերի էր տա-  
րել դէպ ի Պարսկաստան:

Ո՞րչափ երջանիկ պիտի կարծէին իրանց  
այն Հայերը, որ Լեհաստանի մէջ էին բնակ-  
ված, և ո՞չ Հայաստանի ալէկոծութեան ծը-  
փանքն էր նրանց համեմայ, և ո՞չ Ռուսա-  
ստանի խռովութեան: Բայց այն ժամանակն  
էլ Հայերը, որ Հայաստանէն դուրս էին, և

ԱԵՀԱՍՏԱՆԻ ԹՄԱԳԱԼՈՐՈՒԹԵԱՆ ՀՈՎԳԱՆԱԿՈ-  
ՐՈՒԹԵԱՆ տակն էին, պիտի չըմուանային,  
որ օտար տէրութեան մէջ են, և իրանց  
Հայրենիքէն դուրս, պիտի ցաւակից լինէին  
իրանց Հայրենեաց և իրանց Հայրենակցաց:  
ով գիտէ, երբ որ լաեցին Հայերու թշուառ  
վիճակը, ի՞նչ ասին. արդեօք ասին թէ՝ ինչի  
նրանք-էլ չէին թողել Հայաստանը, ու չէին  
եկել մեղ մօտ, որ այս տեղ մեղ նման եր-  
ջանիկ լինէին, և կամ չասին թէ՝ ինչի  
Քրիստոնէից աշխարքը թողած՝ բարբարո-  
սաց երկրումն էին կենում: Արդեօք իրաւ  
ազգանէր Հայերու սրտէն՝ այսքան հեռա-  
ցել էր Հայրենասիրութիւնը, որ իրանց սի-  
րական Հայաստանի աւերումը և քանդվիլը  
լսէին այսքան անտարբեր: Զէ! շեմ կար-  
ծում թէ՝ Հայերը այնքան քարացած լինէին  
սրտով, որ մոռացած լինէին իրանց Հայրե-  
նիքը, Հաւատացած լինէին իրանց արդի  
երջանկութեան, և իրանց համազգեաց և  
Հայրենակցաց չարաբաստիկ դառնութիւնը  
լսէին առանց կարեկցութեան: Պատմութե-  
նէն յայտնի է, որ Հայերը որքան-էլ որ հե-  
ռացել են Հայաստանէն՝ միշտ աչքերը պա-  
հէլ են դէսլ ի Մասեաց լնոր, դէսլ ի Նո-  
յեան տասլանը. Ա միշտ մտքերումը այն

18920

17026

17

են ունեցել, որ մէկ օր էլի յետ դառնան  
իրանց հայրենիք. և եթէ շուտով չէ յաջո-  
ղել՝ միշտ հառաջելով ու թասանջելով  
յոգւոց են հանել և հեծել, և իրանց կո-  
րսաի կրակը աղիողորմ արտասունքով են  
զովացրել:

Դեռ կեհաստանի Հայերը խաղաղութեան  
մէջ լինելով՝ վայելում էին իրանց հաւա-  
տարմութիւնով և իրանց անխոնջ աշխա-  
տասիրութիւնով՝ իրանց քրտնավաստակ  
երկանց արգասիքը, չեմ միայն հեռուէն լսե-  
լով իրանց համազգեաց քաշած նեղութիւն-  
ները՝ ցաւակից էին լինում նրանց, չիմա-  
նալով, որ իրանց գլխին հաւաքվում է մէկ  
այսիսի ամսպրոպ, որ պիտի նոցա օրը արել  
խաւարացնէ: Այսպէս մէկ մարդ, կամ մէկ  
հաստրակութիւն, կամ մէկ ազգ միշտ պիտի  
իւր երջանիկ ժամանակը վախենայ այն թլ-  
շուառութենէն, որ կարող է գալ . յառա-  
ջուանէ տեսնէ թէ որ միայն կարող է գու-  
շակել այն մրրիկը, որն որ կարող է նորա  
նաւը ալէկոծութեան հանդիպեցնել. մա-  
նաւանդ այն ազգը, որ կորցրել է իւր հայ-  
րենիքը, և օտար աշխարքումն է պանդիս-  
տացած: Միշտ թշուառութիւնը տէրութեան  
բռնակարս թինէն չի լինիր. կըպատահի որ

տէրութիւնը շատ խնամնատ է, բայց հանգա-  
մանքը այնպէս կը հաւաքվին, որ տէրութեան  
խնամոց առջև ինչպէս արեգական լուսոյ  
առջև ամպեր կը բարդվին, և տէրութեան  
գթութիւնը չեն թողնիր վայելել : ԻնչՔն  
է, որ մարդ օտար տեղն-էլ ուզում է սե-  
փական տուն ունենալ . թէ տուն ունի՝ ու-  
զում է սեփական ձի և կառք ունենալ .  
մարդկային անկախութիւնն է, ուահանջում:  
Որչա՞փ ևս առաւել մարդ պիտի ցանկայ  
հայրենիք ունենալ . ձին, կուռքը, տունը՝  
սուանձին մարդու սեփականութիւնն է .  
հայրենիքը՝ աղգի սեփականութիւնն է .  
ի՞նչ է այն աղգը, որ չունենայ հայրենիք .  
ի՞նչ է այն աղգասիրութիւնը, որ մեկուսի  
և անկախ լինի հայրենասիրութենէ: Այս-  
պէս էին մեր աղգակից Հայերը Լեհաստանի  
մէջ . Լեհաց քաղաքները արել էին իրանց  
համար հայրենիք . կարելի է թէ՝ մոռացած  
չէին Հայաստանն-էլ, բայց Լեհաստանումը  
այնպէս էին բազմել, որպէս թէ ասում էին  
ո Այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւի-  
տենից, ՚ի սմա բնակեցայց, զի հաճեցայ ընդ  
սա՞ : Այս խելքի-էլ ընդդէմ էր, բնական  
կարգին-էլ . օտար երկրումը նատիլ, նորա  
արդիւնքը վայելել, ոչ ծանրութեան և ոչ

կրօնին հաղորդակից լինել, առանձնաշնոր-  
հութիւն ունենալ քան զբնիկ ժողովուրդը  
աւելի: Այս ցաւ էր բնակչաց-էլ, Եղութիթա-  
կանաց-էլ: Եղութիթականք կամ դեռ պարագ  
ժամանակ չէին գտնում, կամ չունեին մեկ  
պատճառ կամ շարժառիթ, որ իրանց շարա-  
թոյն վեաները, ինչ որ հասցրել էին Ռու-  
սերուն կամ Մալոռոսերուն, հասցնեն Հայ-  
երուն-էլ: Այս շարժառիթը բղխեց մեկ  
այնպիսի աղքիւրէ, որ բնաւ կարծելու կամ  
կասկածելու չէր կարող մեկ հատ Հայ:  
Տեսնենք: Դ

Երբոր Շահ-Աբրասը Հայաստանը քանդեց, և Հայերուն քշեց տալու Պարսկաստան, 1605 թուին, Էջմիածին ունէր երեք կաթողիկոս։ Այս կաթողիկոսները ոչ թէ մէկ այնպէս մէկ մէկու հակառակաթոռ դիմամարտք էին, ինչպէս Հռոմայ և Աւինիանի Անթիվագերը, այլ ձախորդ հանգամանքներու բերմամբ մէկ մէկու օդնութիւն հացնելու համար էին առաջացած։ Առաջինն էր Պատկիւն Զ-դ, որ 1586 թուին օծվել էր. բայց զկնի եօթն տարու, երբ որ տեսաթիւ Հայաստանը առաւել քան զշափն ազքատացել է, և իրա բնակիչներէն զրկուել է, և Էջմիածինը անտանելի պարտքերու տակ է ընկել, 1593 թուին ձեռնադրեց Գառնեցի Մէլչէսէլ Եպիսկոպոսին՝ Կաթողիկոսակից, որ նա օգնական լինի նրան, և կարողանայ Էջմիածինը սլարտքէն աղատել։

Այս հնարը ոչինչ օգուտ չքերեց, որովհետեւ Օսմանեանց և Պարսից մէջ եղած երկարաժեւ պատերազմները, Հայաստանի ձեռքէ ձեռք ընկնիլը, երկու պատերազմող թշնամիներէ ոտնակոխ լինելը, եր-

կիրի անվարուցան մնալը, և նորամեն յետ  
անտանելի սովի հասնիլը այնպէս էին արել  
Հայաստանին, որ երկու կաթողիկոսունք  
էլ մնացին անհանգութելի նեղութեան  
մէջ, և այնքան անձարացան, որ բռնա-  
դատվեցան Աթոռը յանձնել Եղեռացի Սրա-  
պիոն Եպիսկոպոսին, որ և 1603 թուին  
(որ տարին որ Շահ-Արքաս պիտի արշաւէր  
Հայաստան) ձեռնադրվեցաւ կաթողիկոս և  
անուանվեցաւ Գրէժէռի 13-դ:

Նոր որ այս Սրապիոն, երրորդ կաթո-  
ղիկոսը Էջմիածնի, պարտքերու համար հոգս  
էր անում, Գրաւիթ կաթողիկոսը թողեց  
աթոռը՝ որ Հայաստանումը շրջագայէ. իսկ  
Մելքիսէթ կաթողիկոսը գնաց Խսպահան՝  
Շահ-Արքասին խնդրել, որ փոքր ինչ էջ-  
միածնի պարտքերը թեթևացնէ: Եջմիա-  
ծինը ոչ թէ Շահ-Արքասին էր պարտա-  
կան, այլ ուրիշ մասնաւոր խաներու և բէ-  
գերու, որոնցմեն Էջմիածինը փոխ էր  
առել և տուգանք էր տուել: Զորօրինակ՝  
մէկ բռնաւոր խան կամ բէգ գալիս է Էջ-  
միածին մէկ քանի հարիւր մարդով, մըս-  
նում է վանքի գաւիթը, և սկսում է ան-  
կարգութիւններ անել. եթէ կաթողիկոսը  
կամ միաբաններէն մէկը մէկ խօսք է ասում,

պկոռւմ են չարչարել, Կաթողիկոսին սկսած  
մինչև յետին սաղմոսասացը փայտի տակ  
ջարդում են, և պահանջում են որ այսքան  
հարիւր թուման տուգանք տան, որ ազատ-  
վին, տակա թէ ոչ հարուածի տակը պիտի  
սպանեն; Ողորմելի Կաթողիկոսը չըդիմանա-  
լով կամ խւր, կամ միաբաններու քաշած  
ծեծին ու հարուածին՝ խոստանում է տալ.  
ձեռագիր են առնում Էջմիածնի կնքով.  
Եթէ տուգանքը հարիւր թուման էր՝ մուր-  
հակի մէջ գրում են երկու հարիւր թու-  
ման: Էջմիածնի գանձարանումը փող չըկայ.  
պարտաւո՞ր է Կաթողիկոսը դանէ դուռ  
ընկնիլ և փող փոխ առնուլ: Փողի տէրն  
էլ Պարսիկ խաներն են ու բէգերն են.  
նոցա մօտ պիտի երթայ, Պարսիկ բռնա-  
ւորի զինւորներն-էլ հետը: Արծաթ-փոխա-  
տոն երկու հարիւր թումանի համար  
պահանջում է չորս հարիւր թումանի  
մուրհակագիր, և ութ հարիւր թումանի  
գրտւական Էջմիածնի ոսկեղին և արծաթե-  
ղին անօթներէն: Կարո՞ղ է չըտալ: Բռնա-  
ւորը առաւ երկու հարիւր թումանը և  
գնաց. բայց Կաթողիկոսը քանի բռնաւոր-  
ներու ձեռքին մատնըլիած մնաց: Թէ Կա-  
թողիկոսը մեռնի այն պարտքը ժառանգու-

թեամբ սկսի մնայ և անց կենաց յաջորդ  
Կաթողիկոսի վրայ : Երեանաց իշխողը, որ  
անմիջապէս իշխող է և Էջմիածնի, Հարկա-  
դրում է Կաթողիկոսին և միաբանից, որ  
պարտքը հատուցանեն : Նուիրակները ար-  
դիւնք շատ են բերում, այն արդիւնքը  
մտնում է Պարսից խաներու և բէգերու  
փորը . Էջմիածնին էլի պարտքի տակն է .  
սկարտքը օր ըստ օրէ աճում է, տոկոսիին  
տոկոսի են աւելացնում , և վաշխին վաշխ:  
Մէկ քանի ժամանակէն պարտքը դառնում  
է անտանելի մալուխ՝ ասեղի ծակէն անան-  
ցանելի: Խորամանկ Պարսիկք գիտեն, որ  
Էջմիածնի արդիւնքը անսպառ ազրիւր է ,  
ուզում են որ միշտ պարտքի տակ լինի :  
Շատ խան, շատ բէգ այն պատճառաւ են  
լինում Էջմիածնին, Կաթողիկոսին և միա-  
բանից թշնամի, որ Էջմիածնն նրանց  
պարտք չունի : Կնչ երջանիկ մարդ է այն  
մարդը, ով որ Էջմիածնէն առնելիք ունի .  
տարին քանի անգամ կուգայ Էջմիածնին  
տունով, տեղով, կանամբք, Հարձերով,  
որդւովք, դատերօք, ծառաներով, ազա-  
խիններով, և քանի շաբաթ, քանի ամիս  
կ'ուտեն, կըլսմեն, կըկոտրաեն, կըփշեն, և  
սկարտքի վրայ պարտք կ'աւելացնուն և կ'եր-

թան: Կարող են ըբտալ. կարող են գըռ-ները փակել, ներս չառնուլ. Հուր, սուր, Հայհոյանք, սրբապղծութիւն, բռնութիւն, Հարուած, դան, սալանութիւն, ամեն ինչ կըպատահի: Ողորմելի կարգաւորքինչ պիտի անեն, որ աղասովին: Ահա Մելքիսէթ Կաթողիկոսը այս մտքով էր դնացել Շահ-Արքասի դուռը, որ յայտնէ Էջմիածնի ցաւերը, յայտնէ թէ՝ Էջմիածնի պարտքը ինչ պէս պարտք է, և խնդրէ թագաւորէն մէկ թեթևութեան հնար:

Մելքիսէթ Կաթողիկոսը Շահ-Արքասին լաւ չէր ճանաչում, թէ ինչպէս չար բռնաւոր է. Նրան տեսած չէր. միայն նրան այն ժամանակ ճանաչեց, երբ որ նա 1603 թուին պիտի դար և Հայաստանը Օսմանցոց ձեռքէն առնուր: Շահ-Արքասը առաւ իւր հետ Մելքիսէթ Կաթողիկոսին, շատ զօրքով եկաւ Հայաստանի վրայ և Օսմանցոց դուրս արաւ Հայաստանէն: Բայց այն միջոց, որ Մելքիսէթ Կաթողիկոսը դնացել էր Շահ-Արքասի դուռը, Օսմանցիք՝ որ փող առնելու կողմանէ՝ Պարսից աղքէն պակաս չեն, սկսել են պահանջել Սրապիոն Կաթողիկոսէն Էջմիածնի պարտքը, և Սրապիոն Կաթողիկոսը այն պարտքը հասուցել է Օսման-

ցոյց, և որպէս թէ Էջմիածինը ազատել  
սլարտքէն:

Երբ որ Շահ-Արքաս հասաւ Հայաստան,  
Սրապիտն՝ որպէս կաթողիկոս Հայոց և որ-  
պէս երեսապարզ (որովհետեւ Էջմիածինը ա-  
զատել է սլարտքէն) գնաց Շահ-Արքասին  
ընդ առաջ : Այլ Շահ-Արքասը ոչ թէ մի-  
այն Սրապիտնին ընդունեց և երեսը ցոյց  
ըստուեց, այլ և Էջմիածնի սլարտքը, որ մէկ  
անդամ Յամանցոց հատուցել էր Սրապիտնը,  
սկսաւ մրւանդամ անհնարին չարչարանք-  
ներ տալով սլահանջել : Դեռ երեք կաթո-  
ղիկոսունք-էլ այս չարչարանքների մէջ էին,  
որ Շահ-Արքասը սկսաւ Հայերուն հանել  
Հայաստանէն և գէալ ի Պարսկաստան քշել :  
Սրապիտն մեռտւ . բայց Գաւիթ և Մելքի-  
սէթ ժողովրդեան հետ գնում էին գէալ ի  
Պարսկաստան : Ճանապարհումը Մելքիսէթ  
կաթողիկոսը մէկ հնար գտաւ ու փախաւ ;  
իսկ Գաւիթ գնաց իւր խղճալի ժողովրդեան  
հետ ինչպէս գաղթական, մինչ իսպահան, և  
այն տեղ էր իւր կաթողիկոսութիւնը վա-  
րում : Մելքիսէթ կաթողիկոսն-էլ ընկաւ  
Շահ-Արքասի ձեռքը և այնպիսի վիշտեր և  
նեղութիւններ քաշեց, որ լեզու չէ կարող  
սլատմել : Այս նեղութիւնները տեսցին

տասնեւութ տարի : Բայց վերջապէս Մելքիուէթ կաթողիկոսը, իւր տեղ ձեռնազրելով Սահակ կաթողիկոսին, 1624 թուին թողեց Էջմիածինը և գնաց կոնստանտինուպօլիս, և այն տեղէն-էլ եկաւ Ահաստան, որ այն երկրի մէջ բնակված Հայազգի ժողովուրդներէն մէկ օդնութիւն գտնէ : Բայց 1625 թուին Մովսէս կաթողիկոսն-էլ ձեռնադրովեցաւ : >

Նշրբ որ Մելքիուէթ կաթողիկոսը եկաւ էօստօլիս քաղաք՝ այն տեղի բնակիչ Հայերը այնպէս ընդունեցին նրան, ինչպէս որ վայելուչ էր ազգի Հայրասպետին, և շատ նուէրներ ընծայեցին Սուրբ Էջմիածնի ազատութեան անունով : Եւ որովհետև Ահաստանի Հայերը մինչև այն ժամանակ եպիսկոպոս առաջնորդ չունէին, և քահանայից ձեռնադրութեան համար նեղութիւններ էին քաշում՝ շատ անգամ նորընծայացուներուն հեռու տեղեր ուղարկելով, կամ հեռու տեղերէն Հայոց եսլիսկոպոսներու պատահաբար գալուն սպասելով, և մանաւանդ Էջմիածնի նուիրակներուն, որ երբեմն շատ տարիներ ճանփումը արգելվում էին, և Ահաստանի Էջմիածնէն հեռու լինելը՝ Էջմիածնին մեծ մեծ վսանե-

րու պատճառ էր դառնում, Էջմիածնի ար-  
դիւնքը այսպիսի տոիթներով ցրվում ցըն-  
դամ էր, և Աւհաստանի Հայերը խղճա-  
հարութիւն էին կրում, որ նոցա հովո-  
ւոթիւնը Էջմիածնին վիշտ ու ծանրու-  
թիւն էր դառնում, Հայերը միտք արին՝  
իրանց համար մեկ առանձին եպիսկոպոս  
ձեռնադրել տալ, որ այն եպիսկոպոսը  
իրանց առաջնորդ լինի, և այն օտար աշ-  
խարհի մէջ պանդխտացած ցրուած հօտին  
հովիւ դառնայ և Էջմիածնի նուիրակու-  
թեան գործը կատարէ: Այս Հայերու խոր-  
հուրդը ունէր համ լաւ կողմ, համ վատ:  
Հայերը երբ որ ուզում էին եպիսկոպոս  
ունենալ՝ կարող էին Էջմիածնէն գրով-էլ  
խնդրել, և Կաթողիկոսը նոցամէն չէր խը-  
նայէր հոգեւոր առաջնորդը: Մանաւանդ այն-  
պէս հեռաւոր տեղ, ինչպէս որ Աւհա-  
ստանն էր, այնքան հեռու Էջմիածնէն՝  
Հայաստանեայց եկեղեցւոյ հաստատու-  
թեան և բարեկարգութեան կենտրոնէն,  
Հարկաւոր էր այնպիսի եպիսկոպոս, որ  
սուրբ Էջմիածնի մէջ լինէր աշքը բացած,  
համոզուած լինէր Հայաստանեայց եկեղե-  
ցւոյ սրբութեան, անարատութեան և ան-  
սայթաք վարդապետութեան մէջ, և նորա

ջերմեռանդութիւնը, թէև աւելի մօտ լի-  
նէր կրօնամոլութեան, փոյթ չէր, միայն թէ  
հաւասարմութիւնը, մտերմութիւնը հրա-  
պարակաւ յայտնված և վկայված լինէր. ինքը  
լինէր հարազատ որդի Էջմիածնի, որ կա-  
րողանար այնպիսի զաւակունք-էլ սերել:  
Մէկ անգամ ծուռն էր Հայերու ցանկու-  
թիւնը, որ ուզում էին ունենալ եպիսկո-  
պոս, և ըստանկացան ունենալ Էջմիածնի  
եպիսկոպոս, Էջմիածնի մէջ ի մանկութենէ  
զարդացած, Էջմիածնի հոգով տոգորված,  
Էջմիածնի մայրութեան անձնանուէր, այլ  
ուզեցան իրանց մէջէն: Կարելի է ցանկա-  
ցել էին, որ իրանց եպիսկոպոսը լինի լե-  
զուագէտ, իմանայ Լեհաստանի լեզուն,  
Լեհաց բարքն ու վարքը. բայց լաւ էր, որ  
այս նոցա ուզեցած բաներէն մէկ քանիսը  
պակաս լինէին, և եպիսկոպոսը լինէր հա-  
րազատ որդի եկեղեցւոյ, քան այդ ձիրքերը  
ունենար, և հոգով լինէր օտար: Ինչպէս  
էր կարող Լեհաստանի մէջ զարդացած հոգե-  
ւորականը առաջնորդութիւն անել Հայոց  
ազգին, որ աշխարքի ամեն կողմերէն էին  
հաւաքվել. մէկը Աիւնեաց երկրէն, մէկը  
Տայոց, մէկը Արարատէն, մէկը Վասպուրա-  
կանէն: Կոցա այնպէս մարդ էր հարկաւոր

առաջնորդութեան համար, որ հազորդակից  
եղած լինէր Հայերու քաշած ամեն թշուա-  
ռութեանց. տեսած լինէր հուր, սուր, սով,  
գերութիւն, հարուած, նեղութիւն, աղքա-  
տութիւն. որ փորձեալ դոլով՝ կարողանար  
փորձանաւորաց օգնական լինել։ Փորձով  
յայտնի է, որ եթէ մեկ մարդ իւր հայրե-  
նիքէն երկար ժամանակ դուրս է մնում՝  
մոռանում է իւր հայրենեաց ծէսերը և սո-  
վորութիւնները, և հպատակում է այն տեղ-  
ւոյ ծէսերու և սովորութիւններու ազդե-  
ցութեան, ուր որ իւր կեանքն է անցուցա-  
նում։ Լեհաստանումը ծնած, զարգացած,  
ուսումն առած և պաշտօնի մէջ դժոնուած  
մարդը ինչպէս է կարող էջմիածնի պատ-  
կեր դառնալ օտար աշխարհումը. ինչպէս  
է կարող ճիշդ պահանջել այն ծէսերը, այն  
սովորութիւնները, որն որ բազմաժամա-  
նակեաց տեսողութեամբ սրբացած են էջ-  
միածնի մէջ, երբ որ ինքը բոլորովին ան-  
ծանօթ է և շունի դէպ առ նա ոչինչ հա-  
կամիտութիւն։ Այս և սոցա նման անթիւ-  
հանդամանքներ միայն ժողովրդոց ցանկու-  
թեան կողմանէ էին ձախորդութեան նշան  
և առհաւատչեաց. իսկ Մելքիսէթ կաթողի-  
կոսի կողմանէ ծայրագոյն սիսալն այն էր

որ՝ երբ նրան յայտնեցին ժողովրդականք  
իրանց ցանկութիւնը, նա խալոյն չասաց  
թէ՝ «Եթէ զուք առաջնորդ էք ուզում, ես  
ձեզ համար Էջմիածնէն բերել տամ, կամ  
Էջմիածնէն ուղարկեմ, կամ ձեր նոր-ընծա-  
յացուն ուղարկեցէք Էջմիածին, որ այն  
տեղ ձեռնադրուի, որ Էջմիածնէն դուքս  
ձեռնադրութեամբ սովորութիւն ըսմտնի աղ-  
գի մէջ, և Էջմիածնի մէկ արտօնութիւնը  
իրմէն չըյափշտակվի»: Մելքիսէթ Կաթողի-  
կոսը միտք չարաւ ինչպէս Հայրապետ,  
ինչպէս ազգի հայր և ինչպէս նկեղեցւոյ գը-  
լուխ, այլ միտքարաւ ինչպէս նեղացածպար-  
տապան, կամեցաւ ժողովրդեան կամքը հա-  
ճել և խոսուացաւ նոցա խնդիրքը կատարել:

Եթէ Մելքիսէթ Կաթողիկոսը չըկամե-  
նար խալոյն ժողովրդեան ցանկութիւնը նը-  
րանց կամեցածի սկէս կատարել, այլ այն-  
պէս խոսուանար անել, ինչպէս որ հարկ էր,  
չըթեթեայնէր եպիսկոպոսական կարգը,  
չըխախտէր Էջմիածնի իրաւունքը, իւր կա-  
թողիկոսութիւնը ամուր կապէց Էջմիածնի  
պատույ և առանձնաշնորհութեան հետ՝  
կարելի էր թէ՝ առ ժամն ժողովրդականք  
փոքր ինչ խրտնէին. բայց յետոյ, երբ որ  
լաւ միտք անէին՝ կըճանաչէին նորաւ ուստիծ-

ներու իրաւացի լինելը և կըփոխէին իրանց գաղափարը . և Մելքիսէթ կաթողիկոսը կըդառնար նոցա աչքումը և բոլոր ազգի համար նոր Մելքիսէղեկ քահանայապետ , ճշմարիտ օրինակ Քրիստոսի:

Հայերը իրանք-էլ պիտի միտք անէին այն, ինչ որ կաթողիկոսն-էլ պարտաւոր էր միտք անել ու միտք չարաւ . Հայերը ու կաթողիկոսը մէկ մէկէ օտար չէին . մէկը Հայր էր, միւսները զաւակունք . մէկը Հովիւ էր, միւսները հօտ . Հայերու մէջ-էլ կային բան հասկացող մարդիկ, նոքա-էլ պէտք էր միտք անէին և կաթողիկոսէն այն բանը խնդրէին, որն որ եկեղեցւոյ սրբութեան պակասութիւն չըքերէր : Հայերը իրանց հայրենիքէն դուրս մնալով, օտարութեան մէջ երկարատեւ պանդխութիւն քաշելով՝ մոռացել էին իրանց Հայութիւնը, իրանց աղդութիւնը, Էջմիածնէն առաջնորդունենալ ուզում էին . բայց Էջմիածնի իրաւունքներու սրբութիւնը թէ ո՞լքան անհպելի, անմերձենալի պիտի պահէին ու ճանաչէին, մոռացել էին . ցրտացել էր նոցա սիրտը համ Էջմիածնէն, համ կաթողիկոսէն . երբ որ տեսան կաթողիկոսին՝ այնպէս կարծեցին, ինչպէս որ մանուկը իւր հօրը

տեսած չըլինի և յանկարծ օտարութենէն  
հայրը յետ դառնայ . մանուկը ի՞նչպէս կը  
խորշի իւր հօրէն , ինչպէս օտար կըկարծէ  
իւր ծնողին . այնպէս էր Լեհաստանի Հայե-  
րու կաթողիկոսի հետ ունեցած առջնշակ-  
ցութիւնը . սիրում էին , սպասուում էին  
առանց գիտակցութեան մտաց . կաթողիկոսն  
էլ նրանց ընդունում էր ինչպէս խորթ զա-  
ւակունք . խղվել էր հայրորդիութեան կասը<sup>ը</sup>  
մէջերէն . մէկ մէկու վրայց մտիկ էին անում  
ինչպէս օտար . չըկար մէջերը այն ջերմե-  
ռանդ մտերմութիւնը . ո՛չ կաթողիկոսը  
կարողացաւ իւր ժողովրդեան սիրու ջեր-  
մացնել , ո՛չ ժողովուրդը կարողացաւ իւր  
հարազատութիւնը ցոյց տալ : Մէլքիսէթ  
կաթողիկոսի Լեհաստանի Հայերուն արած  
սցցելութիւնը մէկ առուտուրի նման բան  
դարձաւ . նա դնացել էր այնտեղ վաստակ  
անելու , և ո՛չ թէ ցրուած հօտը ժողովելու :

Մինչդեռ Հայերը և կաթողիկոսը այս  
հանդամանքներու մէջ էին , Հայերը ուղում  
էին ստանալ առաջնորդ , միայն թղթի մէկ  
երեսը կարդալով , և բանի վերջը միտք  
չանելով , և կաթողիկոսը կամենում էր նոցա  
խնդիրը կատարել՝ որ Էջմիածնի համար  
աւելի արդիւնք հանէ , միտքը չըբերելով

թէ՝ այն սակաւ արդիւնքը ո՞քան մեծ  
մեծ վխասներու պիտի պատճառ դառնայ,  
եթէ նա Աւհաստանի Հայերու մէջէն եւ-  
պիտկոպոս ընտրէ և ձեռնադրէ արտաքոյ  
Էջմիածնի. մինչ դեռ Հայերը այն դիտաւո-  
րութեան վրայ էին, և խորհուրդ էին ա-  
նում, որ ամենեցուն հաճութեամբ ընտրեն  
մէկ պարկեշտ, բարեքարոյ և ուսեալ անձն,  
որ Եսլիսկոսկական կարդին արժանակոր  
համարված լինի. լմէկ հատ աքեղայ՝ Նիկո-  
ղայոս անունով, որին սովորաբար Նիկո-  
ղայոս կը էին անուանում, մէկ քանի բա-  
րեկամներու միջնորդութեամբ Սելքիսէթ  
կաթողիկոսի կամքը հաճեցուց, որ նրան  
տայ այն Երկրի առաջնորդութիւնը՝ Աւո-  
սկոլիս քաղաքի Եսլիսկոպոս ձեռնադրելով։

Աաթողիկոսը թէպէտ կարող էր ասել  
թէ՝ «Ես կաթողիկոս եմ, և ձեռնադրու-  
թիւն անել կարող եմ, ինչպէս Էջմիածնի  
մ.ջ, նոյնպէս և ամեն տեղ»։ բայց չունէր  
իրաւունք համանգամայն ասել՝ թէ «Ումն  
ուզեմ», կարող եմ ձեռնադրել»։ Դորա հա-  
մար առաջ Պողոսն էր խօսել թէ՝ «Մի՛ դի-  
ցես ձեռն ի վերայ անարժանի»։ Եսլիսկա-  
պոսի ընտրութիւնը, առաքելական դարերու  
սովորութեամբ, ընդհանուր ժողովրդեան

Հաճութենէն էր կախուած, և ոչ մէկ քանիսի կամքէն, կամ մէնակ ձեռնաղբօղի յօժարութենէն : Նիկոլ չունէր այն արժանաւորութիւնը, ինչ որ պահանջում էր եպիսկոպոսական կարգը, կամ ինչ որ ուզում էին այն երկրի ժողովուրդքը, որոց որ նա պիտի լինէր առաջնորդ։ Հայերը ճանաչում էին թէ՝ Նիկոլին, թէ՝ նորա ծնողաց, թէ՝ նորա ազգականաց։ Հայերը իմանում էին, որ Նիկոլը մէկ բարեբարոյ մարդ չէր. նորա ուսումն էլ ոչ այնքան հոգեոր էր և աստուածային, որքան մարմնաւոր, շնչաւոր, և այլն։ Հոգեւորականները ևս առաւել գիտէին նորա անարժանութիւնը. այն-էլ գիտէին, որ եթէ նա առաջնորդութիւն ստանայ՝ պիտի մեծ մեծ չարեաց պատճառ դառնայ. և ազգը օտարութեան մ.ջ, իւր այն պանդուխտ աշխարքումը, ուր որ շրջապատած է կրօնական և քաղաքական վտանգներէ՝ պիտի գժբաղդութեան խորխորատ դլորուի. և եկեղեցին, որ մէկ ծառէն կտրուած ոստի նման այն տեղ ընկել է. և արմատացէլ, իւր անարատ հարսնութենէն զրկվելով՝ պիտի ցամաքի և չորանայ։

Աշխարհական և եկեղեցական ժողովրդապետները և Ազգապետները եկան, երբ

որ լսեցին թէ՝ կաթողիկոսը խօսք է տու-  
ել Նիկոլին ձեռնադրել. Հաւաքիվեցան կա-  
թողիկոսի մօտ, և սկսան մի տո մի յայտ-  
նել Նիկոլի անարժանութիւնը և աղաջել,  
որ նա Նիկոլին եպիսկոպոսութիւն ըստայ,  
և եկեղեցին և խղճալի աղգը այն օտար  
աշխարքումը, այն պանդխտութեան մէջ՝  
նրա ձեռքը չըմատնէ. Ճրբվհետեւ ժողովրդա-  
կանաց բազմութիւնը ոչ թէ միայն Առ-  
ալոլիս քաղաքի բնակիչ Հայերը, այլև բոլոր  
Ահհաստանի մէջ պանդխտացած համազդի-  
ները պիտի եպիսկոպոսի ձեռնադրութեան  
և առաջնորդ ընդունելու համար հաճու-  
թիւն ունենային, մահսար շինէին, և այն-  
պէս խնդրէին կաթողիկոսէն: >

Ճրբ որ կաթողիկոսը մէկ քանի մարդոց  
ականջ դնելով՝ չըկամեցաւ ընդհանուր ժո-  
ղովրդեան բազմութեան աղաջանքը լսել,  
որմէն թագաւորն-էլ և թագաւորութիւնն  
էլ չէր կամենար երես դարձուցանել, և  
ուզում էր իւր կամքը պաշտել տալ՝ Հայոց  
ազգի բազմութիւնը վիրաւորուեցաւ, և  
սկսաւ իւր իրաւունքներու ձայնը բարձրա-  
ցնել: Այս միջոց ազգը ունէր իրաւունք  
մինչև թագաւորին բողոք տալ. բայց պա-  
հեց իւր ազգութեան պատիւր, իւր Հայ-

բարեւտի պատիւը . կամեցաւ տնէց տունի  
վերջացնել բանը . կարծեց թէ՝ կաթողիկո-  
սը պիտի լոէ նորա խօսքը , երբ որ նրան  
հրապարակաւ առջեր դնեն և առեն . «Հայ-  
րապետաց կամոններու զօրութեամբ՝ մինչեւ  
որ համօրէն ժողովուրդը համաձայն հաճու-  
թեամբ ընտրութիւն արած չըլինի և ընտ-  
րածի արժանաւորութիւնը վկայած չըլինի՝  
եպիսկոպոս ձեռնադրելու և առաջնորդ ա-  
նելու օրէնք չըկայ . և որովհետեւ մենք գի-  
տենք , որ այդ Նիկոլը ո՛չ թէ եպիսկոպո-  
սութեան , այլև ունեցած քահանայութեան  
ևս ընդունակ և արժանաւոր չէ . այդ պատ-  
ճառաւ դու , որ թէպէտ ազգի Հայրապետ  
ես , բայց չունիս իրաւունք մեր կամաց  
ընդդէմ նրան եպիսկոպոսութիւն տալ , և  
մեր վերաց առաջնորդ կարգել . ուրեմն՝  
մեզ Հայրութիւն արած , և Նիկոլին մի՛ ձեռ-  
նադրիր . այլ թէ կամենում ես ձեռնադրու-  
թիւն անել , և մեզ եպիսկոպոս շնորհել՝  
մենք ունինք ընտրած եպիսկոպոսացու ,  
որին որ մենք արժանաւոր ենք համարում ,  
և միաբերան վկայութիւն ենք տալիս , և  
քեզէլ աղաջում ենք , որ նրան ձեռնադրես ,  
և ո՛չ Նիկոլին , և քո Հայրապետական շը-  
նորհարաշխաւթիւնը մեզ առաջնորդ կարգենա:

Ի հարկե, այս խօսողները մէկ սինլիքոր  
մարդիկ չէին խաժամուժ ամբոխի մէջէն,  
այլ աղգի մեծամեծներն էին, և համազգա-  
յին ժողովներով ընտրած դատաւորները,  
որոնց որ Լեհաստանի տէրութիւնը յանձ-  
նել էր աղգի ներքին կառավարութիւնը,  
որով որ աղգն-էլ պարծենում էր, թէ ունի  
աղատութեան արտօնութիւններ։ Եթէ սոքա-  
նոյն խօսքերը ասէին առաջի թագաւորաց՝  
պիտի չամաչէին, պիտի իրաւունք գտնէին,  
պիտի իրանց ձշմարտութիւնը և արդա-  
րութիւնը յաղթով հանդիսացու ցանէին.  
այլ նոքա չըկարծեցին թէ՝ բանը այնտեղ  
պիտի հասնի, որ թագաւորն-էլ իմանայ։

• **Ա**նելքիսէթ Կաթողիկոսը ի մանկութենէ  
Պարսից մէջ լինելով, նոցա գաւաղանի  
տակը աչք բացած լինելով, նոցա բռնու-  
թիւնը իրան բնաւորութեան նման սեփա-  
կանելով, փոխանակ ժողովրդեան կամքը  
պատուելու՝ սկսաւ սաստել Հայերու բազ-  
մութեան, որ նոքա ընդդիմութիւն չանեն,  
և Նիկոլին և նորա եպիսկոպոսութեան և  
առաջնորդութեան հակառակ չըկանգնին : 7  
Այլ թէ Հայերուն, իւր կամքին հալատա-  
կեցնելով, ի՞նչ բարութիւն պիտի հասցնէր  
աղգին **Ա**նելքիսէթ Կաթողիկոսը՝ չասաց ո՛չ

ինչ . և նորա դիտաւորութեան մէջ ազգի օգուտը կա՞ր արդեօք՝ ըստիտեմ . եթէ ազգի օգուտն էր ուղում՝ ինչի՞ չէր նոցա հետեւում . միթէ ազգը երեխան էր , որ ակամայ դեղ էր ուղում տալ , երբ որ նա այն դեղը չէր ուղում ընդունիլ , ու լացով և կոծով յետ էր դարձնում : Վայ այն դեղին՝ որ ակամայ պիտի ընդունվի :

---

ԳԼՈՒԽ 3.

Մէկ սովորական բան է, գառել այս , երբ որ Հոգեոր իշխանութիւնը կամենումէ իւր ճանփան փոխել՝ իսկոյն ձեռքն է, առնում վահանի պէս այս խօսքը թէ Աշխարհակաները լու չընտանուին հռչելոս գործերու մէջ : Տես թէ ո՞րքան հեռացան այժմ Հոգեորականք և աշխարհականք մէկզմէկէ , որպէս թէ Հոգեորականք արևելքումն են և աշխարհականք արևմուտքումը , կամ Հոգեորականք միայն քրիստոնեայ են և աշխարհականք եթովպացիք , կամ Հոգեորականք Հայկի ու Արամի որդիքն են և աշխարհականք աղախնածին աղջկորդիք , Հոգեորականք եկեղեցւոյ մէջ անձնիշխանք՝ իսկ աշխարհականք նոցա ըստրուկք և ծառայք :

Բայց արդեօք այսպէս են խօսում այն  
ժամանակն-էլ, երբ որ աշխարհականաց  
տուրքը նրանց հարկաւոր է լինում. ուր-  
դեօք այն ժամանակ իրանց ձեր, եղանակը,  
ոճը իսկոյն չե՞ն վոխում ու ասում հոգեորա-  
կանք ո Անք-էլ ձերն ենք, եկեղեցին-էլ ձերն  
է, դուք-էլ մեր պահպանողն էք և մեր կերա-  
կրողն էք, և եկեղեցւոյն շեն պահողը դուք  
էք ։ Թէ մէքիչ յետ նայինք հին օրերու  
վրայ կըտեսնենք որ՝ շատ անգամ աշխար-  
հականչ լոռ հոգեւոսականաց գործերու մէջ շնոր-  
հուին ասողները այնքան լացել են, այնքան  
ողքացել են, այնքան կողկողել են, որ նոյն  
իսկ աշխարհականներուն ասել են տուել.  
ո Ապա ի՞նչ անենք, եթէ որ մենք չօգնենք  
մեր հոգեորականաց՝ ովլ ապա պիտի օգնէ,  
ովլ պիտի խնայէ, ովլ պիտի ողբրմի։ Խըզ-  
ճալի աշխարհականք, հաւատարիմ՝ շներու  
նըման թէ և փայտ են ուտում, բայց իրանց  
սէրը և ջերմեռանդութիւնը ձեռքէ չեն թող-  
նում, թէ և նոցա առընչակցութեան մէջ  
չըկայ բնաւ այն նմանութիւնը, ինչ որ կայ  
շան և մարդու մէջ : Ոչ հոգեորականք են  
այնքան բարձր և ոչ աշխարհականք այն-  
քան ստոր. ոչ հոգեորականք են այնքան  
ազնիւ և ոչ աշխարհականք այնքան ար-

Համարհելի: Զրալիտի Հայոց Հոգևորականք  
իւրեանց ժողովրդեան վրայ այնպէս նային,  
ինչպէս որ սովոր են նայիլ Պարսից խանե-  
րը և Տաճկաց փաշաները և բէդերը. իրա-  
ւի, նոցա աջքումը Հայերը քան դշունը տ-  
ւելի աղնիւ չեն. բայց Հայոց Հոգևորականք  
սիմիտի իմանան, որ իրանց հայր ու մայրը,  
իրանց եղբարքն ու քոյրերը են այն ժողո-  
վրդեան մէջէն, և իրանք-էլ նոցամէն են  
ընձիւդիւլ և երկինքէն եկած չեն:

Դարձեալ, նոյն խօսքը կրկնեմ — եթէ  
մէքիչ յետ նայինք հին օրերու վրայ՝ կը-  
տեսնենք յայտնի, որ եկեղեցի ասելը՝ ժողո-  
վարդն է, որոյ մէջը Հոգևորականք ոչ թէ  
իշխող են, այլ եկեղեցւոյ սպասաւոր և միայն  
աստուածային խորհրդոց մատակարար. այլ  
խօսքերով ասենք. «Հոգևորականք ժողովր-  
դեան համար են, և ոչ թէ ժողովուրդը  
Հոգևորականաց համար»:

Այ միայն Եգիսլտացիք էին, որ քուր-  
մերուն տուել էին առանձնազարմութիւն,  
և արել էին ամեն առանձնազարմութեանց  
(հասնելու) գլուխ. և այժմ Այնաց հանդա-  
ռնանշն են և Հնդկաց բնակչութիւն, որ հա-  
սարակ ժողովուրդի մէջէն շատ յայտնի են  
դարս ցցվում: Խարայէլացոց մէջ, ուստի

որ դուրս եկաւ քահանայական և զևտական  
դասակարգութիւնը, այդպէս չէր: Եգիպտա-  
ցոց առաջնեկները երբ որ մատնվեցան անդ-  
րանիածախ սրոյն՝ Աստուած պահանջեց իս-  
րայէլացոց ազգէն, ասելով «Մանուկ՝ որ  
բանայ զարդանդ կուսի՝ Սուրբ Տեառն կո-  
չեսցի»: Սոքա այն անդրանիկներու փոխա-  
նակ պիտի Աստուծոյ նուիրված լինէին, որ  
Եգիպտացոց մէջ կոտորուեցան, իսկ Խրա-  
յելացոց մէջ փրկվեցան: Յետոյ օրէնսդիրը  
մեղմեց իւր օրէնքը. փոխանակ ամեն ցեղի  
անդրանիկներու՝ միայն մէկ զևտական ցեղը  
ուղեց, որ սպասաւոր լինին վկայութեան  
խորանին և միջնորդ Աստուծոյ և մարդկան  
մէջ, ոչ թէ պատկեր Աստուծոյ, որ Աս-  
տուծոյ նման պաշտվին, այլ միայն պատ-  
գամաւոր, որ Աստծումէն լսածը՝ մարդոց  
ասեն, և մարդոցմէն լսածը՝ Աստուծոյ հաս-  
ցնեն: Այս պաշտօնը միայն այն ժամանակ  
է պատկառելի, երբ որ պաշտօնեան իմա-  
նում է իւր կոչման պատիւը. իսկ երբ  
ինքը ոտնակոխ է անում իւր պաշտօնը՝  
դատապարտված է քան զաշխարհականը  
շար ես: Քեզ օրինակ Դադանն ու Աքիրոնը  
և Կորխը. քեզ վկայութիւն չեղեայ որդիքը՝  
Ովնին ու Փենէհէսը. քեզ յարացոյց Ովիա:

Առաջին երեքը այն մասին դատապարտվեցան, որ իրանց անձը բռնութեամբ էին նուիրում Աստուծոյ պաշտօնին. երկրորդ երկրուր՝ որ իրանց սպաշտօնի մէջ անհաւատարիմ էին և անարժանութիւն էին ցոյց տալիս. և երրորդ մէկը՝ որ յանդընութեամբ մերձեցաւ իւր պաշտօնին: Թողնունք Ահարոնի որդւոց պատիմը, որ այն-էլ մէկ ուրիշ կողմնական խրատ էր հոգեորականաց՝ թէ ինչպէս պիտի կատարեն Աստուածային սպաշտօնը:

Սոքա դեռ ևս ասած չէին ժողովրդականաց թէ՝ ո՞Գուք սուսկացէք. ապա թէ ոչ ժողովրդականք քարկոծ կ'անէին: Ժողովրդականաց ձայնը ոչոք չունի իրաւունք կտրել տալու: Երբ որ Մոլսիսին ասացին թէ՝ Եղդադ ու Մոլդադ բանակի մէջ մարդարէանում են, Մոլսէս չասաց թէ՝ թողլուեն. նա ուրախացաւ և ասաց. ո՞ինչ երնէկ կը ինէր, որ ամեն ժողովուրդն-էլ մարդարէանային: Ո՞վ է կարող ժողովրդեան ձայնը կտրել տալ. ձայն ժողովրդեան է ձայն բազմաց և ձայն Աստուծոյ: Թող ժողովրդեան ձայնը չըլինի ձայն Աստուծոյ. ո՞վ է կարող ասել թէ՝ ժողովրդեան ձայնը ձայն բազմութեան չէ, կամ թէ իւր իսկ. ժողո-

վուրդը ինքը գիտէ իւր ցաւը, և ինքը  
պիտի ասէ իւր դեղը. Եթէ նրան բռնու-  
թեամբ դեղ տալու լինին՝ ողիտի նմանին  
այն բժշկին, որ գուեխը ձեռին վազում էր  
Հիւանդի ետևէն, մինչ որ Հիւսնդը քանի  
տեսնում էր բժշկի ձեռին գուեխը՝ սարսա-  
փում էր: Մելքիաէթ կաթողիկոսը համ  
ուզում էր բռնութեամբ դեղ տալ, համ  
ուզում էր այս ճանփուլ բազմութեան ճայնը  
կտրել տալ. համ ժողովրդեան դլիսին ու-  
զում էր ակամայ առաջնորդ դնել, համ  
ուզում էր որ ժողավարդը լուէ: Ինչ էր  
արդեօք կարծում ժողովրդեան, մարդիկ՝  
թէ՛ ոչխարներ. բանական կենդանիք՝ թէ՛  
անբան անասուն: Եթէ նոցա լսելու չէր,  
ինչի լսեց առաջնորդ ուզելու խնդիրը.  
Եթէ առաջին խնդիրը կատարելու յօժարե-  
ցաւ՝ ինչի՞ երկրորդ խնդիրը, որ աւելի  
օրինաւոր էր, աւելի բանաւոր էր, ուզաց  
մերժել, ապախտ անել: Մէնէով էօն, չէր ա-  
չէն, որուրուց ոինք ալուման կուչ:

Յաղովովականիք ամենելին ըլլակցին, այլ  
միշտ գնում գալիս էին կաթողիկոսի մօտ,  
և նոյնն էին ամողաղար կրկնում թէ՛ Նիկո-  
լին շենք ուզամ, և նրան մեղ առաջնորդ  
շենք ընդունում և շենք ընդունիր:

Տեսաւ Կաթողիկասը, որ Աէոպօլիս քաղաքի մէջ չէ կարող այն Նիկոլի անկանոն ձեռնադրութիւնը կատարել, մէկ օր 1627 թուին, ծածուկ քաղաքէն դուրս գնաց, և այն տեղ մէկ հեռաւոր վանքի մէջ, որ առվում էր Համբակառ Աստուածաշնչն, առանց մէկ մարդու խմացում տալու, սկսաւ գիշերով առանձին ձեռնադրել Նիկոլին:

Եպիսկոպոսի ձեռնադրութեան ծիստ կատարութիւնը դադտնութիւն չէ կարող ընդունիլ: >Եպիսկոպոսը փեսայ է եկեղեցւոյ. և նորա հարսանիքը օրէնք ըրկայ գոզութեամբ կատարել: Ոչ Կաթողիկոս, ոչ Հայրապետ չունին իրաւունք եկեղեցւոյ նախնեաց սահմանած ծէսը ինքնազլուխ ոտքի տակ դնել: Այս պատճառաւ, այն Համեկատար Ասպուածածնի վանքի միաբաններէն մէկը՝ դնաց վազ ի վաղ Աէոպօլիս քաղաք, խմացում տուեց քաղաքացոց և ժաղովրդեան Նիկոլի ձեռնադրութեան ըսկընաւորութիւնը: Հայերը քաղմութեամբ եկան հասան, և երբ ուսան թէ ձեռնադրութիւնը արդէն մօտ է հասել աւարայման սկսան քարձրաձայն աղաղակել և միաբերան սաել թէ՝ ո՞Զենք ուզում, մի ձեռնադրիր: Վիթէ այս տեղ չունէին Հայերը իրաւունք

Հարցնել Հայրապետին թէ՝ “Ուր է եռի-  
սկովոսական ձեռնադրութեան հանդիսա-  
վեհութիւնը, ո՞ւր են ամեն արհեստաւո-  
րաց, վաճառականաց, երկրագործաց, խաշ-  
նարածից և ամեն տեսակ Հայերու երես-  
փոխանք և պատգամաւորք, որ պիտի ներ-  
կայ գտնուին և վկայութիւն տան, անա-  
րատ Հարսի՝ Հայաստանեայց սուրբ եկեղեց-  
ւոյ հարսանեաց մանկունք առագաստի հան-  
դիսանալով։

Հայց կաթողիկոսը էլի անկաջ չըդրեց.  
առաջ տարաւ այն անկանոն ձեռնադրու-  
թիւնը և աւարտեց։ Ճողովուրդն-էլ տես-  
նելով այս վշտացուցիչ անցքը, որ իրանց  
Հայրապետը, իրանց ջերմեռանդ սիրոյ և  
հիւրընկալութեան փոխարէն այնպիսի հա-  
տուցումն արաւ, օտար երկրումը, օտար  
տէրութեան մէջ անկարկատելի երկպառա-  
կութեան դուռն բաց արաւ, տրտմու-  
թեամբ և սրտակուր դարձան ամեն մարդ  
իւր տունը։ Եւ քան զայն աւելի ի՞նչ էին  
կարող անել. նա իրանց Հայրապետն էր,  
ո՞վ կըկամենար այն բազմավիշտ ծերունւոյն  
ցաւ ի վերայ ցաւոց յաւելուլ և այն պան-  
դուխտ տեղումը աւելի վշտացնել։ Այն  
էլ բաւական էր, որ գալու ժամանակը, երբ

որ մտնում էր Աէոպօլիս քաղոք՝ ընդունել էին ինչպէս Հրեշտակ Առառուծոյ Ամենակալի, այժմ Աէոպօլիսէն ելանելու ժամանակը՝ պիտի երթայ գլխակոր և ամօթապարտ, և իւր հոգեծին զաւակաց սրտին անբուժելի խոց դրած :

Հայերը չեին բնաւ կամենար իրանց Հայրապետին անպատիւ անել և անարդել. այս նոցա խաղաղասէր բնութեան, մարդասիրութեան և Հայրասիրութեան բնաւորութենէն բոլորովին դուրս էր. սակայն անյաջող հանգամանքը էին այս բաները արտաքս հրաւիրել: Ի՞նչ հնար ունէին Հայերը, թէ այնպէս շանէին, երբ որ քաջ գիտէին, որ այնուհետեւ որքան որ ներողամտութիւն ցոյց տան կաթողիկոսին՝ Նիկոլի ձեռքը այնքան զէնք պիտի աւելացնուն, և կաթողիկոսն-էլ պիտի ասէ. ո կըկակզես՝ կ'ուտես. և պիտի կարծէ թէ՝ արդէն իւր ձեռնադրած եռիսկոսուը Աէոպօլսեցոց գլխին նստաւ առաջնորդ, և պիտի նոցամէն սուած բուրդով ու կաթով համ ինքը լքցվի, համ էջմիածնի պարտքը հատուցանէ: Ի՞նչ հնար ունէին Հայերը այնպէս շըվարվիլ կաթողիկոսի գէմ, երբ որ պարզ տեսնում էին իրանց գլխին հասնելու չա-

րիքը, ձանաշում էին Նիկոլին և նա-  
խաղգուշութիւն էին պահպանում: Բայց  
այս նախապահ պահողական միջոցները ոչ-  
ինչ օդուտ չունեցան. ժամանակը չարու-  
թեան յաջողութիւն դտնելու յարմար էր,  
և Նիկոլ օդուտ քաղեց այս հանգամանքէն:  
Նիկոլ ո՛չ ներկայ չարութենէն էր վախե-  
նում և ո՛չ ապառնի պատմութենէն էր ա-  
մաչում. նորա աչքումը բարի անունը,  
բարի համբաւը ոչինչ տրժէք չունէին.  
նորա հարկաւոր էր առաջնորդ դառնալ,  
նորա համար ամեն միջոցները ներելի էին»  
ինչի պիտի իւր նպատակին հասնելու հա-  
մար հաղարաւոր ողիակներէ սանդուխտ»  
չըշինէր. եպիսկոպոս դառնալն էր դժար,  
այնուհետև նրան ամեն ինչ կարելի էր,  
ամեն ինչ բոյլ տրված, ամեն ինչ հրամայած:

**Ե**րբ որ Մելքիսէթ կաթողիկոսը, այս  
անարժան և անկանոն գործը կատարելին  
յետ, ուզում էր Լէոպօլիս քաղաքէն դուքս  
դալ և երթալ կամենից՝ ժողովրդակա-  
նաց մէջին ոմանք, էլի կամենալով խաղա-  
ղասէր հոգւոյն հպատակիլ, շարեաց փոքրա-  
գոյնը ընտրելով՝ խնդրեցին կաթողիկոսէն,  
և ստիպեցին Նիկոլին՝ որ նա-էլ կաթողի-  
կոսի հետ երթայ, չըմնայ այն քաղաքու-

մը և սպառնալիք ևս խօսեցան : Նիկոլն  
էլ չըհամարձակուեցաւ ընդդեմ կենալ, վեր-  
կացաւ կտթողիկոսի հետ և գնաց: Ի՞նչ լաւ  
կ'անէին Հայերը, եթէ իրանց խօսքի վրաց  
հաստատ կենային, և Նիկոլին՝ որ մէկ ան-  
դամ քաղաքէն դուրս էին վարել, էլ միւս  
անդամ ներս չընդունէին. շատ շարիք պիտի  
խափանէին, և ժողովուրդը պիտի իրա-  
իրաւունքը իւր ձեռումը ամուր պահէր:  
Քայց տեսո՞ւ որ՝ գործը ուրիշ ուղղութիւն  
տուացաւ : >

**Ս**ԵԼքիսէթ կաթողիկոսը, որ այդպէս ան-  
ձոռնի ճանվաներով Նիկոլին ձեռնադրել  
էր և Վէռագոլսի առաջնորդութիւնը առել  
էր, արդէն ինքն-էլ ճանաչել էր նորա ան-  
պիտանութիւնը և կամենում էր նրան  
իրա գլխէն հեռացնել: Եթէ Նիկոլը մէկ  
քաղցր մարդ լինէր՝ Կաթողիկոսը, որ գը-  
նում էր կամենից քաղաք՝ Էջմիածնի պար-  
տուց անուամբ ժողովք անելու, կըտանէր  
նրան-էլ իւր հետը, որ նա համ առաջ-  
նորդ կըլինէր, համ Կաթողիկոսին օդնա-  
կան, և կարելի էր որ՝ Կաթողիկոսի առջև  
հաւատարիմ սպասաւորութիւնը տեսնելով  
Կամենիցացի Հայերը սիրէին Նիկոլին, և  
Նիկոլի առաջնորդութիւնը և եպիսկոպո-

սութիւնը , որ Լէոպօլիս յողդողդ էր և  
գայթի գայթի , Կամենիցայումը սկսէր հաս-  
տատվիլ : Մելքիսէթ Կաթողիկոսը Նիկոլի  
ընթացքը տեսնելով՝ կամեցաւ շուտով իւր  
գլխէն մերժել , որ նա՝ ինչպէս Լէոպօլիս ,  
նոյնպէս և Կամենիցումը՝ իւր և ժողո-  
վրդեան մէջ խտրոց չըգձէ , և միջնորմն բա-  
ժանման չըդառնայ : Երբ որ հասան ճանա-  
պարհի կէսը , Մելքիսէթ Կաթողիկոսը , որ  
Լեհաստանի Հայերուն-էլ Հայաստանի Հա-  
յերու նման էր կարծել , և մոռացել էր  
որ նոցա շատը Անեցիք են , որ մէկ լուի  
համար մէկ բարձ կ'այրեն , ասաց Նիկոլին .  
Այժմ դարձիր Լէոպօլիս և քո եպիսկոպո-  
սութիւնդ վարէ՞ : Նիկոլ սլատասիսան տու-  
եց եղուիթարար , “Միթէ քո Սրբազնու-  
թիւնը չըտեսաւ թէ՝ ժողովուրդը ինչպէս  
էր զրահաւորուած իմ գէմ , ես ինչպէս  
եմ կարող երթալ և նոցա մէջ բնակվիլ ՞ :

Դժարը մէկ անգամ սխալեցնելն էր  
Կաթողիկոսին . Նիկոլը կարողացել էր սը-  
խալեցնել , նորա բարեկամները՝ ազգի միջի  
որդունքները , ազգի նեխեալ և փառեալ  
անդամները , խնայած չէին ազգի Հայրապե-  
տին , խնայած չէին ազգի անուան , ազգի  
սլատուին . Մելքիսէթ Կաթողիկոսի նեղու-

թիւնը իմանալով . փողի կարօտ լինելը  
հասկանալով՝ արդէն նորա սիրտը դար-  
ձուցել էին . նա զոհել էր իւր պարտաւո-  
րութեան սրբութիւնը , իւր պաշտօնի յար-  
գըն ու մեծարանքը՝ դրամոց հարկաւորու-  
թեան . առաջին ոտնափոխը արել էր ու  
յետ դառնալու չունէր բաւական ուժ :  
Ժողովրդեան իրաւունքը վշտացուցել էր .  
հայրապետագիր կանոնները ոտնակոխ ա-  
նելով բռնաբարել էր . այնուհետև ինչ կար,  
որ նա չանէր , միայն թէ իւր պարտքէն  
կարողանար ազատովիլ :

‘Նիկոլի համախոհները , որ Կաթողիկո-  
սին ուղեկից էին եղել , տեսան նորա դը-  
րութիւնը . տեսան որ՝ լաւ յարմար ժամա-  
նակ է . սկսան ծեծել երկաթը քանի որ  
տաք էր . խորհուրդ տուին կաթողիկոսին ,  
որ կոնդակով վախեցնէ ժողովրդեան . «կոն-  
դակով» որ Առաքելական թղթերու թոռ-  
ներն էին և Կաթողիկեայց ծոռները : Զա-  
սաց երանելի Կաթողիկոսը իւր մոքումը՝  
ո՞ւլինի՞ թէ այսպէս խորհուրդ տուղները  
Նիկոլի առաջնորդութենէն շահի ակնկա-  
լութիւն ունին . չըլինի՞ թէ Նիկոլն-էլ նոցա  
պարտական է , և ինչ փող որ իւր ձեռնա-  
գրութեան համար ինչպէս շանախուր տու-

ել է նոցամէն է առել, և առաջնորդական արդիւնքէն պիտի հատուցանէ: Չըլինի թէ անունը Նիկոլինը պիտի լինի և առաջնորդութիւնը նոքա պիտի անեն: Մի թէ ըստ հասկացաւ Կաթողիկոսը, որ առաջնորդառնալու համար ոչինչ չըխնայովզ՝ առաջնորդութիւնը վարելու համար-էլ ոչինչ խնայելու չէ: Հասկացաւ, բայց էլի գրեց մէկ նամակ բանադրանաց Առաջօլսեցոց վրայ թէ ո Ով որ Նիկոլին չի ընդունիր ինչպէս իւր եպիսկոպոս՝ նզոված լինիւ:

Եփսո՞ս Հայրապետական անուանն, ափսո՞ս նորա Առաքելական իշխանութեան և կոչման: Եթէ միտք անէր Կաթողիկոսը թէ՝ մէկ օր պիտի այն կոնդակիր դրվի Ընդհանրականի շարքումը, բազդատվի, համեմատվի՝ կարծեմ թէ չէր գրէր: Բայց Նիկոլի համախոհները մտածելու ժամանակ տուին խեղճ կաթողիկոսին:

Եյս տեղ մտքիս մէջէն մէկ խնդիր է յառաջանում. արդեօք այս երկուսէն որն էր աւելի յանցաւոր և մեղադրելի. Նիկո՞լը, որ իւր օգտի համար եպիսկոպոս դառաւ, թէ Կաթողիկոսը, որ իւր օգտի համար ազգի օգուտը ոտքի տակ ձգեց. Նիկոլի համախոհն էին աւելի մեղաւոր, որ ազգի

մատնիչ դառան, թէ Ազոպօլսեցի Հայերը, որ խկոյն թագտուորին չըբողոքեցին : Թագաւորութիւնը անհնար էր, թէ մեկ հաս Նիկոլի համար կամենար քառասուն հազար տուն Հայ ժողովրդեան խընդիրը մերժել : Ժողովրդը սկիզբէն կակուղ շարժեցաւ Նիկոլի հետ, մինչև Նիկոլը քիչ քիչ ընտելանալով իւր վիճակին՝ յանդգնեցաւ, անզգամացաւ և հասաւ շարեաց ծայրը : Նիկոլ առաւ այն նամակը հովիսի տուած թղթի նման, և եկաւ Լէռապօլիս : Հայերն-էլ պիտի նրան այնպէս ընդունէին, ինչպէս որ հովիւները փարախի մէջ թուղթը բերնումը եկած գայլին : Հայերը պիտի անզգոյշ չըդանուէին . պիտի ճանապարհներու վրայ սկահասկաններ դնէին, որ Նիկոլը գողիւ-գող ներս չըմտներ քաղաք . և որովհետեւ արքունուստ հրաման ունէին իրանց ներքին կառավարութիւնը իրանց մէջ կառարել՝ պիտի ամենայն զօրութեամբ ընդդէմ կենացին, որ Նիկոլը՝ ինչպէս վախեցել էր և գնացել էր, նոյն երկիւղը սրտի մէջ պահէր, յետ չըդառնար և ոտքը միւս անզամ այն քաղաքը դնելու չըհամարձակէր : Մելքիսէթ կաթողիկոսը, որովհետեւ նրան եպիսկոպոս էր արել, կարող էր իւր առջել պահէր որքան որ կամենար :

Հայերը թոյլ գտնուեցան։ Կարելի է որ  
շատն-էլ իրանց մեջ ասացին թէ գլուխը  
քարը, թող եսլիսկոսկոս-էլ լինի, առաջ-  
նորդութիւն-էլ անէ, միայն թէ մեր ոչխար-  
ներուն վեաս ըրբերէ։ Բայց ինչպէս էր կա-  
րող գոյլը ոչխարներու մեջ կենալ ու ան-  
անվեաս թողուլ։ Հայերը ուշ իմացան Նի-  
կոլի Առաջօլիս վերադառնալը։ Միթէ գի-  
շերով ձեռնադրվողը չէր կարող գիշերով  
էլ քաղաք ներս մտնել և առ ժամանակ  
թաք կենալ։ Հայերը երբ որ իմացան՝  
ունէին իրաւունք իսկոյն երթալ և նրան  
այն քաղաքէն, ինչպէս հասարակաց ընդզէմ  
և ատելի մարդ, կրկին դուրս հանել և պր-  
սորել։ Բայց տեսանք Հայոց ամօթխածու-  
թիւնը, տեսանք Հայոց պարկեշտութիւնը,  
տեսանք Հայոց համեստութիւնը։ Ինչպէս  
օտար ազգի մեջ իրանց կաթողիկոսի ձեռ-  
նադրած եսլիսկոսկոսին խայտառակութեամբ  
դուրս անեն, մանաւանդ որ՝ զեռ ըդիտէին  
թէ ծոցումը ունի այն թուղթը։ Անփոյթ  
արին, և իսկոյն ըդիմեցին արքունական  
դուռը։

‘Եթիուն-էլ այս ժողովրդեան առաջին  
թոյլտութենէն համարձակութիւն առ-  
նըլով՝ առաջիկաց կիւրակի օրը, կաթողի-

կոսի բանադրանաց թուղթը եկեղեցումը  
Հրատարակելով կարդալ տուեց։ Երբ որ  
ժողովրդականք լսեցին կոնդակի ձայնը՝  
իմացան իրանց սխալմունքը, որ ի զուր  
էին այնքան թոյլ տուել. բայց ժամանակը  
անցել էր, սրտակտուր եղած սուս կեցան,  
և ակամայ կամօք մնացին ինչպէս որ էին.  
բայց սիրտերը շատ հեռի էր Նիկոլին։  
Թէսպէտ ամեն ժամանակ տեսնում էին, որ  
Նիկոլ գալիս էր եկեղեցի, քահանայք  
պատուով ներս էին բերում, դուրս էին  
տանում, երբեմն խաղաղութիւն էլ էր տա-  
լիս. բայց ոչ ոք չէր գնում-գալիս այն չա-  
րագրգիռ առաջնորդի մօտ. Նիկոլ առաջ-  
նորդ էր միայն քահանայից վրայ. ժողո-  
վրդականք ըստ ամենայնի խրտնում էին  
նրամեն։

Ասկայն սյօ ամենայն այնպիսի հանդա-  
մանք չէին, որ կարողանային Նիկոլին յու-  
սահատութեան վիհը գլորել։ Նիկոլ ունէր  
համախոչներ և բարեկամներ. եթէ ինքը  
լինէր խաղաղասէր և խոհեմ մարդ, կամ  
թէ նորա բարեկամները լինէին չարագրգիռ  
բնաւորութենէ ազատ մարդիկ՝ Նիկոլ կա-  
րող էր իւր լուռթեամբ, համբերութեամբ,  
համեստութեամբ, սլարկե շտութեամբ հա-

Հոյանալ ժողովրդեան։ Եթի որ ինքը սկսէր  
ժողովրդեան հայրաբար խնամել՝ ժողո-  
վորդն-էլ կամաց կամաց կըսկտէր նրան իւր  
որդիական սէրը և ջերմեռանդութիւնը ցոյց  
տալ։ Բայց ոչ Նիկոլն էր այնպէս մարդ,  
և ոչ նորա համախոհները։ «Նմանն զնմանն  
սիրէ»։ Նիկոլի բարեկամները այնպիսի մար-  
դիկ էին, որ իրանց մէկ բնիօն շահի հա-  
մար հաղար Հայազգի կըզոհէին։ Նորա  
ուզում էին, որ Նիկոլը դառնայ նոցա ձե-  
ռին գործի, որ նորա նրամով կարողանան  
ազգի և հասարակութեան վրայ իշխել և  
ախրասպետել։ Ո՞ր պարկեշտ և համեստ  
մարդը կըկրամենար այսպիսի հօգեսորակա-  
նաց վէճերու մէջ մանել։ Նիկոլի կուսա-  
կիցները այնպիսի մարդիկ էին, որ բնա-  
շէին կամենար այդ զազրալի տիղմի մէջէն  
գուրս գալ։ Եկեղեցական արդեանց գողեր,  
Հասարակութեան վաղերու յափշտակող ա-  
ւազակներ, կաշառատէր, թերամիտ, թերա-  
հաւատ, անտռակ, վատաշուէր անզգամներ,  
ժողովրդեանն խոռվարար շփոթարկուներ,  
իւրեանց անձնական գործ չունենալով՝ այ-  
լոց պլոտոր ջրի մէջ ձուկ պտրտողներ.  
գաւաճան, գաւադիր գարանակալներ՝ — այս-  
պիսի մարդիկ, ի հարկէ որ, չէին կամենար

խաղաղութիւն տեսնել, կ'ուզէին միշտ ա-  
լէկոծեալ պահել ժողովրդեան, որ իրանց  
համար-էլ բանի ու գործի առարկայ լինի:

Այս մարդիկը չըթողին Նիկոլին հան-  
գարտ, և ակսան ծածուկ և յայտնի դրդել,  
որ նու իւր դրօշակները բարձրացնէ:

ամառն պատմականութեան դու յարին  
ապահովութեան գումարաց և ու ընար  
այլ շնորհ խամախան մասն ու ամբո

Է էռալոլիս քաղաքի մ.ջ պատահած անց-  
քերը, ի հարկէ, լուսած կրլինէին ուրիշ  
տեղեր-էլ. բայց դեռ այն տեղերումը գայ-  
թակդութեան պատճառներ չըկային, և կա-  
րելի էր որ՝ միւս քաղաքներու բնակիչը  
չայերը՝ Է էռալոլուցոց էին մեղագրում, որ  
իրանց առաջնորդի հետ չեն համաձայնվում:  
Մարդուս առաջին սովորութիւնը այն է,  
որ երբ լսէ մէկ բան՝ խակոյն իրան խելօք  
կը ձևացնէ, մէկ պայտին կը զարնէ, և մէկ բեե-  
ռին, որ երկուսին-էլ մեղագրանաց տակ  
ձգելով՝ մ.ջ տեղէն իւր գլուխը հանէ սի-  
րուն, պանծալի և արդարախոչ: Բայց ժա-  
մանակը այնպէս բերեց, որ այն մեղագրու-  
ները իրանք-էլ վայելեն Նիկոլի քաղց-  
րութիւնը, և սովորին ուզիղ դադասաւան

անելը : Ա էոպօլսէն դուրս եկաւ բոցը, որ  
այն տեղի Հայերուն տոչորում էր, և սկսաւ  
ուրիշ քաղաքներ-էլ տարածվիլ : Նիկոլ  
Լ էոպօլսի ժողովրդեան հետ կիսով չափ  
հաշտ, կիսով չափ անհաշտ՝ նստած էր:  
Այսպէս անց կացաւ մեկ տարի, և հանաւ  
1628 թիւը:

Նիկոլ՝ որ անարժանութեամբ ձեռնա-  
դրվել էր և բռնութեամբ առաջնորդու-  
թիւն էր առացել, փոխանակ ձայնը կըո-  
րած իւր տեղումը հանդարտ նստելու, և  
ժողովրդեան սէրը և սիրով կամաց կամաց  
որսալու և գրաւելու՝ սկսաւ իւր անհան-  
դիստ բնաւորութիւնը ցոյց տալ . և որ-  
պէս թէ չըհասկանալով, որ ժողովուրդը  
դժկամակ է, կամ անփոյթ, և անտես անե-  
լով ժողովրդեան զօրութիւնը՝ ձեռնամուխ  
եղաւ վիճակը հովուելու և այս պատրու-  
ակաւ գնաց կամենիցա քաղաք:

Մենք մարդկօրէն մտածելով՝ ասում  
ենք՝ «Եթէ Նիկոլ այսպէս չանէր՝ այսպէս  
կըլինէր, կամ թէ այնպէս չանէր՝ այնպէս  
էլ չէր լինիր : Ուր մնաց ապա Նախասահ-  
մանութիւնը, ուր մնաց ապա վերին ջնօ-  
րէնութիւնը : Միթէ այն եօթնալոյս միւ-  
ռոնը, որ նորա անարժան ճակատին և ձեռ-

քերուն զրոշմուեցաւ, պիտի թոյլ տար  
նրան, որ նա ուղիղ ճանապարհ գտնէր.  
կամ այն թագը, որ նա սեղանակապուտ  
սրբազնութեամբ գլխին զրեց, պիտի այն-  
պէս թիւթեւ մնար, պիտի չըդառնա՞ր նրա  
համար փշեաց պսակ. կամ այն սրբազն  
զգեստքը, որ նա իւր անձին վերայ գձեց՝  
պիտի ներէին նրան, որ նա երկար ժամա-  
նակ կարողանար նրանց անարգել: Այն նա-  
փորտը, այն եմիսիորոնը, որով որ մէկ ժա-  
մանակ Բագարատ Տոռոմենոյ եպիսկոպոսը  
կրակ էր մանացնում, միթէ նրան այրելու  
չէի՞ն: Այս մեր եկեղեցւոյ Աքիմելէք բըու-  
նաւորը միթէ ինքը Հրաւիրելու չէր իւր  
գլխին երկանաքարի բեկորը. միթէ ինքն  
դժնիկ գոլով՝ իրմէն հանելու չէր հուր և  
Հրդեհվելու: Եթէ այդպէս ըլինէր՝ ո՞վ  
այնուհետև կը յօժարէր սանձել իւր ոտքը  
Նիկոլի ճանփէն. ո՞վ չէր կամենար կաշ-  
ռանօք եպիսկոպոս դառնալ, վիճակաւոր  
առաջնորդութիւն ստանալ և ազգի ու  
ժողովրդեան գլխին կանգնիլ:

Այնու այս ժամանակ դեռ Նիկոլը պատ-  
ճառ տուած չէր ժողովրդեան, որ դէպ ի  
նա յստոնի ատելութիւն-էլ յղանային. այն  
նախընթաց անցքերը պտուղ էին միայն այն

յանդգնութեան, որ նա կաշառքով և անարժանութեամբ և ընդդեմ ժողովոդեան կամաց մտել էր անարատ Առւրը Հարսի առագածառը բռնութեամբ. այս բաներու մեջ որչափ նա էր յանցաւոր, նոյնչափ կամ ևս առաւել սխալված էր և Մելքիսէթ Կաթողիկոսը. Նիկոլի յանցանաց բաժանորդ էին և նորա համախոհները և անզդամ բարեկամները. Նիկոլի վրայ յանցանքը շատ չէր ծանրացած : Բայց այսուհետև սկիտի տեսնենք, որ ժողովուրդը շատ աչք ունենալով աւելի տեղեակ է եղել նորա անբարոյականութեան, և ի զուր չէ եղել ատում Նիկոլին : Բազմութեան հոգին նախագուշակում է եղել այն ամեն ապագայ չարիքը, ինչ որ նա իւր ձեռքով սկիտի թափեցնէ եղել ողորմելի ազգի գլխին . և նոքան չըսիրելով՝ միայն կամենում են եղել թումբեր դնել այն վնասներու առջև, որոնք որ նորա սկարականոն արարմունքներէն սկիտի դուրս բղխեն եղել և հեղեղել Հայերուն . որով և սկիտի ստուգվի եղել է այն առածի ճշմարտութիւնը, որ բարձրաբարբառ աավում է՝ «Բազմում ինչ տեսանեն աչք՝ քան ակն. կամ և ոչ ամենեքին միահաղոյն սխալին, և ոչ զամենեսին միանգամայն խարէ ոք» :

Այս օրերը որ Նիկոլ Հասաւ Կամենիցա , եկել էր այնտեղ Կոնստանտինուպոլիսի պատրիարք Գրիգոր Եպիսկոպոսը Կեսարացի , որ պատրիարքական պաշտօնէն դուրս եկած լինելով՝ դեգերվում էր աստ և անդ շրջելով : Հոգիորականաց մեկ երեւելի օլակասութիւնն-էլ այն է , որ սանձարձակ ձիու նման շատ են շրջադաշտում : Կը բռնաւոր են , բայց վանքի մեջ կենալ չեն սիրում . բազմամբոխ քաղաքներու մեջ բաղդասայոց աշխարհականներէն վատթար որսի են դարսնակալութիւն անում : Կարելի է թէ՝ Գրիգոր Կեսարացին այն մըստքով էր եկել , որ Նիկոլի ոտքի տակէն սփոռոցը հանէ : Կարելի է թէ՝ Մելքիորէթ Կաթողիկոսին էր պըտառում . ո՞վ գիտէր նորա դիտաւորութիւնը : Ինչ և իցէ : Գրիգոր Եպիսկոպոսի Կամենիցա գալը Նիկոլի Համար դառաւ վէմ գայթակղութեան ; Ինքն գոլով Էջմիածնի վարդապետ և հին Եպիսկոպոս , ոնչնար էր թէ՝ չունենար և քարոզութեան ձիրք . իսկ քարոզիչ վարդապետը Հայոց ժողովրդեան սիրելին է ի բնէ :

Հայոց եկեղեցւոյ շատ գեղեցիկ և պաշտելի ասլորութիւններէն մեխ-էլ այն է , որ

կարգաւորները մեծ և անկոստար պատիւ-  
կը մատուցանեն այն կարգաւորներուն, որոնք  
որ կարգով, հասակաւ կամ ձեռնադրու-  
թեան ժամանակով երիցագոյն են իրենցմէն.  
և չըկայ այն սովորութիւնը, որ մէկ կար-  
գաւոր իւր վիճակէն դուրս էլ չունենայ այն  
պատիւը, ինչ որ ունի իւր վիճակի մէջ.  
որովհետեւ քահանան միշտ քսհանսց է՝  
ինչպէս իւր ծուխի մէջ, նոյնպէս և ար-  
տաքոյ. եպիսկոպոսը միշտ եպիսկոպոս է  
ոչ թէ միայն իւր թեմումը, այլև ամեն  
տեղ. ժողովուրողը միօրինակ են պատու-  
ում իրանց կարգաւորներուն ամեն տեղ՝ թէ՝  
վիճակի տէր լինի, թէ՝ պանդուխտ. որով-  
հետեւ Հայոց եկեղեցին ամեն տեղ ամեն  
աշխարքումը՝ մէկ է. մէկ դաւանութիւն  
ունի, մէկ ձեռնադրութիւն ունի, մէկ ժա-  
մերգութիւն ունի, մէկ աստուածապաշտու-  
թիւն ունի, մէկ պատարագ ունի։ Կատի-  
նադաւաններու նման Հայոց կարգաւորը չէ  
կարող ասել ուս Օգոստինեան եմ, ես  
Գոմինիկեան, ես Քափուչին, ես Եղուիթ,  
ես Բեռնարդին, ես Կարմէլական։ Այս պատ-  
ճառով Հայոց կարգաւորք ամեն տեղ,  
ուր որ Հայազգի ժողովուրդ գտնուին՝ մէկ  
ընդունելութիւն կըդանեն անխատիր. ոչ

ժողովուրդը կ'ասէ կարգաւորին թէ՝ դու  
իմ հովիւս չես՝ որովհետև մեր վիճակէն  
չես, և ոչ կարգաւորը կ'ասէ աշխարհակա-  
նին թէ՝ դու իմ ժողովուրդը չես, իմ  
հօտի ոշխար չես, որովհետև մեր վիճակէն  
կամ մեր թերմէն չես։ Ինչպէս ժողովրդեան  
համար ամեն տեղ բաց է Հայոց եկեղեցւոյ  
դուռը, այնպէս-էլ կարգաւորի դէմ երբէք  
չի փակիիր ժողովրդեան սիրտը։ Օտարական  
քահանայ կ'երթայ եկեղեցիր. Խակոյն նորան  
փիլոն կուտան, դաս կըհրաւիրեն, բնիկ  
քահանայից մէջ կըկանգնեցնեն, և մինչև  
այն քաղաքէն դուրս գալը՝ կըկամենան որ  
վայելէ իրանց արդիւնքէն այն ամենայն  
ժողովրդապետական բարիքը, ինչ որ վայե-  
լում են տեղացի քահանացքը։

Յիրաւի է, առաքելական կանոն է, որ  
մէկ եպիսկոպոս միւս եպիսկոպոսի վիճա-  
կումը ձեռնադրութիւն, կամ եկեղեցւոյ  
հիմնարկութիւն կամ օծումն չանէ առանց  
հաճութեան թեմակալի կամ առանց յանձ-  
նարարութեան Արքի Հայրապետի։ Այլ  
տեղոյ եպիսկոպոսն-էլ չունի իրաւունք  
ասել միւս եպիսկոպոսին թէ այս իմ վի-  
ճակա է, դու շունիս իրաւունք այս ինչ  
կամ այն ինչ անել. որովհետև ամենեքին

մէկ մօր որդիք են, ամեն վլրակ էջմիածնի սեփականութիւն է, և ամեն եպիսկոպոս՝ էջմիածնի պատգամաբեր է (միայն թէ ապստամբ փախստական թափառական չըլինի). միշտ ծերը և առաջ ձեռնադրուածը նախազատիւ է և մեծ է: Թէպէտ հրամանը առաջնորդինն է, բայց առաջնորդն-էլ չունի իրաւունք քան զինքը ծեր եպիսկոպոսի գէմ, որ ձեռնադրութեան ժամանական երիցագոյն և հնագոյն լինի քան զինքն՝ յանդգնութիւն անել: Այս Հայաստանեայց եկեղեցւոյ անշարժ և անխախտ կանոններու մէկն է:

Ամեն կամեցաւ կամենիցա քաղաքումը մէկ ձեռնադրութեան հանդէս ցոյց տալ: Մէկ հատ խաչքայ անունով մարդ՝ անունը Բնոփրիոս փոխելով, քահանայ ձեռնադրեց և Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեամբ՝ գրեց քառասնօրեայ առանձնութեան մէջ: Հայոց այս սովորութիւնը շատ աւելի սատուածաւհանոյ ծէս է, որ նօրընծայ քահանան, զինի ձեռնադրութեան, քառասուն օր առանձնանում է եկեղեցւոյ մէջ, պահօք և աղօթիւք պատրաստում իւր անձն սատուածային պաշտօնակառարութե համար: Այս աւանդութիւնը մեր եկեղեցին առել է:

իսկապէս Յիսուսի Քրիստոսի օրինակէն՝  
որ զինի մլրտութեան կամ ձեռնադրու-  
թեան Յահաննիսէն՝ գնաց անապատ և քա-  
ռասուն օր ծույալահութիւն կատարեց:  
Քառասնօրեայ առանձնաբանը նորընծայի  
Համար որպէս թէ փորձութեան լեառն է,  
ուր որ նա պիտի փորձիլի, վարժիլի այն  
պատերազմներու Համար, ինչ որ պիտի  
իւր քովանդակ կեանքի մէջ ունենայ մարմ-  
նայ, աշխարքի և սատանայի դէմ։ Քառա-  
սունք պահող քահանան մէկ մեծ Համա-  
րումն ունի ազգի տչքումն։ Նորընծայ քա-  
հանան քանի որ քառասնից մէջ է որպէս  
Տրեշտակ ի մարմնի է երեւում ջերմեռանդ  
Հաւատացելոց։ Նորընծայ քահանային իւր  
քառսառնքի մէջ պաշտելը և կերակրելը  
մեծ առաքինութիւն է Համարուած Հաւա-  
տաւոր ժողովրդեան Համար, Հաւասար այն  
բարեապաշտ անձանց՝ «Որք յընչից իւրեանց  
պաշտէին զՅիսուս»։ Եատը կան, որ քառա-  
սունքի մէջ նորընծային Աւետարան կարդալ  
առաջ ամենայն ցաւոց բժկութեան պարգևող  
կեղ են Հաւատում, և շատն-էլ իրանց  
Հաւատոյ պատղը առատ առատ են սոտ-  
նում։ Ժողովրդականք այնքան ջերմեռանդ  
են այս սպիրութեան, որ շատերը ցանկա-

նում են այս քառամսօրեայ ճգնութեան  
ժամանակակէտը երկարացնել, որ աւելի  
կորողանան պաշտել նորընծային։ Եատ նոր-  
ընծայք-էլ կան, որ իրաւ առաջին պատա-  
րագին յետ, կամաւ և յօժարութեամբ մէկ  
երկու քառասունք-էլ աւելի են պահում։  
Քայց աւելի լաւ կը լինէր և մեծ օգուտ  
կը բերէր և՝ ազգին և՝ եկեղեցուն, եթէ նոր-  
ընծայացուն, որ ձեւնագրութենէն յետ պիտի  
քառասունք պահէ, ձեռնադրութենէն ա-  
ռաջ-էլ մէկ քանի քառասունք պահէր։  
Եթէ քառասունքը կրթութեան համար է, կրթութիւնը պիտի լինի ձեռնադրութենէն  
առաջ և ո՞չ յետոյ։

Երկու կրթութիւն կոյ. մէկը այն է, որ  
նորընծան պիտի սովորի պատարագ մա-  
տուցանելու ծէսը, արարողութիւնը, ձեր.  
միւսը՝ որ քահանան պիտի սովորի քա-  
հանայասկէս կենցաղավարութիւն անելը։  
Մեծ զանազանութիւն կայ այս երկու կրր-  
թութեց մէջ թէ՛ առարկաներու և թէ՛ նպա-  
տակներու կողմանէ։ Մեր եկեղեցւոյ քա-  
ռասունքի մէջ նորընծան միայն այն է սո-  
վորում թէ՛ պատարագի արտաքին ծէսը  
ի՞նչպէս է, ի՞նչպէս պիտի կանգնի, ի՞նչպէս  
պիտի դառնայ, խաղաղութիւն տայ, ի՞նչպէս

սլիտի տղօթքները ձայնով կամ անձայն կատարէ, ի՞նչպէս սլիտի ընծայքն ընդունի, դնէ, առնու, խորհուրդը կատարէ. այս միով բանիւ՝ է մեքենայական շարժումն : Խակ սկատարագի ներքին խորհուրդը, որպէս և բովանդակ կենաց մեջ քահանայակէս կենցաղավարելու կրթութիւնը շատ անգամ մնում են անտես: Հայաստանի չարաքաստիկ վիճակը, Էջմիածնի յարատև սասանութիւնը, Հայրապետաց անտանելի վշտակրութիւնները, ըստ մասին, կարող են արդարացնոցաթաղ ընկզմել էր մեր սուրբ Եկեղեցւոյ անարատ կարգաւորութիւնը քանի դար շարունակ մեր քարուքանդ և հիմնայատակ աւերուած հայրենիքի մէջ : Բայց ազգի այն մասը, որն որ ընկել էր Քրիստոնէից աշխարք, գտել էր խաղաղութիւն, գոյացրել էր իւր համար ճոխութիւն, ըստացել էր եկեղեցիք, շինել էր ուսումնարաններ . սկարստաւոր էր համանգամայն եկեղեցականաց կրթութեան համար հոգաւ : Այդ առաջին սկարսք էր առաջնորդաց, որ եթէ փոխանակ չորս ձիով շրջագայելու բաւականան երկու ձիով՝ անշուշտ կ'ունենան և հոգեսոր վարժարան: Կան այժմ

Հոգեառ գպրոցներ-էլ, բայց դեռ չեն սկսել  
այդ ուսումն տւանդել: Քահանայացուք,  
ինչպէս մէկ զերասան, փոխում են իրանց  
արատաքին զգեստը, հագնում են լայն և  
երկայն շորեր, լքցնում են երեսները մա-  
զով ու միբքով և սկսում են ձկտիլ, որ  
քահանայանան և պատարագ անեն. այլ  
թէ պատարագը ի՞նչ է, և ինքն պատարագ  
մատուցանելու ժամանակը՝ ի՞նչ պիտի իւր  
դիտառորութեան մէջ ունենայ — դառնում  
է այնպիսի խնդիր, որոյ վրայ ոչ թէ մէկ  
քառասունք սկահած միջոցը, այլև քառա-  
սուն տարի քահանայութիւն անողը և  
տարին քառասուն ձեռնադրութիւն անողը  
ևս հարկաւոր չեն համարում ուշադրու-  
թիւն դարձուցանել:

**Ա**յս տեղ երդումն հարկաւոր չէ. քա-  
ջայոյս եմ, որ առանց երդման-էլ հաւասաք,  
որ լաշկոն կամ աշխարհական մարդ էր,  
կամ եկեղեցւոյ մէջ մեծացած ժամկոչ. և  
նա չունէր տեղեկութիւն, թէ ի՞նչ է քա-  
հանայութիւնը: Տեսել էր, որ քահանայք  
տեղի արդիւնք են ստանում քան զժոմ-  
կոչն, ցանկացել էր քահանայութեան և  
դաել էր հնար իւր ցանկութիւնը յայտնել  
նոր առաջնորդին: Առաջնորդն-էլ արդեօք

քննել էր, վերահասու եղբլ էր նրա արժանաւորութեան . հարցման ժողովրդեան թէ՝ կամենում էր որ օրան ձեռնադրեմ , թէ ոչ . վկայութիւն տալիս էր , որ ու կարող է քահանայական լուծը քաշել , թէ ոչ ...

Առաջնորդը՝ որ ինքը կաշառներով և մեքենաներով ձեռնադրվել էր , և չարանիւթ հնարներով առաջնորդութիւն էր ստացել՝ ով էր նրա համար վկայել , ով էր նրան քննել և փորձել . նրա ձեռնադրով մտածել էր թէ ինչ է եպիսկոպութիւնը և ումն է արժանի տալ և ումը չըտալ : Առաջնորդն եմ ասում , որ «Երբ տեսաւ փող՝ հոգու մէջ ընկաւ դող ինչի պիտի խաչկոյի անձին մէջ քահանայական կարգի արժանաւորութիւններ սպարզտէր , որ ուրիշ ցանկացողներուն էլ խրատնեցնէր և արդեանց ճանապարհը դժուարացնէր . ինչի պիտի առաջնորդը երեսը կաշառէն դարձուցանէր . մէկ քանի բուռուկին նրա համար ինչ սիմոնականութիւն էր , որ վախենար . ստացաւ ձեռնադրութեան վարձը յառաջուանէ և ձեռնադրեց . ինչի եպիսկոպոս էր , որ իւր վեճակի մէջ չըկարաղանար մէկ հատ խաչկոյ՝ տէր Անոփի-

բիոս շինելու։ «Աեղանոյ պաշտօնեաց» էր, կամ  
լու ևս՝ տէր և իշխաղ էր. յիմար էր, որ  
«կտապէր զցոռուկ եղին կալոտոյ», միթէ չըգի  
տէր առաքելական խօսքը, թէ Որ սեղանոյն  
ծառայէ՝ ի սեղանոյ անտի կերիցէ»։ Ար-  
դեօք ՆիկոԼ ձեռնադրութենէն առաջ էլ  
խորհուրդ արել էր Գրիգոր եպիսկոպոսի  
հետ. արդեօք նրան-էլ ցոյց տուել էր  
իւր նորընծայացուին. արդեօք նա-էլ վը-  
կայութիւն տուել էր և յօժարութիւն  
ցոյց տուել էր, թէ լաւ է, ձեռնադրէ։ Եր-  
կու եպիսկոպոս, ի՞նչ գեղեցիկ ընկերու-  
թիւն. եթէ հանդերձեալ ձեռնադրութեան  
վրայ-էլ չըխօսէին՝ ի՞նչ բանի վրայ պիտի  
խօսէին։ Գիցուք թէ Գրիգոր եպիսկոպոսը  
խօսում էր իւր պատրիարքութեան վրայ  
թէ ի՞նչպէս պատրիարք զառաւ կամ ի՞նչ-  
պէս պատրիարքութենէն հանուեցաւ. և  
Նիկոլն-էլ սրատմեց թէ ի՞նչպէս Մելքիսէթ-  
կաթողիկոսը տեսաւ նրան, հաւնեցաւ նորա  
սպարկեշտ վարքը և կամեցաւ եպիսկոպո-  
սական աստիճան շնորհել. ի՞նչպէս յայտ-  
նեց ժողովրդեան և ի՞նչպէս ամենեքեան  
ուրախութեամբ ընդունեցին. բայց վերջը  
ի՞նչպէս մէկ քանի հակառակորդք ընդդի-  
մացան և ոչինչ չըկարողացան անել, որով-

Հետեւ ամենայն տեղ ջշմարտութիւր յաղթողէ։

Այիժէ, այսքան խօսակցութենեն, յետ էլ  
մէկ դիսուած ըսպատահեցա՞ւ, որ Նիկոլ  
ասէր, թէ այս ինչ օր պիտի ձեռնադրու-  
թիւն կատարեմ, և չուզե՞ց Գրիգոր եպիս-  
կոպոսին ցոյց տալ իւր պատրաստած նոր-  
ընծայացուին։ Բանէն այնպէս է երեսում,  
որ Խաչկոն երկոտանի մարդ է եղել։ Աս-  
տուած մի՛ արասցէ, եթէ Խաչկոն լինէր չոր-  
քոտանի անասուն։ այսու ամենայնիւ Նի-  
կոլ չէր զրկիր նրան իւր ձեռնադրութենէն.  
որովհետեւ այն եպիսկոպոսութիւնը որ այն-  
քան թանգ գնել էր և այնքան պարագի  
տակ էր ձգել նրան՝ պիտի այն տեղ իւր  
առաջին պտուղը ցոյց տար։ Նիկոլ նրա  
գլուխին ձեռք գնելու ժամանակը անհնար է  
թէ միտք չանէր՝ «Ի՞նչ պակաս քահանայ  
պիտի դառնայ իմ Խաչկոն, ումըն պակաս  
պիտի մնայ Հոգու-Հաց ուտելու ժամա-  
նակը։ «Ընդէ՞ր աբառում ես անձն իմ, կամ  
ընդէ՞ր խռովես զիս։ Համարձակ կարող  
եմ ասել՝ որ մսի գէրերը և բաժակի խո-  
շորները կարող է իմ Խաչկոն կառավարել։  
միայն թէ անունը լինի Տէր Անոնքնու։ Թէ-  
պէտ և չիուահայոց լինի հասաքոյ, ո՞ւրայ ու-  
ժայոց կը լինի ռառութոյ։

Արևոլ Հայաստանեայց Եկեղեցւոյ սովորութեամբ էր գրել իւր ձեռնադրած նորընծային քառասնօրեայ ճգնութեան մէջ .ուրեմն Հայաստանեայց Եկեղեցւոյ սովորութեամբ պիտի թողնէր , որ քառասունքը լրացնէր այն նորընծայ քահանան , և ապա քառասունքէն դուրս դար և առաջին սկատարագը մատուցանէր : Ո՞վ զիտէ թէ խղճալի ժողովուրդը ի՞նչ բարեպաշտութեամբ և ի՞նչ ջերմեռանդութեամբ էր սպասում , որ այն նորընծան իւր քառասունքը կատարէ և առաջին պատարագը մատուցանէ : Թէալէտ ամեն պատարագ մի և նոյն է , բայց ժողովրդեան ջերմեռանդութիւնը նորընծայի առաջին պատարագի վրայ , հաւաստում է թէ , Աստուած այնպէս կընայի , ինչպէս որ նայեցաւ Աքէլի սկատարագին , Նոյի ողջակիզին և Աքրահամուզոհին , կամ ինչպէս ընկալաւ Յիսուսի Քրիստոսի ընթրիքը և նորա խաչի վերայ ինչողէս գառն Աստուծոյ պատարագուիլը : Կարելի է շատ տարի էր , որ ժողովուրդը տեսած չէին նորընծայի առաջին սկատարագ , որովհետեւ եպիսկոպոս չունեին .անշուշտ պիտի ցանկային տեսնել առանց օրինազանցութեան : Ո՞վ չէր կարծէր թէ՝

Նիկոլ որ Հայոց սովորութեամբ նորըն-  
ծային գրեց քառասունք պահելու , Հայոց  
սովորութիւնները ծաղը արած կրլինի, եթէ  
մեկ օր պակաս անէ քառասուն օրէն :

Բայց որովհետեւ Նիկոլ Հայաստանեայց  
Եկեղեցւոյ հարազատ որդի չեր և Հայաստան-  
եայց Եկեղեցւոյ սովորութիւնները պիտի  
շատ անգամ և շատ տեղ նրա աջքը ծա-  
կէին, Հոռմադաւան աշխարքի մէջ կեցած  
Նիկոլ՝ մեծ յանդզնութիւն ընհամարեցաւ  
քառասունքը ըլլրացած նորընծային քառա-  
սունքէն հանել և տռաջին պատարագը  
անել տալ : >

Ինքն-էլ Հայաստանեայց Եկեղեցւոյ սովո-  
րութիւններու շատը ուժնակոխ էր արել  
իւր ձեռնադրութեան ժամանակը : Ուր էին  
նորա կոչման և օծման օրերը Եկեղեցական  
Հանդիսավիշութիւնները . ուր էր ժողո-  
վրդեան բերնէն մահարը, որոյ վերայ հիմ-  
նէր խարսաւիլակը (Ապրանքիլաւ) իւր խօսքը,  
երբ որ պսելու լինէր՝ « Շնորհազարդ  
Սուրբ Հայրաւոկես , խնդրէ ի քէն մայր  
մեր սուրբ Եկեղեցի , զի զնիկոլ Թորոսո-  
վիշն ձեռնադրեսցես յեպիսկոպոսութիւն »:  
Սուրբ Եկեղեցին, որ քարէ և փայտէ էր  
շինած, ոչ կարօտ էր Նիկոլի եպիսկոպո-

սութեան և ոչ կարող էր խնդրել։ Կարօտ  
չէր, որովհետեւ եպիսկոպոսի ձեռօք հիմ-  
նած էր, եպիսկոպոսի ձեռօք օծած էր,  
աւազան ունէր եպիսկոպոսի ձեռքով հաս-  
տատած և սեղան ունէր եպիսկոպոսի ձե-  
ռօք ամբացուցած։ Կարողէլ չէր խնդրել,  
որովհետեւ քարն ու փայտը ոչ խօսում  
են, ոչ լսում։ Նոյնպէս միջի սրբոց պատ-  
կերները չեն ազաղակում թէ եպիսկոպոս  
կ'ուզենք։ Առարք եկեղեցին հաւտացելոց  
ժողովն է, որ Նիկոլին չէր ուղում ունենալ  
իւր առաջնորդ և եպիսկոպոս։ Նիկոլին  
ձեռնտու էր Հայաստանեայց Եկեղեցւոյ սո-  
վորութիւնները քիչ քանդելը, որ իւր  
ապօրինի ձեռնադրութիւնը չըյիշվէր և իւր  
բանութեամբ առաջնորդ դառնալը և անար-  
ժանութեամբ եպիսկոպոս անունը յափշտա-  
կելը մոռացվէր։ Կամեցաւ իւր (ուկեջրած)  
նորընծային քառասունքէն հանել և առա-  
ջին պատարագը անել տալ։ Ո՞վ գիտէ,  
թէ այդպէս խակակութ պտուղ ժողովր-  
դեան ուտեցնելու համար ինչ էր ստացել  
այն խաչկոյի բարերարներէն և միջնորդնե-  
րէն։ Բայց որովհետեւ դեռ քսան օր չէր  
անցել ձեռնադրութենէն, Գրիգոր Կեսա-  
րացին, որ զեռ տեած չէր Հայոց Եկեղեց-

ու մէջ այդպիսի գայթակղեցուցիչ գործ  
ցոյց տուեց դժկամակութիւն՝ և Նիկոլ առ  
ժամն սուս կեցաւ : Կարելի է թէ՝ ժողո-  
վրդականք-էլ, որ կամենում էին նորընծայի  
առաջին պատարագի շնորհարաշխութեան  
արժանանալ, ցանկանում էին՝ որ այն պա-  
տարագի մէջ մէկ օրինազանցութիւն չը-  
խառնուի, և խնդրեցին ծածուկ կամ յայտ-  
նի Գրիգոր Եպիսկոպոսէն, որ նա թոյլ  
չըտայ այն առաջին պատարի մէջ մէկ ապօ-  
րինի գործ սպրոցելու, և այս պատճառաւ  
Գրիգոր Եպիսկոպոսն-էլ զգուշացուց Նիկո-  
լին, որ այդ փոքրիկ բանով շահէ ժողո-  
վրդեան սիրոը և նոցա սէրը դէպի ինքը  
քաշէ : Եւ ժողովուրդը, երբ որ տեսնէր  
թէ՝ Նիկոլ լսում է քան զինքն մեծերուն՝  
կարելի է քիչ քիչ բայց հաշտուէր նորա  
հետ և այն կրծիմնը մէջնրէն դուրս ելանէր:

Կնշակէ յաջողակ դիմուած էր այս Նի-  
կոլի համար : Եթէ նա լինէր մէկ խոհեմ  
մարդ՝ այս դիմուածը գործ կըդնէր իւր  
օդուի համար, Գրիգոր Կեսարացւոյն ցոյց  
կուտար մէկ որդիական հնազանդութիւն,  
և այնքան կըհաճոյանար նրան, մինչև որ  
նրան ատեան կըհանէր և իւր ջատագո-  
վութեան համար քարոզներ ասել կուտար:

Գրիգոր եպիսկոպոսը հոգոյ յօժար,  
թեամբ կըմտնէր նոցա մէջ՝ հաշտաբար և  
միջնորդ հանդիսանալու համար . չէր խը-  
նոցիր իւր առենախօսութիւնը , մինչև Կա-  
մենիցայումը լու հաստատէր նորա առաջ-  
նորդութիւնը , յետոյ կըտանէր իւր հետ  
Առաջօլիս և այն տեղէլ նոյնը կ'անէր :

Գրիգոր Կեսարացին այդ գործով համ  
կաթողիկոսին հաճոյական գործ գործած  
կըլինէր , համ Նիկոլին օդնած կըլինէր ,  
համ Ժողովրդեան ազատած կըլինէր այն  
չարիքներէն , ինչ որ նոցա գլխին գալու-  
էին . և վերջապէս՝ Աստուծոյէլ անհաճոյ  
բան արած չէր լինիր , եթէ որ յիրաւի իւր  
կարգի և կոչման համեմատ խաղաղաբա-  
րութեան , երանութեան ցանկանալով կա-  
մենար հանդերձեալ վնասներու առաջքը  
առնուլ :

ԳԼՈՒԽ 5.

Յէտ և խաչկան այնպիս քաջալարժ լինէր  
պատարագի արարողութեան մէջ , որ կարո-  
ղանար քառասուն տարվան քահանայի նը-  
ման պատարագի ծէսը անսիսալ կատարել ,

սակայն այսու ամենայնիւ Նիկոլ չունեք  
իրաւունք նրան քառասունքն հանելու, և  
այն-էլ այն պանդուխտ կարգաւորի առջեւ,  
որ իւր կեանքի մէջ շատ եկեղեցական իշ-  
խանութիւններ էր վարել և քանի ժամանակ  
էլ Կոնստանտինուպօլսոց հզօր պատրիար-  
քութիւն ձեռին է ունեցել (\*): Եթէ քահանայի  
պակասութիւններ՝ լաւ էր որ Նիկոլ ինքը  
քահանայութիւն անէք, քան թէ քանորեայ  
նորբնծային պատարագ անել տար: Թէպէտ  
զկնի նեռնազգրութ նոյնօրը նորբնծան արդեն  
կատարեալ քահանայ է, և քահանայավայելուց  
ունի կատառները կատարել և պատարագ  
էլ մատոցանել, բայց ազգի սրբացեալ  
սովորութենքը քանզելը՝ էր աններելի, ինչ-  
պէս որ Գրիգոր Կեսարացին մտածեց և  
շրջօժարեցաւ:

Նիկոլ սուածին նուագին որսկէս թէ  
յանձնառու եղաւ Գրիգոր եպիսկոպոսի ա-  
ռաջադրաւթիւնը, յետոյ միաքը փոխեց  
էրիի թէ շարժառիթներ ունեցաւ, երկի

(\*) Քանորեայ առանձնաբանէն դուրս գալը՝ նման կը-  
լիներ խաղողի դեռ ազգին ժամանելը այդեքազ անելուն,  
կամ ծառէն խակ ու տուխազ պատկերուն:

թէ՝ յաճախուեցին միջնորդութիւնները, որ  
նա միւս կիրակի հանեց իւր նորընծային և  
հրաւիրեց Գրիգոր Կեսարացուն-էլ. որ դայ  
եկեղեցի և իւր ձեռնադրած նորընծայ քա-  
հանայի առաջին պատարագը տեսնէ: Այս  
նախ՝ կրկնանախատ արհամարհանք էր այն  
ծեր արքեպիսկոպոսին, որ առաջ յօժա-  
րացել էր Նիկոլ իւր զիտաւորութենէն  
յետ կանգնել, և ապա միւս անգամ իւր  
կամքը պաշտել կամեցաւ. և երկրորդ՝ ուղես  
թէ ծաղը անելով՝ Գրիգոր Կեսարացուն  
էլ եկեղեցի հրաւիրեց, իբր թէ կամեցաւ  
հասկացնել, թէ տես ահա և իմացի՛ր որ  
քո խօսքը ո՞րքան եմ պատուում, և խե-  
լամուտ լիր, որ ես եմ առաջնորդը և ոչ  
դու և «Օրէնք ի ձեռս Առաջնորդաց է»,  
լորին խաշած կըցանեմ:

Խղճալի Նիկոլը լսել էր, որ մեկ տեղ  
Սուրբ Գէորգ կայ. բայց լաւ հասկացած  
չէր, թէ ո՞ր բլրի յետևն է. լսել էր որ  
կ'ասեն «Օրէնք ի ձեռս Առաջնորդաց  
է», բայց իմացած չէր, թէ ի՞նչ մոքով է  
օրէնքը տուած նոցա ձեռքը, —օրէնքը քան-  
դելու համար, թէ աւելի հաստատուն պա-  
հելու համար: Առաջնորդը օրէնքի պահ-  
պանն է, թէ տակնուվրայ անողը. դանձա-

սկսող դանձարտնի պահո՞ղն է, թէ վատնո-  
ղը . քաղաքապետը՝ քաղաքի խռամո՞ղն է,  
թէ խռովարարը և շփոթարկուն . հովիւր  
հօտի սլաշտալան է, թէ գառներու վարա-  
տողը և ցրուողը : Ի՞նչ լաւ ժամանակ էր  
Նիկոլին իւր ժողովրդեան հետ հաշտուե-  
լու, և նոցա սիրող շահելու ու դրաւելու .  
այն-էլ միայն բաւական էր, թէ որ ժողո-  
վրդեան մէջ խօսվէր, թէ Նիկոլ Գրիգոր  
եպիսկոպոսի խօսքին հնազմնդվեցաւ . ա-  
մենեքին կըտեսնէին, որ նա կամակոր չէր,  
իրանց արածներէն կըզդջային և կըսկսէին  
միտքերը փոխել, և վերջապէս կըհաշտու-  
էին : Բայց Նիկոլ ձեռքէն թողուց այս բա-  
րեղէս միջոցը, և բռնութեամբ եպիսկո-  
պոս դարձած դոլով ուղեց բռնութեամբ  
առաջնորդութիւն-էլ անել, մինչ որ եթէ  
այս նուազին միայն լսէր Գրիգոր Կեսա-  
րացւոյն, նա ինքը նրան կըհաշտեցնէր ժո-  
ղովրդեան հետ . այլ Նիկոլ կամեցաւ միայն  
իւր կամքը պաշտել :

Նիկոլի այս յանդզնութեան վրայ խոր  
խոցվեցաւ Գրիգոր Կեսարացին, կարծեց,  
(և ունէր-էլ իրաւունք կարծելու), թէ Նիկո-  
լի արարմունքը որքան որ Հայոց եկեղե-  
ցւոյ սովորութիւնները եղծանելու դիտա-

ւորութեամբ էր, կամ որքան որ Հայազգի ժողովրդեան ցանկութիւնը, որ ուզում էին նորընծայի առաջին պատարագը քառասնօրեայ ճգնութիւնը կատարած տեսնել և շնորհը վայելել, ըմեծարելու մտքով էր, նոյնքան, կամ ևս առաւել, նրա միջնորդութիւնը չըյարգելու և վրշտացնելու համար էր, որ ցոյց տայ նրան, թէ նորա առաջակայութիւնը նա բնաւ մէկ բանի տեղ չէ դնում, և իրան համարում է անկախ ինչպէս մէկ ինքնադլուխ իշխան։ Այն չէք միտք անում ողորմելին, որ եկեղեցւոյ մէջ ինքնադլութիւն կամ ինքնակամութիւն չըկայ. Եկեղեցի ասելը՝ միաբանութիւն է և միակամութիւն. «Ուր երկու և երեք ժողովեսցին յանուն իմ, անդ եմ և ես ի մէջ նոցա ։ Եկեղեցին միապետութիւն չէ. Եկեղեցին այն ժամկնակն է Եկեղեցի, երբ որ երիցունք և աշխարհականք ի միասին ժողովուած կը լինին. Եկեղեցին ժողով է և ո՛չ ցրուումն։ Մանաւանդ որ առջևները կար պատարագի սարսափելի խորհուրդը։ Ի՞նչ շինութիւն պիտի սաանայ ժողովրդոց սիրաը, միաքը և հոգին, երբ որ Նիկոլի ձեռնադրած քահանան պատարագ անէ այն ժամանակ, երբ որ ծեր նախոկոսոր ասել

է, թէ՝ դեռ ժամանակը չէ, կամ յարմար չէ, կամ օրէնք չէ, կամ մեր եկեղեցւոյն ընդդէմ է, կամ ժողովուրդը ցանկանում է, որ նա իւր քառասունքը օրինաւոր լըրացնէ : Ծեր եպիսկոպոսը, որ եթէ յանկարծ բերնէն թոցնէր թէ՝ նա գեռ ևս քահանայ չէ, կարծեւմ որ՝ տէր Ոնոփրիտսի քահանայութիւնն-էլ կ'ընկնէր մեծ վտանգի տակ : Նիկոլի բնչը կըսկակէր, թէ համբերէր քսան օր-էլ, որ քառասունքը լրանար : Բայց որովհետեւ նիկոլ ինքը անհանգիստ և յանդուգն մարդ էր, հարկաւոր էր այդպիսի քաններով խռովուի հանել, որ ժողովրդեան պատճը հաստատուէր, որ ասել էին, թէ դա մեղ վնասակար մարդ է, և ժողովուրդը իրաւունք գսնէր իւր առաջվան ասածին համար-էլ, որ ասել էր թէ՝ չենք ուզում :

Անսուտ է, և այն առածը, որ հասարակեալ է, թէ՝ «Նախ յիմարեցուցանէ և ապա կորուսանէն»: Նիկոլ իւր մեծամտութեամբ, իւր անսանձ քարեքով յիմարացաւ . միայն իւր կամակորութիւնը յառաջ տանելու համար՝ իւր նորընծային հրամայեց սկատարդ մատուցանել : Գրիգոր Կեսարացին կամեցաւ Նիկոլին փրկել այն անկանոն գործէն. կամեցաւ նորա նորընծային ազա-

տել ժողովրդեան մշտնջենաւոր ատելու-  
թենէն. կամեցաւ որպէս հայր, որպէս ծեր  
հովիւ՝ ապահովել համ հովիւներուն, համ  
ոչխարներուն. կամեցաւ Նիկոլին կանգնե-  
ցնել այն տեղ, ուր որ բանը հասել էր :  
Այս պատճառաւ ո՛չ թէ միայն չքնաց Նի-  
կոլի հրաւիրանօք այն եկեղեցին, ուր որ  
Նիկոլը տիտի իւր նորընծային պատարա-  
գել տար, այլև ասաց ժողովրդեան թէ,  
«Անիծեալ լինի այն մարդը, ով որ այսօր  
կերթայ Նիկոլի եկեղեցին» >Ա.Հա քեզ դեղ  
որ քան զցաւը աւելի վշտացուցիչ էր: Լաւ  
էր ծեր եպիսկոպոսի նպատակը, այլ բըռ-  
նած Տանփան պարականոն, որ Աւետարանի  
բրինով չէր հարթած և չէր հաւասարած:  
Ապօրինի էր Նիկոլի գործը, ապօրինի էր  
և Գրիգոր Կեսարացւոյ արածը: Նիկոլ  
Գրիգոր Կեսարացւոյն ընդդէմը անելով  
կամենում էր Հայոց աւանդութիւնները և  
եկեղեցական նախնեաց սովորութիւնները  
քանդել. բայց Գրիգոր Կեսարացին-էլ  
նորա արարմունքի մէջ աւելի եկեղեցական  
աւանդութեանց արհամարհութիւնը չէր  
նշմարում այնուհետև, որքան որ իւր ան-  
ձին և կարգի արհամարհութիւնը, և ցա-  
ւում էր սաստիկ, և կասկածում էր, թէ այն

նախատինքը և այն անարդութիւնը, ինչ որ  
Նիկոլ նրան անում է՝ նրան կրկին Կոն-  
ստանտինուպօլսոյ պատրիարքութենէն ևն  
արտաքսում .

„Սմբենեքնան, որոց երբ են՝ միշտ ձախորդ  
Չըգիտեմ բնաւ զիարդ լինին կասկածոս,  
Զի նախառնըս համարին զամննայն,  
Սո ապիկար գոլոյ խրեանց և խոտան“ :

Իսյց Գրիգոր Եպիսկոպոսի նղովքը  
բերնէն հանելը ամեն կողմանց երեւում է  
այն մասին արած, որ Նիկոլը առ ժամը  
դադարի, որ նորընծան իւր քառասունքը  
կատարէ, և ապա պատարագէ, որ ժողո-  
վուրդն-էլ շահուի այն սկատարագէն, և ոչ  
թէ այն մասին էր արել՝ որ Նիկոլը կամ  
այլք նղովքի տակ մնան : Սակայն այսու ամե-  
նայնիւ՝ երկու Եպիսկոպոս սկսան մէկ մէկու  
դէմ հանել անարժան և անվայելուչ կռիւ,  
և Եպիսկոպոսական իշխանութիւ մաքառիլ :  
ԵՌ, իկոլ երբ որ լսեց Գրիգոր Կեսարացոյ  
անեծքը՝ փոխանակ մէքիչ ինքն իրան զըս-  
պելու, և իւր դիտաւորութենէն յետոյ նա-  
հանջելու, գնաց այն եկեղեցին՝ ուր որ էր  
Գրիգոր Կեսարացին, և եկեղեցին փակեց,  
և բանալին ծոցը դրեց, և գնաց՝ այն յու-  
սով՝ որ ժողովուրդը կամաց ակամայ երթայ

և նորընծայի սլատարագը տեսնէ; Բայց ժողովուրդը կէս մի Գրիգոր Կեսարացոյ անսլատութեան Համար վշտանալով, և կէս մի կիսաքառասունք նորընծայի սլատարագին ներկայ գտնուելու չըհամարձակելով, չըգնացին Նիկոլի եկեղեցին; Գրիգոր Կեսարացին մնուց իւր բնակարանումը, ժողովուրդականք ցրուեցան և ամեն մարդ իւր տուն գնաց; Այս տեղաց յայնի երեսում է, որ ոչ թէ միայն Գրիգոր Եպիսկոպոսն էր, որ չէր ուզում նորընծայի առանց քառասունքը կատարելու պատարագ մատուցանելը, այլև ժողովուրդականք, որ ի սրտէ ցանկսնում էին տեսնել, որ Հայաստանեաց Եկեղեցւոյ Հին աւանդութիւնները սուրբ մընան, առաջ թէ, ոչ՝ Հետաքրքիր մարդիկ շատ կըլինէին, որ կ'երթային նորընծայի պատարագը տեսնելու: Այլ նորընծայի պատարագի ժամանակը կային Եկեղեցումը միայն ինքը Նիկոլը, նորա Համախոհ մէկ քանի աշխարհականք, մէկ քանի քահանայք, դպիրք և ժամակոչք: >

Երբ որ տեսաւ Նիկոլ, թէ ժողովուրդականք աւելի Գրիգոր Կեսարացու խօսքին հնազանդուեցան, քան իւր կամքին, որ կարելի է թէ այն պայմանաւ էր Հրաման տուել

իոր նորընծային՝ որ առաջին սլատարագի արդիւնքը ինքը Նիկոլը ստանաց, և տեսաւ որ՝ պտուկը բան չընկաւ՝ բարկացաւ, և այն եկեղեցին-էլ, ուր որ իւր նորընծան սլատարագ էր արել և քիչ արդիւնք էր բերել՝ միւս եկեղեցու նման փակեց. որով ժողավրդականք մնացին իսպառ առանց եկեղեցւոյ:

Անց քեզ Հայոց աղդ, որ մէկ Հատ Նիկոլ քո առջեր քո եկեղեցւոյ դուռը փակում է, և այն դուռը փակած է մնում: Տաղասէ իշլշշաղատչնէ ռո Հար: Ուրեմն դու ի՞նչ ես, անունդ ժողովուրդ չէ. դու չես այն եկեղեցւոյ տեսականը, նիւթականն էլ քեզմով չէ. ինչի այնքան տկարացար, որ մէկ Հատ Նիկոլը կարողացաւ քեզ առանց եկեղեցու թողուլ: Տէր Յիսուս, արդիօք մտիկ ես անում յերկնից ի բարձանց ի պատրաստ բնակութինէ քումմ, քո Հօր ծոցիցը՝ ուր որ նստար, միթէ դեռ ժամանակը Հասած չէ, որ քո թշնամին դրուի պատուանդան ոտից քոց. դեռ շատ պիտի երկայնամուս, դեռ շատ պիտի թոյլ տաս, որ Նիկոլները քո տունը, որ տուն ազօթից է, շինեն այր աւաղակաց: Տէր Յիսուս, երբ որ եպիսկոպոսը Համարձակվի եկեղեցւոյ դուռը փակել առանց մէկ պատ-

ճառի, որ մէջը մէկ սպանութիւն պատահած չըլինի, մէկ երևելի ոճիր գործված չըլինի, միայն այն մասին, որ պատարագի համար շատ արդիւնք տուած չըլինի ժողովուրդը, — ժողովուրդը Քեղ ո՞ր տեղ պիտի գտնէ, որ Քո ոտքերը բռնէ և Քեղ երկրպագէ։ Դու տուե՞լ ես այդպիսի իշխանութիւն, և ումն ես տուել։ Եթէ եսլիուկոպոսին տուել ես եկեղեցւոյ դուռը փակելու իրաւունքը, ապա Դու ինքդ ո՞ր տեղէն պիտի ներս մտնես, Հովիւ քաջ, դռնէմ մտնող և ելանող, հանող և ներս տանող։ Իսկ եթէ Դու միշտ ներսն ես, ուրեմն եսլիսկոպոսը նորա դուռը փակելով՝ Քեղ Քո տան և Քո Հօր տան մէջ բանդարկում է, և Դու համբերում ես։

ԴԶԵ, Փրկիչ, արի՛ միւս անդամ, որ Քո սուրբ Եկեղեցին, Քո անարատ հարսը այդպիսի բռնաբարութենէ փրկես։ Պետրոսը մոռացել է, որ Դու նրան Հովիւ կարգեցիր և ո՛չ զինուոր։ Մոքից չէ հանում էր առաջը. միշտ Մաղքոսներու ականջը կտրելուն է վազում, և ո՛չ բժշկելուն։ Մոռացել է Քո պատուէրը, որ առ անդամ մի և յաւէժ ասացիր, թէ «Գարձո՛ զսուր քո ի պատեան իւր»։ Նա այն սրով միշտ վա-

ոռած է, աւելի է սիրում կոխ և պատերազմ, քան խաղաղութիւն և հաշտութիւն. չէ ուզում արածել Քո ովսարները, այլ ուզում է միշտ մորթել և քերթել. արի! Տէ՛ր Քրիստոս, արի! Քո Եկեղեցուն Համար օգնութիւն. արի! որ տեսնեն Քեզ միւս անդամ և Հաւատան և իմանան, որ Գու Հեղ ես և խոնարհ. որովհետև Քո ձայնին և Քո Աւետարանին չեն կամենում ականջ դնել և չեն Հասկանում, որ Գու չես ուզում Քո քաղցր լուծը և փոքրտի բեռը անտանելի անել Քո Հետևողաց Համար, որ ոչ ի վայրի դալարւոջ են բնակեցուցած, և ո՛չ առ ջուրս Հանգստեան են սնունդ առնում”:

Եկուլի յանդգնութիւնը ո՛չ չափ ունէր, ո՛չ սահման : > Եզուիթական կրօնաւորաց Հետ ծանօթութիւն ունենալով վաղ էր նոցա հոգին սեփականել . իւր անհանգիստ բնաւորութեան Հետ միաւորելով Եզուիթականաց սկզբունքը՝ անձնատուր էր եղել այն առածին, որ նոցա մէջ Հաստատուած էր թէ Վախճանն է Գործոյ արդարացնուզ, և իւր նպատակին Համնելու Համար ոչ ինչ դժուարութեան առջե չէր ուզում կանգ առնուլ , և ամեն ինչ Համարում

էր ներելի, պատշաճ, վայելուչ և օդտակար :

Հայաստանեայց Եկեղեցւոյ տովորութիւնը ոտնակոխ արաւ. ծերունի Եպիսկոպոսին, պատրիարքութիւն արած մարդուն վիրաւորեց, անպատիւ արաւ. իւր նորընծային թելադրեց կանոնական կարգերը անարգել. յետոյ Եկեղեցիները փակեց : Բայց այսքանով չըբաւականացաւ. գնաց Ղուկաս Ազյել (քաղաքապետի) մօտ, Խընդրեց և հրաման հանեց նրամեն, որ Գրիգոր կեսարացին չըմնայ Կամենիցա քաղաքումը, և ոչ մէկ տեղ Լեհաց երկրումը, այլ երթայ Արևելք, որ տեղաց որ Եկել է:

Այս անօրէն հրամանի զօրութեամբ՝ Գրիգոր կեսարացին-էլ վիրաւորուած, անպատիւ եղած, վշտացած, աքսորուած ճանփայ դուրս եկաւ. Կամենիցայէն դէսի Վալաքիա (Ուլուն երկիր): Այլ երբ որ հասաւիւր դէմ եղեւալ նսլատակը՝ այն տեղին մէկ սաստիկ բանադրանաց գիր գրեց և ուղարկեց Նիկոլի վրայ: Այս-էլ Գրիգոր եպիսկոպոսի յիշատակի համար մէկ պարծանք չէր. այս-էլ հոգեւոր զինու դէսի ի վատը գործածութիւն էր: Աշակերտ էր Գրիստոսի և Պողոսի, պիտի չըմոռանար նոցա պա-

տուերը : Ասած էր «Եթէ ոք ապտակ հանցէ  
յաջ ծնօտ քո՝ դարձո՛ նմու և զահեակն»,  
և ինքն Քրիստոս մէկ գլշերուան մէջ քանի  
ապտակ կերաւ և համբերեց : Ասած էր,  
«Եթէ հալածեսցեն ի միոյ քաղաքէ, փախի-  
ջիք ի միւսն» : Ասած էր «Օրհնեցէք և մի  
անիծանէք», և չար փոխանակ չարի մի հա-  
տուցանէք» : Բայց ի՞նչ անես, որ նա-էլ մարդ  
էր և տկար բնութեան վիճակուած : Բա-  
նադրաները բերնէն դուրս թռաւ և տեղ  
հասաւ : Տես՝ թէ մէկ աննշմարելի կայծէն  
ի՞նչ բոցեր բօրբոքուեցան : Գրիգոր Կեսա-  
րացոյն չէ կարելի մեղադրել նեղսրուու-  
թեամբ : Եա թէ խատախիքու մարդ լինէր,  
նորընծայի պատարագի ժամանակը կ'անէր  
խատասրութիւն, բայց չարաւ . ուրեմն  
նա համբերող մարդ էր : Նիկոլ ինքը հա-  
սուց դործը այն աստիճան, որ Գրիգոր  
եպիսկոպոսի համբերութեան թելը միջա-  
հատ կտրուեցաւ, և նա իւր վշտացած ի-  
րաւոները ձեռքը առաւ՝ միայն Նիկոլի յան-  
դգնութիւնը սանձահարելու համար, որ  
աւելի քան դյավին անզգամութիւններ չա-  
նէ : Այս մէկ հոգևոր գեղ էր :

Յաւակէտ Նիկոլը այն նզօվքը յանգդնու-  
թեամբ քանի տեղ շըզրեց, բայց Հայերը

Հոգենոր իրաւաբանութեան քան զնա աւելի  
հմտութ լինելով սկսան խորշիլ Նիկոլէն,  
և ամենեքեան Նիկոլին նզովուած էին ձա-  
նացում : Շատն-էլ վախենալով, զարհու-  
րելով, սարսափելով այն ծեր եպիսկոպոսի  
երկինքէն կանչած կայծակներու կրակէն և  
նորա դառնակսկիծ հետևանքներէն՝ այն  
բանադրանքի և Նիկոլի սնսաստութեան  
համար գրեր հասուցին Էջմիածին և Մով-  
սէս Կաթողիկոսին իմացուցին այս ցաւալի  
և զգուշալի անցքերը : Եւ Գրիգոր Կեսա-  
րացին-էլ, որ ինքը եպիսկոպոս գոլով բա-  
նադրել էր եպիսկոպոսի, պարտաւոր էր  
Հայրապետին իմացում տալ, Վալաքիայէն  
մանրամասն իմացուց Կաթողիկոսին Նի-  
կոլի ամեն անկանոն արարմունքը, ստորա-  
գրելով նորա ընթացքը ձեռնադրութինէն  
մինչև իւր Կամենիցայէն արտասահմանուիլը :

Մովսէս Կաթողիկոսը, որ աչքով տես-  
նում էր Հայաստանի տակնուվրաց լինելը,  
և Հայոց ազգի՝ իրանց Հայրենիքի մէջ ան-  
հնարին տառապանքներ կրելը, երբ որ լը-  
սեց թէ Լեհաստանի Հայերն-էլ ընկել են  
գայլ-Նիկոլի ձանկը և գիշատվում են՝  
կամեցաւ այդ հրդեհի առաջքը տռնուլ,  
կոնդակ գրեց Նիկոլին և հրամայեց, որ

նա իւր եպիսկոպոսական պաշտօնը առժամանակ չըկատարէ, մինչև որ նորա դատաստանը տեսնուի, որովհետեւ «բանադրած եպիսկոպոսը չէ՝ կարող գործ կատարել»:  
Այլ ով սոսկալի յանդգնութեան. Նիկոլ կաթողիկոսի կոնդակը թաքցրուց: Սակայն կարող է քաղաքը թագչիլ, որ ի վերայ լերին կայցէ: Ճողովուրդը՝ որ իմացել էր և գիտէր կաթողիկոսի կոնդակի բանը, տեսնելով Նիկոլի անկարգութիւնն ու անհնատվանդութիւնը կաթողիկոսի դէմ՝ գայթակղվում էր և ընդ ակամք էր մտիկ տալիս նրան: Եւ ի՞նչպէս էր կարող այլ կերպ անել, երբ որ նա ոչ եկեղեցւոց պատիւն էր պահում, ոչ եպիսկոպոսի, ոչ քահանայի և ոչ ընդհանրական Քահանայապետի:

Ճողովուրդներից ոմանք, որոնք որ չէին կամենում թէ Հոյոց Եկեղեցին և եկեղեցականք օտար աղդաց բամբասանքի տակը ընկնին, թէպէտ և չէին սիրում Նիկոլին, բայց և չէին ուզում նորա շափաղանց յուսահատութիւնը և կատաղութիւնը՝ յորդորեցին Նիկոլին, որ երթայ Գրիգոր կեսարացու մօտ և նրամէն առնու թողութիւն և կապից արձակումն,

որ կարելի է թէ՝ նա-էլ միջնորդութիւն  
անէ Կաթողիկոսի առջև, և Կաթողիկոսը  
արձակէ նրան Եպիսկոպոսութիւնը կատա-  
րել: Այս մէկ այնպիսի միջապահման ճա-  
նապարհ էր, որ միայն խնամնութ Հայկազանց  
սիրութ կարող էր թելադրել այն զառա-  
ծեալ հոգւոյն: Նիկոլ պատճառ բերելով  
իւր չքաւորութիւնը և ճանապարհի ծա-  
խուց համար դրամ շունենալը՝ կամ նում  
էր հրաժարուիլ այս ճանփորդութենէն:  
Բայց Հայերը, որ ամեն տեղ իրանց բարե-  
հոգութիւնը արել են, խնացելով իրանց  
առաջնորդ դրած մարդուն, և միտք բերե-  
լով նախնեաց առածը, թէ և Առուտ ասողի  
հետ մինչի դատաստանի դուռը պէտք է  
երթալ, շուտով իրանց մէջէն ժողովեցին  
երեք հազար դահեկան և տուին Նիկոլին,  
որ երթաց: Այսքան փողը ոչ թէ Նիկո-  
լին բաւական էր երթալ գալու, այլև կա-  
րող էր նա իւր ճանապարհորդութիւնը կա-  
տարել իւր Եպիսկոպոսական աստիճանի  
վայելուչ շքեզութեամբ: Հայոց ազգ, այս քո  
բարեսրտութեան ապացոյցն է, դու ես միայն  
ժողովուրդ ասուելու արժանաւոր ազգ, դու  
միայն դիտես անողջանալի վիրաց դեղյար-  
մարեցնել:

Ընձարացած մնալով՝ Նիկոլ առաջ ճանփու ծախալը, և վեճակէն դուրս եկաւ. բայց երբ որ եկաւ Կոնստանտինուազօլիս և տեսաւ, որ Գրիգոր Կեսարացին այն տեղ չէ, այլ դնացել է Պրուսսա՝ ինքն-էլ նորա յետնէն գնաց մինչի Պրուսսա: —

Պրուսսայումը Գրիգոր Կեսարացոյ տեղ՝ Հանդիսեցաւ Նիկոլին խարբերդցի Արիստակէս վարդապետը, որ այն օրերը եկել էր Պրուսսա, բայց Գրիգոր Կեսարացու դէմ ունէր Հակառակութիւն՝ նորա պատրիարքութեան օրերից սկսած: Երբ որ խմացաւ Արիստակէս վարդապետը թէ՝ Նիկոլ այն սկառճառաւ է թողել իւր վիճակը և երկրէ երկիր ման է գալիս, որ Գրիգոր Կեսարացուն գտնէ և նրամէն թողութիւն ուզէ, կամեցաւ ճանաչել Նիկոլի խղճմը-տանքի շափը, հոգւոյ որպիսութիւնը, և համողումը և մոքի գաղափարներու ուղղութիւնը, թէ արդեօք ուզիդ սրտէ և ուզում այն թողութիւնը՝ գիտակցութեամբ հոգւոյ և խղճմանքի և մասց, թէ միայն ժողովրդեան աշքը կապելու համար, սկսուածրատը շոշափմէլ: Դուք է, առաց, քո երթալը, նախ այն պատճառաւ որ՝ դու յանցանք շունիս, երկրորդ որ՝ դու-էլ նոյն-

պէս եպիսկոպոս ես, ինչպէս որ նա. և եր-  
րորդ՝ Գրիգոր եպիսկոպոսը չունէր իրա-  
ւունք քո վիճակի մէջ տնօրէնութիւններ  
անել, և մանաւանդ՝ բանադրանք դնել  
քեզ վերայ. ուրեմն, առաց, եթէ կամե-  
նում ես խղճմտանքդ անդորրացնել ես ել  
կարող եմ քեզ արձակումն տալ <sup>“:</sup> >

Եթէ Նիկոլ լինէր տեղեակ Սուրբ Գը-  
րոց և հասունացած լինէր բարոյական աս-  
տուածաբանութեան մէջ, կը հասկանար թէ՝  
ինչ իշխանութիւն է եպիսկոպոսութիւնը,  
որ Պողոսի խօսքի զօրութեամբ՝ հրեշտակ-  
ներուն-էլ կարէ լինել զգուշալի. և աւելի  
միտ կ'առնուր սուրբ ժողովներու այն կա-  
նոնի իմաստը, որով որ մէկ քահանայի  
կապեալը չէ կարող արձակել ուրիշ քահա-  
նայ, թող թէ եպիսկոպոսի կապածը:

Նիկոլ Արիստակէս վարդապետի առա-  
ջարկութիւնները լսելն յետ՝ աւելի սկար-  
տաւոր էր փութալ կամ Գրիգոր եպիսկո-  
պոսի մօտ, կամ Մովսէս կաթողիկոսի, որ  
աշխարքին ցոյց տար թէ ոչ եթէ միայն  
անունով եպիսկոպոս է դառնել, այլ և ար-  
դեամբք, և զգեցել է եպիսկոպոսական հո-  
գին. և հնազանդվելով ազգային եկեղե-  
ցական իրաւաբանութեան՝ հնազանդեցը-

ներ իւր իշխանութեան այն ազգը, որ դեռ  
նորա վրայ մտիկ էր անում ինչպէս մէկ  
օտարածնունդ վարձկանի վրայ : Նիկոլի  
որոումը չըկար դղջումն: Այն բարի խոր-  
հուրդները, որ տնկել էին Հայերը նորա  
սրտի մէջ, նորա հոգւոյ մէջ, խորագոյն  
արմատ շունէին . Արիստակէս վարդապետի  
խօսքերը դառան նորա համար փորձաքար-  
աշխարք ճանաչեց, որ Նիկոլը Հայաստա-  
նեայց եկեղեցւոյ հարազատ որդի չէ, և այն  
եկեղեցւոյ սուրբ աւանդներու պահող չէ:  
Նիկոլ իւր գէմ եղեալ ճանապարհէն յետ  
մնաց : Նիկոլ Պրուսսայէն մէկ գիր դրեց  
Գրիգոր Կեսարացուն թէ՝ ուղում էի գալ  
քեզ մօտ և արձակումն խնդրել . բայց  
ճանապարհին հիւանդացայ և չեմ կարող  
այլ ևս շարունակել իմ ճանապարհորդու-  
թիւնը . վասն որոյ աղաջում եմ քեզ, որ  
ինձ թողութիւն շնորհես գրով, և ժողո-  
վրդեան ևս յորդորես գրով, որ չունենան  
խղճահարութիւն, և ես երբ որ առողջա-  
նամ՝ միամիտ յետ կըդառնամ իմ վիճակս:  
Այարեմիտ էր Գրիգոր Կեսարացին, բայց  
ո՛չ թեթևամիտ . արդարութեամբ վարուե-  
ցաւ և ո՛չ գիւրահաւանութեամբ . ինչպէս  
որ եկեղեցւոյ անարդութեան համար անա-

շառ էր գտնուել, այժմ-էլ զղջացեալ յան-  
ցաւորի դէմ զթութիւն ցոյց տուեց: Ան-  
կառկած սկարզմութեամբ, աղառնոյ միա-  
մութեամբ, հաւատաց Նիկոլի խօսքե-  
րուն. և ինչպէս էր կարող ընհատալ,  
ինչ էր առարկան: Քրիստոսի պատուէրը  
աչքի առջեր ունենալով, որ ասել էր,  
«Եթէ եղբայր քո մեղիցէ, և զղջացի, և  
ասիցէ՝ դառնամ», թող նմա»: Գրիգոր Կե-  
սարացին ունէր իրաւունք թողութիւն շը-  
նորհել թէութեամբ, այսինքն՝ եթէ իրաւի  
հիւանդ եւ, և չես կարող գալ: Բայց նա  
Նիկոլի խօսքերէն խարուեցաւ, հաւատաց  
նորա փաստերան և կարծեց, որ Նիկոլ  
իրաւ մահուան դրանն է. նա նորա հոգ-  
ւոյ թշնամին չէր. նա մէկ օր-էլ ուղեցած  
չէր, որ Նիկոլ սկսերեն կանգնի ահեղ դա-  
տաստանումը. եթէ նա ուղենար Նիկոլի  
հոգւոյ կորուսոր՝ թոյլ կուսար, որ իւր  
գործը կորցնեն իրան: Ես ինչպէս որ ու-  
զում էր նրան տեսնել եկեղեցւոյ լաւ որդի,  
հաւատարիմ ծառաց, ազնիւ սրաշտօնեաց՝  
այնպէս-էլ խնացեց նորա հոգին, որ ը-  
կանգնի տնանկ ամաչեցեալ Քրիստոսի ա-  
տեսնումը. խերցն երկու գիր դրեց ար-  
ձակման, մէկը Նիկոլի վրայ և միւսը ժո-

զովրդեան անուամբը, և երկու մեռէլ ուղարկեց Նիկոլի ձեռքը: Նիկոլ՝ որ սպասում էր այս թղթերուն, երբ որ ստացաւ, խակոյն դարձաւ ուրախութեամբ իւր վիճակ, և ժողովրդեան սիրտը մեկ կողմէն փոքր ինչ շահեց: «Բայց սուտ մեղային՝ առտէլ թողութիւն»:

Գրիգոր եպիսկոպոսը խմացաւ այս սեղանակապուտ խարէութիւնը, և լքցուեցաւ արդար ցասմամբ. տեսաւ որ այս հովուակերպ գոյլը՝ եկեղեցւոյ սրբութեան բնաւ չէ խնայում, կամեցաւ այս որբապղծութեան յանդդնաւթիւնը ջնջել հատառուն միջոցներով. յետս կոչեց իւր առաջին՝ միամստութեամբ տուած՝ աղաւնոյ պարզմնութեամբ շնորհած թողութիւնը, և օձի խորագիտութեամբ կրկնեց բանադրութեան արժմանաւոր պատուհանը: Այս կ'անէին և նախնի Սուրբ Հարք, եթէ նոցա ժամանակն-էլ լինէր մեկ հատ Նիկոլ, և յանդդնէր այդպիսի ոճիրներու ձեռնամուխ լինել:

Այս տեղեն ընկաւ ժողովրդեան մէջ նոր ազմուկ. ուրսան Հայերը հին դարմանը քամու տալ ո՞Նիկոլ խարէութեամբ, կաշառով, առանց ժողովրդեան ընարութեան

և Հակառակ ժողովրդեան ցանկութեան ե-  
պիսկոպոս ձեռնազրուած, ժողովրդեան կա-  
մաց ընդդէմ առաջնորդ դառած և նզովք-  
ներու տակը տղմաշաղախ. և անկանոն ձեռ-  
նարկութեանց մեջ պարանոցաթաղ. վեր-  
ջապէս՝ անհնաղանդ եկեղեցւոյ գլխոյն ընդ-  
հանրական Հայրապետին<sup>ա</sup>. ժողովրդեան ա-  
տելի էր և զզուելի: Հակառակութիւնը շա-  
տացաւ:

---

ԴԱՍՏԱԿ 6.

Վովսէս Կաթողիկոսը որ 1629 թուին  
Նիկոլի վրայ արդելումն էր դրել, դեռ  
չզիտելով, որ Նիկոլը այն իւր Հայրապե-  
տական կոնգակը ոտքի տակն է գձել, և  
քան դառաջին չարագործութիւնները էլ ա-  
ւելի յանդգնութիւններ է արել և անում,  
երբ որ Կեսարացի Խաչառուս<sup>(\*)</sup> վարդա-

---

(\*) Այս Խաչառուր վարդապետ առած անձն էր արքե-  
պիսկոպոս. բայց այս տեղ նորա անունը երբեմն ,,վարդա-  
պետ” է գրած, երբեմն ,,եպիսկոպոս” է, և երբեմն ,,արք-  
եպիսկոպոս” է. որ պիտի իմացուի թէ՝ զանազան մարդիկ  
չեն, այլ մի և նոյն անձն էր: Սուրբ Եղմանի միաբա-  
նութեան սովորութիւնն է, որ եթէ մէկ կարգաւոր՝ վար-

պետին ուղարկում էր նուիրակութեամբ  
դէալ ի Յունաստան, Հրամացեց նրան, որ  
երթայ Լեհաստան-էլ և Նիկոլի դատաս-  
տանը տեսնէ, ինչպէս որ առաջին կոնդա-  
կով խօստացել էր, և մէկ հնար գտնէ ա-  
ռաջնորդին և ժողովրդեան հաշտեցնել:

Հաջատուր վարդապետը ճանապարհին  
գալով գալով հասաւ Կեսարիա, և այն  
տեղ հանդիսեցաւ Գրիգոր Կեսարացուն :  
Գրիգոր Կեսարացին մի ըստ միոջէ պատ-  
մեց Խաչատուր վարդապետին Նիկոլի ա-  
րած անկարգութիւնները, և որովհետեւ քաջ  
հասու էր Նիկոլի բնաւորութեան և ժո-  
ղովրդեան համոզմանց, ինչպէս եկեղեցւոյ  
նախապատիւ վարդապետ՝ պատուիրեց Խա-  
չատուր Նուիրակին, որ առանց քննու-  
թեան և առանց տնօրինութեան Նիկոլի  
հետ հաղորդակցութիւն չանէ, որ ժողո-  
վրդեան մէջ գայթակղութեան պատճառ-  
ները չաւելանան, և ազգի և եկեղեցւոյ  
մէջ աղմուկները չըզօրանան և պատառումը  
անկարկատելի չըդառնայ:

---

Դապետ ժամանակը ունենայ մեծ համբաւ ստացած, նա եթէ  
եպիսկոպոսութիւն-էլ սուանայ և Հայրապետական աթոռն  
էլ նատի՝ այն վարդապետ անունը չի պահպահվուից:

Այսատուր վարդապետը ունէր կաթողիկոսէն ստացած Հայրապետական կռնդակ ծայրագոյն նուիրակութեան, և առանձին պատուէր՝ որ Նիկոլի և ժողովրդեան մէջ ընկած երկարառակութեան մէկ խաղաղութիւն տալու հնար գտնէ: Ինքը գոլով մէկ խոհեմ և խաղաղասէր մարդ, երբ որ հասաւ Լէովոլիս, թէալէտ ժողովրդեան բերնէն շատ անբաստանութիւններ լսեց, շատ տըրտունջ, շատ դժկամակութիւն, բայց չըկամեցաւ ամենուն հաւատալ, այսպէս պատուէր ունէր կաթողիկոսէն: այսպէս խրատէր ստացել և Գրիգոր Կեսարացիէն-էլ: ինքը եկաւ Նիկոլի մօտ, առանձին շատ բան խօսեցաւ և սկսաւ ցոյց տալ Նիկոլին խաղաղութիւն գտնելու ճանապարհը: Այլ Նիկոլ՝ որ Աստուծոյ երկիւղը հանելէր սրտէն և մարդկան ամօթը հեռացրելէր երեսէն, վորսանակ խաչատուր վարդապետի խորհուրդները և բարեկամական խրատները յարգելու՝ գլուխն էր շարժում, նորա խօսքերը արհամարհում էր և իրա հետ-էլ անարդանօք էր վարվում: >

Ի՞նչ էր Նիկոլի այսպիսի անձնապատճանութեան պատճառը, ի՞նչ օգնութեան էր վստահացած, ո՞վ էր կարող նրան հօգևոր

դատաստանէն ազատելը Մի միայն ուրացութիւնը։ Նա մտքի մէջ դրել էր՝ իւր առաջնորդութիւնը բռնաւորութեամբ ձեռքին պահելու համար, և ինքնագլուխ ժողովրդեան վրայ բռնակալութիւն անելու համար՝ ո՛չ թէ միայն ամեն անկարգութիւնը բանեցնել, այլ և ժողովուրդին զոհել, եկեղեցին քանդել, ԱՅՀաստանի Հայութու կրօնը փոխել դէպ և տանուտէրական ազգի լատինագաւանութիւնը և այսպէս դաւրս գալ իրան Եպիսկոպոսութիւն տուազ կաթողիկոսի իշխանութեան տակէն։

Այզուիթականք՝ որ կամենում էին Հռոմայ Փափի իշխանութիւնը համաշխարհական շինել, Նիկոլո համար մէկ ասղաստանարան էին, Երբ-էլ որ ուղենար՝ պիտի գտնէր նոցա մէջ իւր դիտաւորութեան օդնական և ձեռնտու։ Այս կրօնաւորական կարգը արդէն ստացել էր մեծ մեծ յաղթանակներ, արդէն նոցա ձեռքով շատ ազգեր և ազինք դառել էին Հռոմայ Փափին Երկրպագու։

Խանէ-Շահէ-Ալին Քոհաննու տեսլեան բացատրութեան մէջ՝ թէ Հռոմէական իշխանութեան և թէ Եզրուիթաց կարգի վրայ ակնարկութիւններ է անում,

և այն խօսքերը ցոյց են տալիս նորա հայեցուածքը:

Անկը թէպէտ և չենք հաղորդակից այն միտքերուն, բոյց իդնատիս Լոյիոլացի հետևողքը, որ Լիւթէրէն յետոյ դուրս եկան և նորա դրած խոյը ոկտան դարմանել Հռոմայ քահանայապետութեան մէջ նկատելու արժանի հանգամանքներ են: Սոքաերկունպատակ ունեին, այն է՝ կրօնանորոդութեան ճանապարհը փակել և Փափի իշխանութիւնը տարածել: Սոքա չեին զանազանութիւն անում ոչ միջոցներու և ոչ հնարներու մէջ, միայն դէսի իրանց նպատակն էին վազում. ամենեքեան ով որ մէկ անգամ ընդուներ Փափի գահերիցութիւնը՝ Եղուիթականաց ընկեր էր. բարոյականութեան, բարեգործութեան, եղեռնագործութեան, անառակութեան մէջ խորութիւն ընկար. ելուզակ, սրիկաց, մարդադա՛ ընդունելի էր այն ընկերութեան մէջ, եթէ միայն յարմար գործի լիներ Հռոմայ վառամոլութեան:

Եղուիթները միթէ չեին տեսնում Նիկոլի արարմանքի վախճանը. նրան նոքաւ չեին դրդում, և նա-էլ չը նրանց վստահացած՝ մէկ յանդզնութիւնէն դէսի ի միսն վազում,

որ մէկ անզգամութիւնից-էլ յետ չէր կան  
դնում:

Այսատուր վարդապետը այն դիտաւո-  
րութեամբ էր եկել, որ իւր Հայրապետի  
ազգասիրական նալատակը դիւրացնէ. Կա-  
թողիկոսի նալատակն-էլ այն էր, որ իւր  
նախորդի վրիտանքը ծածկէ. և անարժան  
եալիսկոսոսի անարժան գործերը թեթև  
խրատներով ուղղելով՝ շարագործին իւր  
շար դործքերէն հեռացնէ. և ժողովրդեան  
որտէն նոյս վատ յիշատակները հանէ:  
Կաթողիկոսը հայր էր հասարակաց, և Նի-  
կոլի անձին մէջ տեսնում էր մէկ սխալա-  
կան պաշտօնեայ, որոյ ուղղութիւն ածելը՝  
իւր սեպուհ պարտառութիւն էր համա-  
րում և իւր հօտի հետ միաւորելը՝ գեռ  
հկեղեցւոյ անհրաժեշտ կարիք:

Եւ Նիկոլի կարծիքը այնպէս չէր : Նա  
կարծում էր՝ կաթողիկոսը նորա վրայ  
նայում է անաշառ՝ ինչպէս մէկ գօսացեալ  
անդամոյ վրայ, և նորան յանցաւոր է արել  
իւր մոքումը դեռ քննութենէն առաջ :  
Եւ որովհեան իւր յանցանքն իրան առելի  
յայտնի էր՝ խոյս էր տալիս քննութենէն և  
հոգեւոր գատառատանէն . տեսնում էր, որ  
եղուիթականք ամեն շարագործաց պաշտ-

սղան են և ապաստանի, լաւ էր համարում  
նոցա իշխանութեան տակը մնալ, քան  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետի. յոյս  
չունէր իւր դատաստանի մէջ արդարանալ.  
կարծում էր թէ ի դատաստանէ իւրմէ ել-  
ցէ դատապարտեալ և զայցելութիւն նորա  
զայն՝ այլ տարցի: Զէր իմանում նա և իւր  
հօր կաթողիկոսի միտքը, որ նա հոգւով  
ցանկանում էր նորա այնքան ժամանակ-  
վան պարականոն ընթացքը քօղարկել, որ  
ապադայ չարեաց առաջքը կտրուին: Խա-  
շատուր վարդապետը նորա աչքին երևում  
էր ինչպէս մէկ հրեշտակ պատուհասի. նը-  
րամէն սկսաւ երկիւղ կրել, և իւր երկիւղը  
ծածկելու համար՝ սկսաւ ցոյց տալ դէպ առ  
նա արհամարհանք և անարդուին յանդուգն  
ժպրհութիւն: (Ինչի՞ ես որոտում: —Վա-  
խեցնելու պատճառաւ: —Ինչի՞ ես ապա  
սրչդ պահում: —Վախենալուս պատճառաւ):

Խաչտուր վտրդապետը երկու առապա-  
րի մէջ էր, երկու թրի մէջ էր մնացել.  
մէկ կողմէն ժողովրդեան գժդ մնութիւնը,  
միւս կողմէն Նիկոլի անկարգութիւնը: Եթէ  
նա կամենար միջասահման ճանապարհ  
բռնել՝ պիտի ժողովրդեան գայթակղու-  
թեան պատճառ դառնար, սիսի ամե-

նեցուն ասել տար թէ՝ Խաչատուր  
վարդապետնէլ Նիկոլի համաձայն ,  
Նիկոլի համախոհ , Հայրապետական իշ-  
խանութեան ոտնհար է . այնուհետև Խա-  
չատուր վարդապետը չէր կարող ժողո-  
վագեան սիրտը շահել . և Նիկոլի օգուտը  
այն էր, որ Խաչատուր վարդապետը ժողո-  
վագեան առջել ցոյց տար իւր իրաւունքը,  
որ Հայրապետական կոնդակաւ ձեռին ու-  
նէր, և Նիկոլը, թէև առ երեսս, հնազանդ-  
վէր. ժողովուրդը երբ որ տեսնէր թէ՝ Նի-  
կոլը հնազանդութիւն է ցոյց տալիս եկե-  
ղիցւոյ գլխոյն և նորա պատկերին՝ զինա-  
թափ կը լինէր. նորա անձին մէջ տեսնելով  
զզացեալ յանցաւոր՝ կը խնայէր և կը հաշ-  
տուէր : Նիկոլի համախոհք թէ՝ և նրան  
հարիւր անգամ գրգռէին, սակայն բազմու-  
թեան մէջէն դուրս կուգային այնպիսի  
մարդիկ , որ խաղաղութիւնը նախընաիր  
համարելով՝ քան զկորիւր և տարաձայնու-  
թիւնը , նոցա այլ կերպ կը լուեցնէին , և  
Խաչատուր վարդապետին այլ կերպ կու-  
տային առիթ և աեղի ասել ժողովրդեան,  
ու ել ի՞նչ էք ուզում , ահա Նիկոլը Սոզո-  
սէն Պողոս դառաւ , Հայրապետական իշխա-  
նութեան և Եջմիածնի իրաւասութեան

Հնազանդէ, Հայոց եկեղեցւոյ ամեն կարգե-  
րուն-էլ այսուհետեւ հաւատարիմ կը լինի,  
և անցեալներու համար-էլ կ'ունենայ հոգ  
ցոյց տալ արժանաւոր ապաշխարութեան  
պտուղ . ուրեմն դուք-էլ Հնազանդուեցէք,  
և նրան թեւ ու թիկունք դառէք , որ նա  
էլ ինչ որ անդիսութեամբ ծռել է՝ կարո-  
ղանայ հանդարտութեամբ ուղղել , որ դուք  
էլ , նա-էլ հանդիսու գտանէք և միամը-  
տութեամբ ձեր կրօնը սկաշտէք, որովհետեւ  
Աստուած խաղաղութեան Աստուած է , և  
ոչ կըռուի և անհամաձայնութեան:

Եյլ Նիկոլ այս խօսքերէն ոչինչ-էլ միտ-  
քը չըրերեց , և թէ միտքն-էլ բերեց՝ սա-  
կայն չըկամեցաւ կատարել . նա կամենում  
էք ցոյց տալ , որ ոչ ժողովուրդէն սիտի  
կախումն ունենայ , ոչ Էջմիածնէն , և  
ոչ Հայրապետէն , այլ միայն սիտի ջանայ՝  
Եղուիթաց բռնութեամբ ժողովրդեան գըլ-  
խին գլուխ կոտրել , սիտի ժողովրդեան  
նուաճէ և հոգեսոր իշխանութիւնը նշկահէ .  
պիտի այնպէս առաջնորդութիւն անէ , ինչ-  
պէս որ Եղուիթականք նոր սովորութիւն  
էին արել , եպիսկոպոսին անհնազանդու-  
թիւն անել , Փափին չըլսել , և թագա-  
ւորներուն ևս վախեցնել , միայն իրանց

կարգապետներու կամքին հպատակելով, որ թէ մէկ մարդ նրանց կամքին չըզոհէ իւր տունը, տեղը, ընտանիքը, զաւակունքը, ստացուածքը, կեանքը՝ իսկոյն ինչ վեպշեայի մատնէ և հրովարէ:

Հայոց Հասարակութիւնը ի հեռուստ տեսնում էր այս ամենը. տեսնում էր, որ Նիկոլը մէկ այնպիսի ամեհի անձն է, որ բնաւ Քրիստոսի պատկերի հեղութիւնը և խոնարհութիւնը իւր անձին վրայ ցոյց տալու չէ, բնաւ իրանց Համար անձնադիր հովիւր դառնալու չէ. աչքերը դրել էին Հայրապետական օգնութեան. ուղում էին որ Խաչառուր վարդապետը նրան փոքր ինչ ճանփու բերէ. ցանկանում էին տեսնել Նիկոլին փոքր ինչ Հայոց կարգաւորի ձեւ մտած. ակնապիշ սպասում էին, որ Նիկոլ ասէ թէ՝ «Ես ուղում եմ իմ ժողովրդեան Հայր լինել, և ո՛չ դահիճ», որ նրանք-էլ նրան որդիական ջերմեռանդութեամբ ընդունէին, մոռանային ամեն անցեալները, որով արդէն ձանձրացել էին. Հսկասում էին կիրակի օրվան, երբ որ երկու եպիսկոպոսունք եկեղեցւոյ մէջ ժողովրդեան Համար Հանգիստ, սէր և խաղաղութիւն մտածելով՝ առաջնորդութեան և առաջնոր-

գելոց մէջ մէկ հոգեսոր շաղկառակ կըհաս-  
տառեն։

Այսկառ հասաւ այն բազմաց ցանկալի  
կիւրակէն։ Բայց ո՞չ ոք ըստիտէր, թէ Նի-  
կոլը ի՞նչ ունէր իւր մտքումը։ Եղուիթա-  
կանք նորա դլխումը դրեւ Էին, որ ևթէ  
յայտնի ապստամբուի Էջմիածնէն, դուրս  
դայ Հայոց Կաթողիկոսի Հայրապետական  
իշխանութեան տակէն, և մտնի Փափիի ձեռ-  
քի տակը, ժողովուրդին դարձուցանէ  
Հռոմեադաւան Կաթողիկաց կրօնը և փոխէ  
Հայաստանեայց Եկեղեցւոյ ծէսերը ու սովո-  
րութիւնները՝ մեծ փառքի և մեծ բաղ-  
դաւորութեան պիտի հանդիսի։ Արդէն  
Նիկոլը իրա մտքումը կարծում էր իրան  
Լատինացոց հզօր եպիսկոպոսներու մէկը,  
և Խաչատուր վարդապետին կարծում էր  
մէկ այնպէս սանդուխու, որ նրա դլխին  
կոխելով՝ պիտի ժողովրդեան վրայ թագա-  
ւորէ։ Բայց այն չէր բերում միտքը թէ՝ կարե-  
լի է որ յաջողէ նրան Խաչատուր վարդա-  
պետին անպատճիւ անելը։ կարելի է որ  
յաջողէ նրան Եկեղեցեաց և նոցա Ճոխու-  
թեան և Հարստութեան տէր դառնալը։  
կարելի է որ յաջողի նրան միայնակ մէկ  
քանի քահանաներու հետ կրօնափոխ լի-

նել, ծիսափոխութիւն մտցնել եկեղեցւոյ  
մէջ. բայց ժողովրդեան՝ իւր կամքին հնա-  
զանդեցնելը, ծառայեցնելը՝ շատ գժուա-  
րութիւն սկիտի ունենայ: Եթէ ինքը լինէր  
իսկական Հայ, Հարազատ Հայ՝ կրծանաչէր  
Հայերու բնաւորութիւնն-էլ: Բայց ովկ գիտէ  
թէ նրան ինչի՞ էին կոչում Թռչոսովնէ,  
կարելի է թէ կամ Հայրը, կամ մայրը,  
կամ պապը, կամ տատը էին Լեհացգի  
կամ Հրէայ, կամ Բոհեմիացի բօշայ, և նա  
այնպէս թոյլ, կրօնափոխ, գաղջ կրօնա-  
պահ գերդաստանի մէջ էր աչք բաց ա-  
րել և չէր իմանում, որ կատարեալ Հայր՝  
իւր աղգութեան և իւր կրօնի Համար  
սկատրաստ է գլուխը ջարդել տալով մեկ  
կաղինի չափ շինել, քան թէ եկեղեցուն  
անհաւաստարմութիւն անել, և աղգութիւ-  
նը ու բանալ: չէր իմանում, որ Հարազատ  
Հայը թէ Հարիւր տարի կենայ օտարա-  
կրօններու մ.ջ, նոցա Հետ ուտէ խմէ, ընդ  
Հրէայսն լինի Հրէայ, ընդ Տեթանոս՝ լինի  
Հեթանոս, բայց երբ որ բանը հանի սյն  
տեղ, որ սկիտի իւր կրօնին և իւր Հայու-  
թեան վիատ հանի՝ ամեն զոհի Համար սկա-  
տրաստ է. կուտայ ինչքն-էլ, ստացուածքըն  
էլ, կուտայ իւր անձն-էլ, իւր կեանքն էլ:

բայց կըսպահէ իւր կրօնը և իւր աղգութիւնը:

Այս մոլորամիտ անձնախարութեամբ  
հարբած էր Նիկոլ, և երբ որ կի-  
րակի օրը եկաւ եկեղեցին: Մեր եկեղեցւոյ  
աւանդութեամբ Հանգստուն և իւղանիշնեց  
Աւետարանը պիտի կարդայ այն օրուան  
պատարագիչը .> այլ Նորաստեռնշեռվ Աւետա-  
րանը (որովհետեւ եթէ ուատարագը առա-  
ւոտեան ժամի հետ կից լինի՝ ժամարարը  
այն միջոց գնացած կըլինի զգեստաւորուե-  
լու) ում որ մեծաւորը ակնարկէ՝ նա կը-  
կարդայ, և այս ըստ մեծի մասին հիւր  
կարդաւորներուն կըհասնի: Մեծաւորը՝  
Առաջնորդն է, զկնի նորա՝ նորա տեղա-  
կալն է, կամ աւագ երէցը, կամ երիցա-  
գոյն քահանան. բայց Էջմիածնի նուիրակը՝  
Կաթողիկոսի հրամանաւ եկած, թէ Եպիս-  
կոսուս լինի և թէ վարդապետ, միշտ քան  
զսուաջնորդը բարձր է և երիցագոյն, և նո-  
րա ներկայութեան ժամանակը՝ առաջնորդը  
որպէս թէ իւր առաջնորդական իրաւունք-  
ներէն դադարած է, և սլիտի նորա ակնար-  
կութեան սպասէ. որովհետեւ Էջմիածնի նը-  
ւիրակը կամ քննիչը ոչ թէ միայն պատկեր  
է սրբազն Հայրապետի, այլև երեսփոխան

է բովանդակ սրբազնագումար քահանայա-  
պետական ժողովոյ և պատգամաւոր է  
Հուսաւորչեան Աթոռոյն, որոյ առջև պիտի  
լու ամեն հոգեոր իրաւաբանութիւն, և  
միայն նորա պատգամախօսութիւնը պիտի  
տիրապետէ՝ քանի որ նա առաջիկայ է,  
որովհետեւ նրան է տուած ամեն հոգեոր  
իշխանութեան մատակարարութիւնը՝ ինչ-  
պէս կենդանի հրովարտակ տիեզերական  
Հայրապետութեան և սրբազնաժողով միա-  
բանութեան :

Եյտ բաները Նիկոլ ինքնէլ լու գի-  
տէր. բայց որովհետեւ մոքումը զրել էր  
կոփուգրուել, որ յայտնի ասպատամբութիւն  
չանէ, երբ որ Առաք Աստվածուն երգեցին  
և ժամանակը հառաւ, որ աւետարան կար-  
դան՝ Նիկոլ հրամայեց, որ իւր վարդա-  
պետին շուրջառ տան: Բարեմիտ Խաչատուր  
վարդապետը, որ հոգւով չափ ցանկանում  
էր Հաշտութիւն տարրացնել, ցկարծեց թէ՝  
ահաւ այս է ժամանակը, որ ցոյց տայ ժողո-  
վրդեան թէ՝ Նիկոլը հնազանդ է Սուրբ  
Աթոռին և Սրբազնն Հայրապետին, և նորա  
իշխանական կոնդակին, և նորա պատկերա-  
ցուցիչ նուիրակին, որ ժողովրդեան սրտէն  
ատելութեան որոմը հանէ, և տեղը սերմա-

նէ Նիկոլի Համար կարելցութեան ցորենահատ, Համարելով թէ Նիկոլ այն պատճառսու այնպէս արաւ, որ իրան առիթ տայ իւր եղբայրսիրական ազգեցութիւնը սկսելու, Հրամայեց մէկ ուրիշ վարդապետի՝ որ Աւետարանը նա կարդայ:

Եյս այն կէտն էր, որ Նիկոլ պիտի բարեբաղզ լինէր: Եթէ Խաչատուր վարդապետի դիտաւորութիւնը Նիկոլին ոտնակոխ անելը լինէր՝ մեղադրելի էր Խաչատուր վարդապետը. բայց նորա նախընթաց և Հետևորդ գործքերը յայնի ցոյց են տալիս, որ նորա ամեն մէկ ներգործութիւնները Հայրապետական պատուիրանի վրայ Տիմոնած՝ Նիկոլի օդախի Համար էին, որ կարողանայ առաջնորդի և ժողովրդեան մէջ Համաձայնութիւն ձգել: Խաչատուր վարդապետի առաջադրած վարդապետը կամ կը կարդար այն Աւետարանը կամ ոչ. այլ Խաչատուր վարդապետը պատճառ կը տներ երեսը գարձուցանել առ ժողովուրդը և ասել. «Ահա տեսանք սրբազնն Նիկողայոս արքեպիսկոպոսի Հեղութիւնը, որ նա այնքան անկոստար հնագանդութիւն ցոյց տուեց իւր Հոգենոր ծնողին՝ սուրբ Էջմիածնի Աթոռին. ովք է սորա ոսօխը, ովք է սորա

Հակառակորդը, ես ի՞նչ որ տեսայ՝ այն  
պիտի վկացեմ, որ սրբազն Նիկողայոս  
արքեպիսկոպոսը արժանաւոր Առաջնորդ  
է, իւր կարգի պատիւը ճանաչող, իւր աս-  
տիճանի յարգը գիտցող. ուրեմն՝ եկէք  
մեղայ առէք, աջը համբուրեցէք, օրհնու-  
թիւնը առէք։

Ո՞՛Տ, այն օրուան պատարագը ի՞նչ ու-  
րախութեան տեսարան պիտի լինէք։ Աս-  
տուած և իւր Հրեշտակը չէին լինիր այն  
հանդիսարանի մէջ աներևութաբար առա-  
ջակայ։ Արդեօք այն օրուան ջերմեռանդ  
ժագավրդեան ուրախութեան արտասուքը  
չէին անուշահոտ խնկոց նման բուրէք իւր-  
եանց ծուխը անհուր բուրլառաւ ուղիղ  
Աստուածալետական Աթուոյ առջև։ Աս-  
տուած այնպիսի բոլորապտուղ ողջակէղը  
չէր ընդունիր ինչպէս Աքէլի, Եսի և Աք-  
րահամու հաճոյական զոհերը։ Բայց Նի-  
կոլի դիտաւորութիւնը այն չէր։ Նիկոլ չէր  
ուղում ոչ թէ միայն հպատակիլ էջմիածնի  
Աթուին և նորա Հայրապետական գաւա-  
զանին, այլև բնաւ չէր ուղում ցոյց տալ,  
թէ ինքը համոզուած է Հայաստանեայց Ե-  
կեղեցւոյ ճշմարտութեան մէջ։ կամ իւր  
սրտի մէջ ունի մէկ յարդ ու մեծարանք

թէ դէսլ ի պատարագը, թէ պէսլ ի քահանացական կարգը և թէ դէսլի ժողովրդեան բարի օրինակ դառնալը. նա ուզում էր ցոյց տալ թէ եկեղեցին-էլ այնպէս մէկ տեսարան է, ինչպէս որ արշաւահանդիսի կրկէսը, և ինքն-էլ մէկ այնպիսի հանդիսադիր է, ինչպէս որ մէկ բռնամարտիկ, մենամարտիկ, ըմբշտմարտիկ, կառամարտիկ կամ գօտեմարտիկ, և պէտք է այն տեղ ցոյց տայ իւր ուժը, բազկի բռնութիւնը, քաջութիւնը, և ստանայ հանդիսականաց ծափահարութիւնը: Նորա միտքի մ.ջէն վաղ էր դուրս եկել Աստուծոյ անուան յիշատակը, Քրիստոսի մարդեղութեան խորհուրդները, Հոգւոյն Սրբոյ շնորհաշխութիւնները, Խաչի պաշտօնը, Հոգեսոր կոչումնը. նա ինքն-էլ դուրս էր եկել Աստուծոյ սպասառորութենէն. նա չէր կամենում ծառայել իւր Ատեղծողին, իւր Փըրկչին և իւր փրկութեան համար արիւնը խաչափայտի վրայ նուիրողին. նորա միտքի մ.ջ Աստուծոյ տեղը նստել էր Փափր. Հրեշտակներու տեղը բռնել էին Եղուիթեկանք. քահանացալայել մտածութիւններու տեղ զօրացել էին փառասիրութիւնը և արծաթասիրութիւնը. Քրիստոնէական հե-

զութեան տեղ տիրապետել էր ինկվիզի-  
ցիայի հրասլաշութիւնը . նա պատճառ  
էր պտրում, որ հրասլարակաւ կռիւ սկսի  
Էջմիածնի գէմ . նա պիտի Սուրբ Աթոռի  
նուիրակին անարդէր, որ Սուրբ Աթոռը  
անարդուած լինէր. նա սլիտի Կաթողիկոսի  
պատկերը ուժի տակ ձգէր, որ Կաթողի-  
կոսը և իւր Հայրապետական իշխանութիւ-  
նը ունակոխ եղած լինէր . նա ի սրտէ ու-  
րացել էր՝ ոչ թէ միայն Սուրբ Էջմիածնի-  
նը, այլ և նորա բաղմաշխատ կերտողին՝  
Սուրբ Գրիգոր Լուսաւորչին և Սուրբ Թա-  
դէոս և Բարդողիմէոս առաքեալներուն, և  
Էջմիածնի հիմքը ուկի ուռամբ հաստա-  
տող Միածնին Յիսուսին. նոցա ամենու տեղ  
բաղմեցրել էր իւր հոգւոյ մէջ Հոռմայ քա-  
հանայապետին և Եղուիթականոց վահմա-  
կը, որ նրան ուկեղէն բլուրներ էին խո-  
տանում :

Ինչպէս որ Խաչառուր վարդապետն էր  
Համարել այն Աւետարան կարդալու դի-  
պուածը քաջայարմար ժամանակ ժողովք-  
դեան և առաջնորդի մէջ խաղաղութիւն  
սերմանելու, և երկուսին միասին անլուծա-  
նելի զօդիւ միաւորելու . նոյնպէս և Նի-  
կու տեսաւ՝ որ քան դայն էլ բարեգէտ միջոց

շի՝ գտնիր հանդիսավէս իւր և Սուրբ Էջմիածնի մէջ անկարկատելի պատառուած գձելու համար, և իւր գլուխը Հայրապետական իշխանութեան հովանաւորութենէն հանելու, Հայաստանեայց Եկեղեցիէն վտարանջելու, և իրան յանձնած բանաւոր հօտը գայլերու բերսն մատնելու և անառատի մէջ վարատելու: Անօրինակ յանդգնութեամբ սլատուեց Քրիստոսի անարատ Հօրսին քողը. լրբարար առաջ վարեց իւր վարդապետին, որ շուրջառը նա առնու վրէն, և Աւետարանը նա կարդայ: Աւետարանը կարդայ նա, որ սրիկայի ձեռքի գործի է դառնում իւր ծնողին կարելէր խոցելու:

«Փաղցրահոգի Խաչատուր վարդապետը դառնացաւ. Նիկոլի ապարասան ապիրատութիւնը նրան խոր խոցեց. կամեցաւ հոգեոր զինուք նրա խելքը գլխին բերել. ուզեց ցոյց տալ, որ գիտէ անզգամին խըրատել և սանձել. յիշեց Պողոսի՝ Տիտոսին տուած պատուէրը, որ տաել էր, «Զայս խօսեաց և միսիթարեաւ և յանդիմանեաւ ամենայն սաստիւք, զի մի՛ ոք իցէ՝ որ զքեզ արհամարհիցէ»: Տեսաւ որ՝ Նիկոլ Հեղութեան յարգը չըդիտէ. տեսաւ որ՝ Նիկոլ քաղցրութեան ճանփով ուզգութիւն գալու.

Ամսոք չունի . յօժարեցաւ սաստել , այնպէս  
վարուիլ , որ Նիկոլ կարողանայ զգաստա-  
նալ , և թոյլուռութիւն չըգտնէ աւելի  
մեծ չարեաց մատարերելու . երեսը դարձուց  
դէպ-ի ժողովուրդը : Այն մարդը որ մէկ  
վայրկեան առաջ՝ նոյն երես դարձնելով  
պիտի Նիկոլին և Եկեղեցւոյն պսակէր , և  
Աստուած և նորա հրեշտակք այն հարսա-  
նեաց մէջ կոչնական լինէին , և ինքն տըրտ-  
մականաց հրաւիրատու՝ այժմ բռնադատե-  
ցաւ ասել ցաւադին . ոԱնիծեալ լինի այն  
մարդը , ով որ Նիկոլի յետել կըկանգնի  
և ծունը կըդնէ : >

Եյս մէկ վայրկենական բարկութեան  
պայթիւն չէր . այս մէկ նեղսրտութեան թա-  
փոյ բերմունք չէր . Նիկոլի ծայրածեալ ժը-  
սլրհութիւնը դուրս հրաւիրեց այս անէծքը .  
ապա թէ ոչ հեղահամբոյր խաշատուր վար-  
դապետը անիծարերան մարդ չէր . եթէ  
նորա տեղը լինէր կամ Սուրբն Յոհան Աս-  
կերերան , կամ Սուրբն Ամբրոսիոս , կամ  
Սուրբն Յուսիկ , կամ Մեծն Ներսէս՝ նոքա-  
էլ այսպէս կ'անէին . Նիկոլի դառածուիլը ,  
և յաւակնութեան ծայրը հտանիլն էր պա-  
հանջում այս , ևս առաւել Նիկոլի օգուտը ,  
և նորա խոր ժաղովրդեան հետ հաշոռելու

կարիքն էր անշուշտ գործում այս սլայմանը, որն որ խաչատուր վարդապետը միշտ ունէր իւր առջև Սրբազան Վեհապետի Հրամանաց զօրութեամբ՝ ինչպէս մէկ ընեռական աստղ :

Առւրբ Եջմիածնի նուիրակը, Սրբազան Հայրապետի կոնդակով եօթնալոյս միւռոն բերող Հեղահոգի և բարեհամբոյր կարգաւորը՝ Հայոց եկեղեցիէն գեռ ևս պատարագի խորհուրդը ըսկաած, «Նորաստեղծեալի Աւետարանը» շըլսաած, սիրուը արեամբ լցուած, աչքերը արտասուօք տոգորուած՝ դուրս եկաւ: Ինչ եղան ժողովուրդը: Ինչ հարուած էր ողորմելի Հայերու ակնկալութեան: Ինչ էին սպասում տեսնել այնօրվան օրը և ինչ տեսան: Նորա փափագում էին, որ մէկ բոսկէ առաջ ընկնին իրանց առաջնորդի գիրկը, միանան իրանց հովիւի հետ, յանկարծ տեսան որ՝ այն հռվիւ կարծուածը հանեց իւր դիմայլակը և երևեցաւ իւր գաղանական դայլութեան սպատկերի մէջ: Ճեթէ Գրիգոր Կեսարացին, կամ Խաչատուր վարդապետը ասէին ժողովրդեան, թէ Նիկոլը այսպէս է կամ այնպէս է, ժողովուրդը գեռ ունէր իրաւունք կաակածիլ, ասելով՝ ոնք կու կարգաւորք են, մէկ

միկու դէմ կագ ու կռիւ են անումն։ Բայց  
այս տեղ ժողովուրդը ինքը տեսաւ, որ Նի-  
կոլ սուտ-եսլիակոսուր յայտնի վասրանջեց  
Սուրբ Աթոռէն-էլ, նորա սրբազն գահա-  
կալէն-էլ։ Կոտրեց Լուսաւորչի հովուական  
ցուսը։ Տեսան խղճալի ժողովրդականք, որ  
այն՝ աղուէսութեամբ անբիծ հարսի ծոցը  
մտնողը՝ սկսաւ բորենոյ նման իւր ծնողի  
ծիծերը գիշատել։ Ո՛չ այնքան խաչատուր  
վարդապետի նղովքը, որքան խղճալի կիր-  
ովարանքը, արտասունքով թրջուած երեսը  
և դառնաղէտ հեկեկանքը, նորա վեղարի  
անարդութիւնը, կարգի և կոշման ոտնա-  
կոխ լինելը և Նիկոլի Սուրբ Էջմիածնի  
դէմ արած անպատմելի ժպրհութիւնը,  
նորա նուիրակի դէմ գործած չափազանց  
յանգգնութիւնը, նորա սկսողամաւորի և  
երեսփոխանի դէմ առաջացուցած այս ա-  
նարդութիւնը և անպատութիւնը զգալի  
եղան ժողովուրդին և գրգռեցին նոցա ար-  
դար ցասումն։ վասն որայ և երբ խաչա-  
տուր վարդապետը դուրս եկաւ եկեղեցիէն,  
ժողովուրդն-էլ, ինչպէս հօտ հովիւի ետևէն,  
դուրս թափեցան, և մնաց ժամը մէնակ  
Նիկոլի և իւր համախոհների մէկ քանիսի  
համար, յրովհետև Նիկոլի բարեկամներու-

մէջէն-էլ շատերը, երբ որ տեսան՝ Նիկոլին  
անպատճռուակ, աչքերը բացին, յուսահա-  
տուեցան և երեսները դարձուցին նրամէն:

---

ԳԼՈՒԽ 7.

Երդեօք Հայերը միտքերը բերին «գորտե-  
րու թագաւոր ուղեցածը», և իրանց առաջ-  
նորդ ունենանք ասելուն Համեմատեցին.  
արդեօք Աստուածաշունչ պատմութիւնը  
կարդացողները ասացին թէ այս Նիկոլը  
Սիկիմացոց թագաւոր եղբայրակոտոր Արի-  
մելէքի ճանփան բռնեց, վասն որոյ և դըժ-  
նիկի նման կրակը իւր տակէն անսպակաս  
անելով պիտի Նիրանանու մայրերն-էլ այրէ:  
Կրակը արդէն բորբոքուեցաւ և բոցը ցո-  
լացաւ. էլ ըկարողացան Հայոց իշխանք  
Համբերել Նիկոլի անզդամութեան: Նի-  
կոլի՝ Սուրբ Էջմիածնի գէմ ցոյց տուած  
յաւակնութիւնը նոցա սրտէն Հանեց ամեն  
ապագայ խաղաղութեան յոյսն ու ակնկա-  
լութիւնը. իմացան՝ որ Նիկոլ այնուհետեւ  
ուղղութիւն ստանալու չէ. ամաչեցան իրանց  
իշխան անունէն, պատկառեցան իրանց ազ-  
գապետ կոչումնէն. վախուեցան որ՝ չըլինի

թէ տէրութիւնը ժամանակաւ դատախազ  
լինի և դատապարտէ նրանց և ասէ. ԴԱՇ  
ապաքէն ես ձե՛զ էի տուել արտօնութիւնը,  
որ դուք ձեր ներքին կառավարութիւնը  
անէք ձեր օրէնքներով և ձեր սովորու-  
թիւններով, և դուք ինչպէս համարձա-  
կեցաք մէկ հատ Նիկոլի այդքան ժոյլ տալ,  
որ նա Էջմիածնի նուիրակի անձին մէջ  
գլխահար գտնուեցաւ ձեր ազգի կրօնի  
և եկեղեցւց գլուխ Հայրապետին և դուք  
լոեցիք. Ինչի էլու ձեր վրէն առել այդ  
անունը. Ինչի էիք դառել ժողովրդեան կա-  
ռավարիչք, որ ձեր կաժողիկոսի պատկերը,  
երեսփոխանը, պատգամաբերը, որ իւր և  
ձեր ընդհանուր ազգի մէծ քահանայապե-  
տի հրամանաւ եկել է եկեղեցական դա-  
տաստան տեսնելու, և իմ թագաւորու-  
թեանս մէջ ձեր աչքի առջևը անպատիւ է  
եղել և դուք ձայն հանած չէք. Միթէ իմ  
երկիրս քրիստոնէից աշխարք չէ. Միթէ իմ  
տէրութիւն մէջը օրէնքը չըկայ, անմեղին պաշտ-  
պանութիւն չըկայ, անզգամին պատուհան  
չըկայ. Միթէ բարբարոսաց երկի՞ր է իմ թա-  
գաւորուիր, միթէ պարծանք է ինձ համար,  
երբ որ իմ իշխանութիւն մէջ ճշմարտութիւր  
խափանուի և սնիրաւուիր յաղթանակէ:

Այս և առաջ նման շատ բաներ մըտածելով՝ իշխանները հաւաքուեցան իւրեանց խորհրդոց ժողովարանը, և երբ պատարագը աւարտուեցաւ և ժողովրդականք ամենքը դնացին իրանց տները, — ազգապետը, դատաւորը, հոգաբարձոր միաբան եկան, եկեղեցւոյ դուռը փակեցին, կնքեցին և դնացին խոչատուր վարդապետին թախանձեցին և ստիպեցին, որ անշուշտ Սրբազն Հայրապետի ասլսալարանաց և կոնդակի հիման վրայ՝ վաղուեան օրը ատեան սարքէ, դատաստան բանաց և Սուրբ Էջմիածնի ու Սրբազն Հայրապետի իրաւունքները սնտրգութենէն տղատէ։ Խաչատուր վարդապետն-էլ հնազանդուելով ստիպողական հարկին և կամելով գարման մատուցանել այն մեծ պատառուածոյն, որ ընկել էր ժողովրդեան և առաջնորդի մեջ, և առաջնորդի և Սուրբ Աթոռի մեջ՝ օրնշանակեց իշխանաց խորհրդով և իմացում տուեց Նիկոլին, որ նշանակած օրը գայ ատեան։ >

Ի՞նչ էր այն ատեանը. ի՞նչ մէկ սարսափելի ժողով էր. ի՞նչ պիտի սնէին ատենակալները. ո՞ւմ գլուխը պիտի կտրէին. ո՞ւմ կաշին պիտի քերթէին. ո՞ւմ մորթին

պիտի մաշկէին. ումը պիտի կախէին. ոչ  
ապաքէն ամենքն-էլ Հայ էին և Հայոց Եկե-  
ղեցւոյ ծնունդ : Եջմիածնի ծերունի եսլիս-  
կոպոսը պիտի նստէր նախադահ . պիտի  
ժողովրդեան ազգապետները շարուէին նորա-  
բոլորը : Նիկոլին պիտի ասէին ոինչի՞ այս-  
պէս կամ այնպէս արիր. ըստիտէիր որ՝ այդ  
ամենը եկեղեցւոյ և նորա սուրբ օրինաց և  
իրաւանց ընդդէմ էր ։ Նիկոլին-էլ պիտի ա-  
սէր իւր պատասխանը : Նիկոլին ծեծելու,  
փետելու, ջարդելու, փշթելու չին . նրա  
հայրը, մայրը հայհոյելու չին . ջուրը սան-  
դի մէջ ծեծելին յետոյ՝ ինչ պիտի դուրս  
գար : Ծեր եսլիսկոպոսը պիտի ոտքի վրայ  
կանդնէր ու ասէր. ուներիք է, որդիք, օտար  
աշխարքումը ձեր կեանքը մի դառնայնէք,  
և որբազան Հայրապետին վիշտը մի աւե-  
լացնէք . Հաշտուեցէք, որ Հրեշտակները ու-  
րախանան ։ Հաշտութեան ժամանակն-էլ  
էլի իշխանք պիտի գային, Նիկոլի աջը  
համբուրէին, մեղայ ասէին և արձակում  
լինդրէին . և իրանք երկու եսլիսկոպոսք  
էլ մէկ զմէկու գլխին ողբաշուցէ կարդային,  
և ստեանը վերջանար :

Ապա, եթէ այսպէս չըլինէր՝ ինչպէս էր  
կարող լինել այլազգ : Մովսէս Կաթողիկո-

սը Խաչատուր վարդապետին անորոշ հը-  
րաման տուած չէր: Խաչատուր վարդապետը  
ուրիշ իշխանութիւն զգեցած չէր, բայց  
միայն ժողովուրդին և առաջնորդին հաշ-  
տեցնելու: Հաշտեցնելու տեղն-էլ ատեան  
պիտի ասուէր. Հաշտեցնելու ժամանակն  
էլ իշխանաց ժողով սկիտի լինէր. ասլա թէ  
ո՞չ ինչպէս կը լինէր Հաշտութիւնը, եթէ  
իշխանք մէկ տեղ ժողովուած չը լինէին,  
ումը ում հետ պիտի Հաշտեցնէր: Ամեն  
ժամանակ պիտի Խաչատուր վարդապետը  
նախադահ նստէր, որովհետեւ նրան էր  
յանձնած Հաշտարարութիւնը: Եւ այս Հաշ-  
տութիւնն ատեանէն և այս խաղաղարար  
ժողովէն փախչելու սկատճառ չունէր Նի-  
կոլ: «Որ գործէ զբարիս՝ գայ առ լոյսն»,  
որ խմացուի թէ «Աստուծով գործեցան»:

Բայց Նիկոլ այսպէս միտք չարաւ: Նի-  
կոլ արդէն անցել էր «Ռուբիկոնը». շատ չար  
էր գործել, այս պատճառաւ «ատեսյր  
զլոյսն». և Հարկաւորապէս պիտի խուսափէր  
ամեն տեսակ քննութենէն: Ո՞չ, թէ ի՞նչ  
լաւ կ'անէր, եթէ Աւետարանի անարժան  
սպասաւորը միտքը բերէր առաքելական  
աւանդը, որ ասել էր. «Եթէ կամիք դա-  
տաստան տնել՝ զանարդագոյնս ի սպասա-

ւորաց եկեղեցւոյն դատաւոր նստուսջիք .  
առ ամօթոյ ձեր ասեմ ։ Այս տեղ ո՛չ թէ  
անարգագոյն ոք էր, սյլ պատուականագոյնն  
քան զհոռմէադաւան պատուելիս, որոյ  
բերանով Աստուած ալիտի իւր ներողա-  
մատութիւնը յայտնէր և որոյ երեսին Քը-  
րիստոս ալիտի խաշուած երեէր, և Նիկոլի  
Համար միջնորդ կանգնէր, ասելով . «Ճայր՝  
թող դմա, զի ոչ գիտէր զինչ գործէր», թէ  
և Քրիստոսին լաւ յայտնի էր, որ Նիկոլ  
շատ լաւ գիտէր թէ՝ զինչ գործէր ինքն,  
և զինչ վսաս բերէր. և արժան էր՝ որ Քը-  
րիստոս աղաղակէր առ Ճայր թէ՝ «Ճայր,  
մի՛ երբէք թողուր դմա, զի զամենայն,  
զոր ինչ միանգամ գործեալ է և գործէ, —  
շարամտութեամբ, նենդութեամբ, խորա-  
մանկութեամբ գործէ, և երբէք չէ արժան  
թողութեան և ներողութեան ։»

‘Նիկոլ՝ որ արդէն Հանել էր իւր սրտէն  
կուսաւորչի երախտիքը, և միայն առիթ  
և դիպուած էր պարտում՝ խապառ դուրս  
գալ սուրբ Թաղէոսի և Բարդողիմէոսի փա-  
րախէն և մտնել Եղուիթաց ջոլիրը, նո-  
ցա դժոխանիւթ հնարներէն բուռն հարեց։

Ա Եհանտանի կարգադրութեամբ՝ եթէ  
Ճայր իշխանք մէկ դատանտան անելու լի-

նէին՝ պիտի երկու հատ Լեհազգի ունե-  
նային վկայ, որ իրը թէ Հայերը անիրա-  
վճիռ չանէին: Այս Լեհերը որպէս թէ ար-  
քունական դրան կողմէն պատգամաւոր էին,  
որ Հայոց իշխանաց դատաստանը հրազ-  
րակական դատաստանի մե ունենար, և ոչ  
ծածուկ դադունութեան: Բայց այժմնան  
ատեանը, որ պիտի բոլորվէր Նիկոլի հա-  
մար՝ աշխարհական ատեան չէր, այլ պարզ  
հոգեւոր ատեան, և դատաւոր իշխանները  
ոչ թէ աշխարհական դատաւոր էին, այլ  
ժողովրդասլետ, որոց հետ եւլիսկոսուը  
պիտի խորհուրդ անելով՝ Նիկոլի գործը  
քննէր: Այս ատեանի մէջ Լեհազգի պատ-  
գամաւոր կամ վկայ բնաւին տեղ չունէին.  
ասկա եթէ հարկաւոր համարուէր՝ դատա-  
ւորք իրանք կը հրաւիրէին: Նիկոլ այս ա-  
մեն հանդամանքներուն տեղեակ լինելով  
Եզուիթաց արբանեակներէն երկու հոգի  
լուսես կաշառեց, որ ատեան կարգած տեղը  
թաք կենան և հարկաւոր ժամանակը դուրս  
երեին: »

Այնչեւ ո՞ր աստիճան էր հասել նրա  
չարութիւնը, այլ է անձնասլահ լինելը, այլ  
է ուրիշներու համար որոգայթ նիւթելը:  
Այս կամակոր օձի չարանիւթ գործիքը ազ-

դային իրաւունքներու տակն էր փորում,  
քանի հարիւրամեայ դառն աշխատանքնե-  
րով ստացած ազգի արտօնութեան վտանգ  
էր նիւթում. իւր անսանձ կամքը պաշ-  
տել տալ կամենալով ազգը, կրօնը, եկեղե-  
ցին և ամեն սրբութիւնը ուսնակոխ անել  
յօժարեցաւ. թակարդը լարեց և ուրախ  
էր իւր արարմունքի վրայ անզեղջ յան-  
շաւորը: Երբ որ նշանակեալ օրը և ժամը  
հաստ՝ Նիկոլի համախոչ Լեհացի Եղուիթ  
լրտեսները արդէն զօղիել էին ծածուկ տեղ  
ատենի մ.ջ., ատեսնը բոլորիել էր, ատե-  
նակալք նատել էին. եկաւ Նիկոլն-էլու և  
Հրամանցեց իւր սպասաւորներուն, որ իւր  
աթուոր, ինչպէս առաջնորդական աթոռ,  
դրնեն ամենէն վեր:

Աշխանք ընկարացին հանդուրժել Նիկոլի  
ժայրհութեան. տեսան որ նա ո՛չ թէ միայն  
էջմիածնի պատղամարեր եպիսկոպոսին է  
ուղում անպատիւ անել, այլև իրանց է  
կամենում արհամարհել. վախեցան որ՝ ըս-  
լնի թէ իրանց անդոսնելը երկի տէրու-  
թեան և թագաւորի իսկ անարդութիւն,  
որովհետեւ նորա այն տեղ նորա անձին  
պատկերացուցին էին. այս պատճառաւ ա-  
սացին Նիկոլին՝ «Այժմ ձեր սրբազնութիւ-

Նը այն մասին եւկած չէ, որ դատէ, այլ  
պիտի դատուիք. վասն որոյ ձեզ չէ արժան  
նստիլ, այլ պիտի ոտքի վրայ կանգնիք<sup>ա:</sup>

Այս դիսպուածը Նիկոլի սլահապան հը-  
րեշտակը առաջ բերեց. այս տեղ Նիկոլ  
պիտի դարձնէր այն ամենայն, ինչ որ այն-  
քան տարի ժողովրդեան մտքի և կարծեաց  
մէջ կորցրել էր: Այս Աստուծոյ ոտնաձայնն  
էր ի գրախտի, և «Ազամ», ուր ես» բոր-  
բառն էր. մէկ փոքրիկ խոնարհութիւնը,  
մէկ քանի րոպէ համբերութիւնը պիտի  
նրան միւսանդամ դարձնէր Սուրբ  
Էջմիածնի ծոցը, սրբազան Հայրապետի  
խնամոց տակը և բոլոր ժողովրդեան և  
աղդի սիրոյ դիրկը: Մէկ երկու րոպէ ետքը  
ինքը ծերունի Եսլիսկոպոսը և նոյն իշխան-  
քը, (միթէ Հայոց հեղութիւնը և քաղց-  
րաբարոյ բարեհամբոյր անյիշաչարութիւնը  
յայտնի չէ), պիտի դնէին նորու տակը ա-  
թոռը և պատուով ու մեծարանօք նստե-  
ցնէին, և նա լոէր կաթողիկոսի պատկեր  
գերապատիւ Եսլիսկոպոսակցէն՝ «Բարեկամ»  
ի վեր առիս մատիրո: Այդ ինքն Նիկոլն  
էլ լաւ գիտէր: Բայց նա այն աթոռը չէր  
ուղում, որն որ նրան՝ Էջմիածնը պիտի  
տար, կամ որն որ նրան ժողովուրդը պիտի

մատուցանէր. նա այն աթոռն էր ուղում,  
որն որ կոխովլ, պատերազմով, հաղար  
թուք ու մուրով, հազար անէծքով և նզով-  
քով առած լինէր. նորա արեան մէջ չըկար  
հաճոյարար խաղաղասիրութիւն. նա ուղում  
էր ժողովրդեան հետ այնպէս վարուիլ, ինչ-  
պէս եղուիթականք իրանց կրօնական ար-  
քանեակներու հետ, որ ժողովրդականք չու-  
նենան ոչ կարք, ոչ միտք, լինին դիակ  
նորա ձեռին. նա նրանց տայ աթոռ և ոչ  
թէ նոցամէն առնու, որ երբ կամենայ՝ կա-  
րողանայ խլել ևս, և նոքա չըհամարձակուին  
ձայն հանելու. նա ուղում էր որ՝ ժողովր-  
դեան բազմութիւնը լինի մէկ մեքենաշարժ  
(տութօնալ), որ նորա ակնարկութք գոր-  
ծէ ամեն ինչ. չունենայ սեփական զգացու-  
թիւն. նորա կամքով նստի, վերկենայ,  
սպառկի, քնի, զարթի. նա որովհետև նոցա  
առաջնորդ է դառել, նոցա խելքի-էլ,  
մտքի-էլ, շունչի-էլ, կամքի-էլ, հոգւոյ-էլ,  
մարմնոյ-էլ, ստայուածոյ-էլ, աշխատանքի  
էլ լինի անձնիշխան տէր:

Կիկու փոխանակ պատասխանելու. Եատ  
լաւ է, ես կըկանդնիմ, եթէ իմ ազգի ժո-  
ղովրդեան իշխանաց կամքը, և իմ հոգեոր  
չօր, իմ հոգեօր զաւակաց հաճութիւնը

այդարէս է. որ այդ մեկ խօսքով նրանց իսպառ անզէն կացուցանէր, մեծին ու փոքրին խղճահար անէր և բանը խաղաղութեան ձանփու վրայ դնէր. հարցուց լրաբար թէ՝ Ո՞վ է իմ գատաւորը։ Ո՞վ իսելքէ մտքէ, դուքս յանդգնութիւն։ Նիկոլ իրը դեռ չըգիտէ՝ թէ ո՞վ է գատաւորը։ Արքունական հրամանաւ գատաւոր կարգուած, ազգի ընտրութեամբ ազգապետ ասուած իշխանք նստած են. սրբազն Կաթողիկոսէն առաջուանէ կոնդակով խոստացած և կրկին անգամ կոնդակով ծայրագոյն նուիրակ անուամբ եկած ծերունի Արքեսլիսկոպոսը այն տեղ նստած էր և ուզում էր, որ անառակ որդւոյ բերնեն մեկ զզջական խօսք լսէ, որ պատճառ գտնէ մեջ մտնելու. հաշուեցնելու և խաղաղատէր Հայրապետի հրամանը ու կամքը տեղ հասցնելու. և նա՝ որպէս թէ ոչ մեկին-էլ չէ տեսնում, և Հարցյնում է թէ՝ Ո՞վ է իմ գատաւորը։ Այս մեկ կարճառու խօսքի մեջ տե՛ս թէ ի՞նչ կայ պարունակուած. տե՛ս թէ այս ազգուարանութեան միջնորդութեամբ ի՞նչ է ուզում ասել Նիկոլը. Չես Հայ չեմ, ես Էջմիածնի իշխանութեան տակը չեմ. ես եղաւիթականաց պաշտպանութեան ներքոյ եմ. այս

տեղի հաւաքուածներու մէջէն ովլ կայ, որ  
ես նրա առջև գլուխը խոնարհեցնեմ և  
յանձնառու լինիմ, որ ինձ դատէ և իմ  
դատաւոր լինի. ես Արարատեան աժոռոր  
ուրացել եմ. ես կաթողիկոսին չեմ ճանա-  
չում. իմ դատաւորը Փափն է, իմ դատա-  
ստանը Հռոմայ ատեանն է. իմ փաստա-  
բանը՝ Եպոնիթաց կարգն է։>

Եթէ Հայոց իշխանները կ'իմանային, թէ  
բանը մինչև այն աստիճան սկսոի համնի,  
միթէ նրանք չեն կարող խաշատուր վար-  
դապետին ներկայացնել թագաւորական իշ-  
խանութեան, Հայրապետական կոնդակը  
թարգմանութեամբ տալ և բացարձակ  
հրաման առնուլ գոնեն, որ ուոք չըհա-  
մարձակուի Նիկոլին սկաշտանութիւն ա-  
նել օրինաց գէմ։ Բայց իշխանք չեն կա-  
մենում գործը այն տեղ հասցնել. նորա  
հոգւով ցանկանում էին խաղաղութիւն  
սերմաննել, կամենում էին իրանց մէջ վեր-  
ջացնել տմեն բան. կամենում էին միայն  
այնպէս սանձ գնել Նիկոլին, որ նա ըսկա-  
րողանայ եկեղեցական արարագութեանց գէմ  
ներգործել. այն սկառնաւաւ իրանց տ-  
տեանը կաղմեցին և իրանց մէջ ուղեցան  
այս խռովութիւնը դադրեցնել. և այս իսկ

մոքով, երբ որ Նիկոլ հարցուց թէ՛ ԱՎ  
 է իմ դատաւոր, իշխանք պատասխանեցին.  
 Եֆո դատաւորը այս ծերունի արքեսիսկո-  
 պոսն է, որ կաթողիկոսի պատկեր է և  
 նորա Հայրապետական կոնդակով եկած  
 նուիրակ, և նորա խորհրդակից այս՝ Հեհաց  
 թագաւորութեան արտօնագրութեամբ և  
 Հրովարտակներով դատաստանապետ կար-  
 դած ազգապետք ու իշխանաւորք։ Այս  
 պատասխան տուողը նոցամեն մէկն էր, ո-  
 րոնց վրայ որ Նիկոլ ուզում էր իւր ծան-  
 րատաղտուկ լուծը դնել, և բռնութեամբ  
 տռաջնորդ լինել, և վիճակաւոր եսլիսկո-  
 պոս և թեմակալ դառնալ. այն ծերունի  
 արքեսիսկոպասը՝ իւր հասակի երիցութեամբ  
 նորա համար հայր էր. այն նստած իշխա-  
 նաւորք Նիկոլի ժողովուրդքն էին և նորա  
 հոգևոր հայրութեան հոգևոր որդիք. ի՞նչ  
 կայր այս տեղ խրտնելու. ի՞նչ կար մէկ  
 տարօրինակ. եթէ ինքը Նիկոլը մէկ նեղու-  
 թեան մէջ ընկնէր՝ միթէ նոցա օգնութեան  
 դիմելու չէր կարող, և նոքա նրան նսկատ,  
 ձեռնտուութիւն, մտերմութիւն, որդիու-  
 թիւն չէին անիր։ Բայց նա այն չէր ուզում.  
 նորա ցանկացածը այն էր, որ Եղուիթաց  
 ուժով իւր ազգի և իւր ժողովուրդի, իւր

Հոդեոր որդւոց գլուխը ջարդէ, ջախջախէ:  
Նիկոլ իւր ամենի ձայնը բարձրացուց, որու-  
տալով կանչեց սյն թստք կեցած Եզուիթ-  
ներուն, որ իրանց դարանէն դուրս դան :  
Դարանամուտ Եզուիթները իսկոյն դուրս  
վաղեցան և կանգնեցան ատեանումը: Այն  
ժամանակը Նիկոլ իւր երեսէն վեր առաւ  
ամօթոյ և պատկառանաց քողը. բացեց իւր  
նաւի բոլոր առագաստները, տուեց նոցա  
լանջը յաջողակ քամիներուն և ասաց Ե-  
զուիթ դարանակալ սուտ վկաներուն. «Դուք  
գիտէք, որ ես եպիսկոպոս եմ, իսկ սոքա  
աշխարհական մարդիկ, և առանց Լեհաց  
թագաւորութեան կողմանէ պատգամաւոր  
հրաւիրելու՝ այս տեղ ժողովուել են, ատեան  
են բացել և կամենում են ինձ վրայ դա-  
տաստան սարքել. և ահա այս Ծերը, որ  
սոքա դատաւոր են ասում, օտար աշխար-  
քէ եկած մարդ է, օտար թագաւորութեան  
լրտես է և եկել է այս աշխարքի ելումու-  
տը զննելու, և սոքա՝ նորա համախոհ,  
դաշնակից և գործակիցներն են. դուք այս  
անցքին վկայ էք»: Եզուիթ Լեհազգիք պա-  
տասխանեցին. «Մենք ինչ որ տեսանք, ինչ  
որ լսեցինք՝ ամեն բանին վկայ ենք, և ուր  
որ-էլ տանիս մեզ, թէ և բաղաւապետի

ատեանը , ամեն տեղ մենք պատրաստ ենք  
և պարտաւոր ենք ճշմարիսը ասել և վը-  
կայութիւն տալ : Այս որ լսեցին ժողով-  
եալները , ոչ այնքան նորա լարած որո-  
գայթներէն վախեցան , որքան անտանելի  
անզգամութենէն զգուելով՝ թողին ու ցը-  
րուեցան :

Եթէ իշխանք օրինաւոր ձանփով լինէին  
սկսած այս գործը , ով թէ ո՞րքան մեղա-  
դրանք պիտի լսէին Նիկոլի կուսակիցներ-  
քէն , թէ նորա ազգի խայտառակութիւնը  
օտարաց դէմ բաց են անում : Եթէ իշ-  
խանք իրանք բերած լինէին Լեհազգի վը-  
կայք , Նիկոլ և նորա համախոհք եզրուի-  
թականաց վատահութեամբ միթէ չէին կա-  
րող ասել , թէ այն Լեհացիք կաշառեալ  
մարդիկ էին : Կարող էին ուրիշ հնարներ  
էլ պտրտել և ջանք անել՝ այն ժողովը  
քանդելու համար . վասն որոյ և չէ պարտ  
այն դատաւորներուն մեղադրել , թէ նորա  
կանոնէն դուրս բան էին արել և Նիկոլ  
կարողացաւ նոցա պոչէն բռնել և ցրիւ  
տալ : Եթէ նոցա միտքը լինէր Նիկոլին  
յազթահարել և դատապարտել՝ նորա այն  
ատեանը կարող էին քաղաքապետի առջել  
գոմարել , բայց նորա տնէց տունի բան

Էլին ուղում անել՝ միայն հաշտութեան և  
խազաղութեան ճանփայ բանալու համար .  
այլ Նիկոլ բանը այլ կողմը դարձուց:

ԳԼՈՒԽ 8.

ՆԵՐԻԿՈԼ վստահ էր , որ Եղուիթաց գէմ  
չեն կարող ո՛չ ժողովուրդք , ո՛չ իշխանք,  
ո՛չ նուիրակ , ո՛չ կաթողիկոս կանգնիլ և  
մաքառիլ . Եղուիթաց զօրութիւնը ահեղ  
և զարհուրելի էր . ո՛չ օրէնք , ո՛չ կարգ ,  
ո՛չ կանոն նրանց չէին կարող սանձել . յոքա  
ամեն մէկ թագաւորութեան մէջ մէկ ու-  
րիշ առանձին թագաւորութիւն էին սար-  
քել . ինչ որ Ֆրանչաստննէ ըստ չէին կարող  
ծածուկ գլուխ բերել՝ նոքա յայտնի գործ  
կըդնէին և կըկատարէին , որովհետեւ նրանց  
յայտնի արածը՝ հարիւր կանգուն խորը  
գետնի տակն էր իւր արմատները տարա-  
ծած և ամրցրած լինում , իսկ ծածուկ ա-  
րածները սարգի ոստայնի նման ամեն տեղ  
փռուած՝ մէկ այնպիսի ամենատարած հը-  
րաշամուխ պողովատեայ ուռկանի նման էր ,  
որ ոչ ոք և ո՛չինչ չէր կարող պատռել և  
անցնիլ . Մարդ՝ որքան կ'ուղէր մեծ լինէր ,

որքան կ'ուզէր բարձր աստիճանի հասած  
լինէր՝ նոցա ցանցերու մէջ ճանձէն աւելի  
տկար միջատի նման կըբռնուէր:

Ասսասինս կամ Բէլէնէանս (Բալանէանս),  
որ մէկ ժամանակ Հեթում Հայոց թագա-  
ւորի արքայական հզօր ղօրութեամբ բնա-  
ջինջ սպառեցան Կիլիկիայի մ.ջէն, իրանց  
աշխարհատարած գաղտնածածուկ եղեռնա-  
գործութեամբ՝ ի՞նչ էին, համեմատելով  
Եղուիթաց. ո՞վ էր կարող նոցա որոդայթ-  
ներէն աղատուիլ. ո՞վ էր կարող իւր ա-  
ռանձնական սենեկի մէջ իւր անձը ապա-  
հով կարծել. Եղուիթք տէ՛ր էին բոլոր  
տիեզերաց՝ ծովի-էլ, ցամաքի-էլ, խորոց  
էլ, բարձանց-էլ. սուր, հուր, թոյն, խեղդ,  
անակնունելի հարուած՝ նոցա ամենօրվան  
խաղալիկներն էին. սրիկայք, ելուզակք,  
յուղկահարք, աւազակք, գողք, անսկար-  
կեշտ կանայք՝ նոցա սովորական արբա-  
նեակներն էին. ուր որ կային սայլապանք,  
ձիավարք, սայլավարք, նաւավարք, քաղա-  
քապահ զօրք, Ճանփաներու և փողոցներու  
պահապանք, տներու ղոնասկանք, ծառայք,  
աղսինայք, խոհարարք, սենեկապահք,  
սափրիչք, բաղանեաց սպասաւորք՝ նոցա  
մեռին էին կամ վարձաւորք կամ կաշա-

ռեալք. ում տանը ի՞նչ խօսուեցաւ, ի՞նչ  
լսուեցաւ, ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ անցք  
անցկացան՝ ամենայն ինչ մանրամասնաբար  
նոցա տեղեկութիւն էր Հասնում խակոյն .  
Հեռագրութեան թելերու նման ամեն աշ-  
խարքէն, ամեն քաղաքէն, ամեն գեղէն,  
ամեն տունէն, ամեն սենեակէն աներևոյթ-  
լարերով նոցա Հասնում էր ամեն լուրը,  
իմանում էին ամեն գաղտնիքը: Նորա իմա-  
նում էին գողերու, աւազակներու խորհուր-  
դը, գիտաւորութիւնը և չէին խսիա-  
նում, թոյլ էին տալիս որ գողանան, յա-  
փշտակեն, կողոպտեն . բայց խոստովանու-  
թեան ժամանակը, երբ որ նոցա արածները,  
ասածները, խօսածները նոցա առջևն էին  
դնում, ի՞նչ երկրայութիւն կայ, որ այնու-  
հետեւ ամեն գանձ Յիսուսեանց գանձանակը  
պիտի մտնէր. գողը, աւազակը նոցա գոր-  
ծակատարներն էին, և նոցա ձեռքով Հա-  
ւաքում էին ամենայն աշխարքի գանձն ու  
ճոխութիւնը:

«Քանի բիւր օրիորդք իրանց ծնողաց և  
սիրելեաց գրկէն յափշտակուած ընկել են  
Եղուիթաց գիրկը, և նոցա անդնդախօր գետ-  
նափորներումը իրանց տառապալիր կեանքը  
զրաւել: Քանի բարեմիտ անձանց Հազար-

Ները նոցա ընչափաղց ադահութեան զոհ են  
դառել՝ անպատմելի բիւրակերպեան մեքե-  
նաներու մէջ թակարդուած։ Թագաւորու-  
թիւնները ունէին կարողութիւն նոցադատա-  
կնիքէն ազատուիլ. Լուսաբերը իւր զօրուիր,  
ինչպէս իշխան աշխարհի և ինչպէս իշխան  
դժոխոց՝ բոլորովին յանձնել էր նրանց, որ  
էլ ինքը հանգիստ նստի. նրանիք-էլ այն ի-  
րանց ստացած ամեն կարողութիւնը, ուժը,  
հնարները գործ էին դնում՝ իրանց յայտնի  
և ծածուկ աղդեցութիւնը և Հռոմաց Փափի  
իշխանութիւնը տարածել բովանդակ աշ-  
խարքի վրայ։ Փափին նոքա էին զօրաց-  
նում, նրանց-էլ Փափին էր զօրացնում, իւր  
ամեն բանալիները նրանց ձեռքը տալով։  
Ինչ մեծ բան էր, թէ իլովի Հայերն-էլ այն  
աշխարհատարած տիեզերակալութեան ժա-  
մանակը՝ Փափիի վառասիրութեան և Եղու-  
իթաց ականատներու զոհ երթային, մա-  
նաւանդ որ, երբ Նիկոլի նման մարդ նրանց  
գործի դառաւ։

‘Աիկու թէպէտ այսքան բան արել էր,  
բայց դեռ վստահ չէր թէ՛ կարող է իւր  
մոքի մէջ դրած անկարկատելի պատառումը  
գլուխ բերել. վախենում էր թէ՛ մէկ կող-  
մէն դուրս կուգայ մէկ խաղաղարար հոգի,

և իւր ամեն որոգայթները քարուքանդ  
կ'անէ։ Երբ որ գնաց իւր տուն՝ խկոյն  
ուղարկեց Խաչատուր վարդապետի և Հայոց  
իշխաններու մօտ խաղաղաբար (չարագբար)՝  
մարդիկ, որոց հետ կար և այն քաղաքի  
աւագ-երէց Տէր Զաքարիան, (որ կամաց  
ակամայ պիտի նորա պատճեն փշէր) որ  
քանի որ Խաչատուր վարդապետի սրտի  
վէրքը և ժողովրդեան հոգւոյ ամբոխմունքը  
զիջած անցած չեն, աւելի գրգռեն նրանց՝  
եզրուիթական կակուղձէթի տակ թաքցրած  
սուսալսնէնունման խօսքերով. ոԲաւական  
է՝ որ ինչ ցարդ մեր մէջը պատահեցան,  
անց կացան. բաւական է՝ որքան ես ձեղ  
ոտնակոխ արի և խայտառակեցի, և Էջ-  
միածնի պատիւն-էլ և նորա հայրապետու-  
թեան յարգն-էլ հողի հաւասար արի, և  
կոնդակաբեր նուիրակին-էլ և քննիչ եպիս-  
կոսոսին-էլ առակ նշաւակի արի. այսու-  
հետեւ հաշոռութիւն անհնգ մեր մէջ, որ  
դուք միշտ լինիք անլեզու անբան ոչ խար,  
ես լինիմ ինքնագլուխ հովիւ և հովուա-  
պետ. ձեր առաջնորդն-էլ ես եմ, ձեր նուի-  
րակին-էլ ես եմ, ձեր հայրապետն-էլ ես  
եմ, ձեր կաթողիկոսն-էլ ես եմ. թէ Էջ-  
միածնի հետ, կամ կաթողիկոսի հետ գործ

ունիք՝ ինձ ասացեք, ես կրխոսիմ էջմիածնի հետ-էլ, կաթողիկոսի հետ-էլ. թէպէտ գիտեմ այս հաշտութիւնը ձեզ համար քան զարիւնահեղ կոիւը աւելի ամօթալի կրկնի, բայց երկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի. մյու յանձն առէք, որ ըլլինի թէ սյսպիսի շփոթներու և խոռվութիւններու յամենալու և հնանալու պատճառաւ՝ աւելի մեծ վնասներ բերեմ, թափեցնեմ ձեր գլուխին, և օտար աշխարքումը, օտար ազգերու առջև ձեր վրայ նոր նոր խայտառակութիւններ բերեմ, թագաւորութիւննէն ստացած ձեր ազգային արտօնութիւնները խլել տամ և ձեր տները բարոյապէս քանդեմ. ուրեմն՝ եկէք հաշտուինք և ինձ հնազանդուեցէք. և եթէ հաշտութիւն-էլ չէք ուզում՝ եկեղեցին քացէք. եկեղեցին իմն է, և ոչ ձերը. բացէք եկեղեցին, որ քաղաքի մեջ շփոթը չաւելանայ, և քաղաքապետի միջամխութիւնը հարկաւոր ըլլինի. խօ լաւ գիտէք, որ այնուհետև չեմ թողնիր ձեղ ճիկ հանելու, ամեն կողմանց ձեր թեերը կըկտրտեմ և ձեր փետուրները քամու կուտամ։

**Լ**աւ հասկացաւ խաչատուր վարդսակետը թէ՝ այս ինչ խնամախօսութիւն է. լաւ ի-

մացաւ Նիկոլի եղուիթական լեզուն ու ոճը,  
որով ուղում էր աւելի գրգիռ արկանել,  
որ կոփւը մեծացնէ . և այս տեղ ցոյց տուեց  
իւր բարեմոռութիւնը , իւր կարգի վայե-  
լուչ հեղահոգի բարքը . անյիշաշար դըտ-  
նուեցաւ Նիկոլի ամեն անկանոն, անկարգ,  
անխիղճ և անտանելի ոճիրներու դէմ . լաւ  
համարեցաւ այլոց գայթակղութեան պառ-  
ձառ չըդառնալու համար՝ ինքնին լինել  
միջնորդ նորա և ժողովրդեան մէջ , որ  
Նիկոլի հաշոռինք ասածին հակառակ  
չըկենան : ~~Արդեօք~~ լաւ կըլինէր, եթէ լա-  
շատուր վարդապետը Փենեհէսի ճանփակ-  
երթար... ինքը ժողովրդեան տռաջը ընկ-  
նէր, դործը տանէր քաղաքապետի տտեանը  
և մինչև թագաւորին հասցնէր և Նիկոլին  
բնութինջ անէր . տեսնենք՝ այս-էլ կըյաջո-  
ղքը, կամ ի՞նչ արգասիք կ'ունենար:

Ճայց որովհետեւ ժողովրդականք լաւ գի-  
տէին Նիկոլի որպինութիւնը և յայտնի  
տեսնում էին նորա պայմաններու գաղա-  
փարները , որ անբարբառ աղաղակում էին . ~~Այսահնայ~~ ի՞ է Կուէիմ , բայց չի ասնայ նէ  
էտէիմ . չըկամեցան նորա առջեւ նուաստա-  
նալ՝ որ կրօնի և աղդութեան վեաս չըհաս-  
նի , և նա աւելի չըլրիանայ . չըկամեցան Նի-

կոլիս սրբով խաղալ, որ Եջմիածնի և նորա Հայրապետի պատիւը վտանգի մէջ ընկնի. սովորութիւն չըդառնայ ամեն անդգամի համար Եջմիածնէն եպիսկոպոսական վեղար ուղենալ և նորա ծայրով Հայրապետական աթոռին պօզահարել. չընդունեցին Խաչատուր վարդապետի միջնորդութիւննէլ, որովհետեւ միջնորդութեան ժամանակը անց էր կացել, և Նիկոլը նրանց գլխին ամեն խայտառակութիւնը թափեցնելէն յետ՝ եկեղեցւոյ ծէսերը ոտնակոխ անելով՝ արդէն ցոյց էր տուել, որ նա այնուհետեւ բնաւ հանդարտելու չէ, մինչև բոլոր Հայ ժողովրդեան՝ Փոլեալք շըշինէ, և եկեղեցիները, նոցա գանձը և արդիւնքը Եղութաց փորը չըկոխէ:

Այլ Խաչատուր վարդապետը՝ որ Նիկոլի ամեն չար խորհրդոցը տեղեկացել էր, լաւ համարեցաւ նորա ճանփան փոխել խաղաղութեան միջոցներով, շատ ջանաց մէջերը հաշտութիւն գձել. բայց երբ որ տեսաւ թէ՝ ժողովրդականք չին ուղում մօտ թողուլ անդամ հաշտութեան խօսակցութիւնը, և մանաւանդ՝ յայտնի տեսնումէլ էր՝ որ ժողովրդականք ունին առիթ և իրաւունք այնպէս շարժիլ, որովհետեւ «Ը-

փորձեալն կը կին փորձելն յիմարութիւն է».  
սրտակառուր դուրս եկաւ այն պայքարէն ,  
ուր որ չըկարողացաւ խաղաղասէր հայրա-  
պետի ցանկացած և ապսպարած հաշտո-  
թիւնը առաջացնել , և ուր որ տեսաւ  
Առւրբ Ամոռի պատիւը ոտնակօխ արհա-  
մարհուած և անարդուած։ Խաչառուր վար-  
դապետը թօթափեց իւր օձիքը և ասաց  
«Այսուհետեւ ես անսպարտ եմ այն չարեաց,  
ինչ որ այս տեղին սլիտի դուրս գան. դուք  
գիտէք »։

Այս խօսքը մէկ մարդարէութիւն էր,  
որ խաչառուր վարդապետը դուշակեց թէ՝  
ինչ չարիք սլիտի յառաջանացին։ Այլ ոյն  
չարեաց շարժուիթը Հայոց հասարակու-  
թեան ամսւր կենալը չէր. այն չարեաց սեր-  
մը արդէն ցանած էր և արմատացել էր  
խոր . այս՝ Հայերն-էլ էին իմանում և տես-  
նում , և խաչառուր վարդապետին հարիւր  
անդամ ասել էին թէ՝ «Եթէ Նիկոլը միայն  
հաշտութիւն է ուզում՝ մենք պատրաստ  
ենք. բայց եթէ Նիկոլի միտքը այն է,  
(ինչպէս որ էր էլ խակապէս , և ինքն Նի-  
կոլն էլ չէր թարցնում , և միշտ թէ բա-  
նիւ և թէ գործով յայտնում էր), որ մեր  
եկեղեցւոյ ազատութիւնը գձէ Փափի իշ-

խանութեան տակը և ծառայեցնէ եզուի-  
թականութեան, մեր կրօնը խախտէ և մեր  
աղդութիւնը կորցնէ, մենք ամեն զոհ աչ-  
քերուս տակն ենք առել, և խնայելու չենք  
ոչ գանձ, ոչ ճոխութիւն, ոչ տուն, ոչ  
տեղ, ոչ արտօնութիւն. ամեն ինչ կու-  
տանք, բայց Նիկոլի առաջնորդութիւնը  
չենք ընդունիր. և գայլը հովիւ չենք դը-  
նիրու: Բայց ինչպէս երեսում է, դեռ Խաչա-  
տուր վարդապետն-էլ չէր հաւատացել և  
չէր էլ հաւատում, թէ Նիկոլ մինչև այն  
տեղ կ'անզգամանայ. նա միայն վախենում  
էր թէ՝ արքունական կողմէն մէկ բարկու-  
թիւն կըծագէ և ժողովրդականք կըմնան  
տուգանքներու տակ: Հովիւը իւր գառնե-  
րու հոգսն էր անում. Տէս առաջան էր  
լունէ, գէւը Եռողոշը:

**Ա**յրի որ տեսաւ Նիկոլ թէ՝ մէկ կողմէն  
Խաչատուր վարդապետը ըսկամեցաւ նրա  
դէմ կոխւ բանալ, և ամեն կերպով ցոյց  
տուեց իւր անձը խաղաղատէր, հաշոարար,  
միւս կողմէն ժողովրդականք չընկան իրա  
լարած որոգայթի մէջ, որ ժամանակաւ  
պիտի ասէր թէ՝ «Եթէ յանցաւոր չեին ե-  
կեղեցին փակելու համար, ինչի՞ բացին ա-  
ռանց դատաստանի, առանց քննութեան».

Հասկացաւ, որ այնուհետեւ էլ չէ կարող  
Հայոց վրէն այնպէս առաջնորդութիւն ա-  
նել, ինչպէս որ ինքն էր ուզում. շառաջ  
մէկ սուտ համբաւ հանեց, թէ խաշատուր  
վարդապետը և Հայոց իշխանները իւր հաշ-  
տարար և խաղաղահր ապատգամաւորնե-  
րուն անգատութեամբ մերժել են, և  
անարդութեամբ և ամօթով յետ են դար-  
ձուցել, հայհոյել են և ծեծել. և այսպէս  
սուտ բարկութիւն ցոյց տալով և կեղծա-  
ւորաբար վշշտացած երևելով, և այսուհե-  
տեւ արիւն ձեր ի գլուխ ձեր ասելով, զը-  
նաց իւր հին դաշնակից և դաստիարակ  
Եղուիթների մօտ, տուեց նրանց Ազամի  
առւած ձեռագրի նման ձեռագիր, որ եթէ  
Եղուիթները առնուն Հայերու ձեռքէն եկե-  
ղեցիները և իրան յանձնեն, նա-էլ իւր ժո-  
ղովուրդը և իւր վիճակը կըհանէ Հայոց  
կաթողիկոսի իշխանութեան տակէն, և Հը-  
սոմայ քահանայապետի և Եղուիթաց կար-  
գապետութեան կըհապատակեցնէ, և այնու-  
հետեւ Հայոց եկեղեցիներու մէջ եկեղեցա-  
կան կարգաւորութիւնները և պաշտամուն-  
քը այնպէս կատարել կուտայ, ինչպէս որ  
Փափի հրամանաւ Եղուիթք կըկարգադրեն:

Դացուեցաւ Եղուիթաց գործունէութեան

Համար լայնարձակ ասպարէզ և նոցա ան-  
յագ արծաթասիրութեան համար անսպառ  
աղբիւր։ Ուրան էին ջանք արել տռաջ (և  
յետոյ), որ Հայերուն որսան դէսլի իրանց  
ուռկանները, որ Պէտրուշան էին կոչում,  
ու չէին կարողացել, այժմ Հայոց եպիսկո-  
պոսն է խոստանում, և Հայոց վիճակի ա-  
ռաջնորդը ինքն է ճանփան բաց անում և  
հեշտացնում։ Խոկոյն թե ու թիկունք դա-  
ռան Նիկոլին, ագռաւաժողով գևերու նման  
երկինք ու երկիր Լքցրին այն կորուսեալ  
աւարի չորս կողմը շրջապատելով, առին  
այն կամաւ կուրացածին և կամակոր մոլո-  
րեալին, և տարան Լեհաց արքեպիսկոպոսի  
մօտ, և պատմեցին ամեն անցքը ինչպէս  
որ իրանք կամեցան։

Այն թէ Լեհաց արքեպիսկոպոսը այս ա-  
ռաջին անգամն էր՝ որ լսում էր այս բանը.  
միթէ մինչև այն օրը նա տեղեակ չէր. միթէ  
խորհուրդի լսուերը, մեծերը և ծանրերը  
Կայիափայի տանը չէին լինում. միթէ Ե-  
զուիթք նրան չէին պատմում Նիկոլի ամեն  
քայլափոխը, Հայերու դրութիւնը, քննիչ  
Հայ եպիսկոպոսի վիճակը. միթէ ամեն լս-  
րած որոգայթներու ծայրերը նորա ձեռին  
չէին. միթէ նա ու քաղաքապետը խոր-

Հուրդ արած չէին : Ա ԵՀաց Եպիսկոպոսը  
ուղարկեց Նիկոլին և իւր շրջապատճած  
Եղուիթներուն քաղաքապետի մօտ , որ  
գործը քաղաքական իշխանութեան ձեռքը  
անց կենայ , որ ինքն-էլ մնայ անմեղադրե-  
լի : Անհնա՞ր էր , թէ Ա ԵՀաց Եպիսկոպոսը  
չունենար Հայոց իշխաններու մէջ ծանօթ-  
ներ և բարեկամներ և նոցամէն ամաչելու  
պատճառ չունենար :

Ո՛չ Եպիսկոպոսը և ո՛չ քաղաքապետը  
չըկարողացան Հասկանալ թէ՝ ի՞նչ դժար ,  
աշխարհաւեր և անիրաւ բանի են ձեռնա-  
մուխ լինում . այն Փափի Հալատակները և  
փառասիրութեան գործիքները , որ Բարթո-  
ղիմեռն գիշերներու կամ Փարիզեան արխ-  
նազանդ Հարսանիքի Համար գոհութիւն  
էր մատուցել Աստուծոյ Հրապարակաւ ,  
ինչպէս Կայէնի սլատարագը , ի՞նչի սլիտի  
Նանտեան Էդիքտի նախընթաց նախատօ-  
նակը չըկատարէին Ա ԵՀաստանի մէկ քաղա-  
քի մէջ : Անձնասպատիր մտախարութեամբ  
կարծեցին թէ՝ այդ մէկ շատ հեշտ բան է .  
երբ որ մէկ Եպիսկոպոս կամենայ իւր վի-  
ճակը կրօնափոխ անել , ու հոգեոր և  
մարմաւոր իշխանութիւնները միաբանու-  
ին , էլ ի՞նչ արգելառիթք կըմնան . նոցա

Համաձայնութիւնը ի՞նչ չէ կարող առաջացնել:

Քաղաքապետը սյս տեղ առաւ Պիզատոսի դերը, մինչ երանելին ՆիկոԼ Յուղայի իսկարիոտացւայ շնորհն էր վայելում, իսկ Եղուիթականք՝ դպրաց և փարիսեցոց: Քաղաքապետը համ խարուեցաւ Եղուիթաց խօսքերէն, համ վախեցաւ. երևի Եղուիթք էլ համ «Հաճեսցուքն» էին կատարել ծածուկ, համ «Ճես բարեկամն» էին աղաղակում յայտնի: Քաղաքապետը Եղուիթաց շըլսել չէր կարող. ո՞վ գիտէ, կարելի է ինքն-էլ Եղուիթաց կարդէն էր. թէպէտ և յայտնի տեսնում էր որ ՆիկոԼ ծուռն է, և Եղուիթք բռնութիւն են ուզում անել, և Հայերը իսպառ անմեղ են, բայց երբ որ տեսաւ՝ թէ Եղուիթք այսպէս են կամենում, յօժարեցաւ ինքն-էլ, և պատգամառը ուզարկեց Հայերու մօտ, որ կամ եկեղեցին բանան, կամ դան իւր ատեան և ոսոխներուն պատասխան տան:

Քաջամիրտ Հայերը, աներկւան Հայերը, արդարակորով Հայերը, գիտակից լինելով իրանց իրաւանց և անմեղութեան՝ ո՞չ գընացին և ոչ եկեղեցւոյ դուռը բացին: Հայերը գիտէին, որ քաղաքապետի դուռը

երթալու և պատասխան տալու չունեին  
ստվաղական պատճառ, որովհետեւ Հայերը  
ունեին տէրութենեն ստացած արտօնու-  
թիւններ և այն անժխտելի պարզեագրով  
կամ արտօնագրով նոցա դատաստանը ի-  
րանց մէջ պիտի տեսնուէր, և ոչ քաղա-  
քապեափի ատեանումը: Եթէ Հայերը իրանք  
բազոքէին Նիկոլի վրայ, քաղաքապետը այն  
ժամանակնէլ պիտի Նիկոլին ուզարկէր  
Հայերու ատեան, և ոչ թէ ինքը նոցա մէջ  
նստէր դատաւոր: Եզուիթք սխալեցուցին  
քաղաքապետին, որ նա բնդդէմ արքունա-  
կան պարզեագրին նրանց արտօնութիւնը  
ուզի տակ առաւ: և նրանց իւր ատեանը  
հրաւիրեց: Հայերը լսու գիտեին իրանց  
իրաւունքը, վասն որոյ և չըգնացին: Եզու-  
իթք դրդեցին քաղաքապետին, և նա երկու  
և երեք անդամ կրկնեց իւր հրաւէրը.  
բայց Հայք չըլսեցին: Քաղաքապետը չունէր  
իրաւունք երկրորդել իւր հրաւէրը. երբ  
որ Հայերը առաջին անդամը չեկան, այն  
կընշանակէր, որ նրանք իրանց իրաւունքը  
ճանաչէլ են և ճանաչում են, և իրանց  
չըգալով՝ բողոքում են նորա պարականոն  
արարմանց գէմ, և պիտի զգուշանար. բայց  
տեսնենք Եզուիթականք կըթողնէի՞ն նրան,

որ նա դգաստանար, և յետ քաշուէր. Երկրորդ անգամ հրաւիրելը՝ արդեն նրան հասցրել էր օրինազանցութեան վիհի վախի մօտ. նա այնուհետև գլւաէն ձեռք էր վերցրել՝ ի սէր Եղուիթաց. Եղուիթք-էլ մէկ կողմ դրին ամօթ ի մարդկանէ երեսէն, և երկիւղն յԱստուծոյ՝ ի սրտէն, զնացին ուրիշ վանքերէն-էլ իրանց հետ միաւորեցին լատին կրօնաւորներու բազմութիւն, (այս բողկի սերմերը շատ-էլ են լինում նրանց վանքերումը), առին վարժատուններէն աշխակերտներին, առին եպիսկոպոսէն՝ քահանաներ, առին քաղաքապետէն զինւորներ, (չըդիտեմ սոցա թիւը վեց հարիւր վաթունու վեցէն աւելի՝ էր, թէ պակաս). և այսուկէս խուռն խուժանով գնացին, և իրանց հետ տարան Նիկոլին Հայոց եկեղեցւոյ դուռը, և այն տեղ՝ որպէս ինքնիշխան հրամայող՝ ուղարկեցին Հայոց իշխաններու մօտ հրաման, որ կամ եկեղեցւոյ բանալիքը ուղարկեն, կամ իրանք գան ու եկեղեցւոյ դուռը բանան:

**Հ**այերը՝ որ քաղաքասպետի խօսքով տեղերէն շարժած չէին, ինչի՞ պիտի Նիկոլի և Եղուիթաց խօսքով բան անեին. մանաւանդ երբ որ տեսնում էին, որ Եղուիթք

միայն Նիկոլի ուղեցածն են անում, և կա-  
մենում են ազգին և կրօնը միանգամայն  
վտանգի մէջ դձել. պատասխանեցին՝ եկե-  
ղեցին մեր շինածն է՝ մեր ծախքով և թա-  
գաւորաց հրամանով, և մէջը որքան ա-  
նօթք և սպասք կան՝ մեր տուածն են, և  
եկեղեցւոյ դանձը և ճոխութիւնը՝ մեր նու-  
էլներէն են և մեր վառած մոմի և մեր դան-  
ձանակ դձած արդիւնքներէն են. այդ Նի-  
կոլը, որ դուք եալիսկոպոս էք կանչում՝  
նղովքի տակ է և մեր կաթողիկոսի կոն-  
դակով առաջնորդութենէն արգելած է  
և մեր առաջնորդ ընդունված չէ. դուք  
ինչ իրաւունքով էք մեզմէն եկեղեցին կամ  
նորա բանալին պահանջում, որ գեռ քըն-  
նութիւն եղած չէ և արքունական հրաման  
այդ մասին տնօրինուած չէ:

Հայոց Եղուիթք սկսել էին արդէն իրանց  
բռնութիւնը անել և արդէն ոտքերը առաջ  
էին դրել, չըկամեցան յետ կանգնիլ. տե-  
սան որ՝ Հայերը բաց-ի իրանց անմեղու-  
թէնէն, և բաց-ի իրանց անժխտելի իրա-  
ւունքներէն ուրիշ օդնութիւն չունին. ո-  
րովչետև Հայերը ոչ գալիս էին և ոչ  
բանալիքները տալիս, կամ ուղարկում՝  
լորութիւնը մանեակի պէս կախեցին վիզե-

թէն, եկեղեցւոյ գուռը խորտակեցին, Նիկոլին ներս մտցուցին և յանձնեցին նրան այն ողորմելի եկեղեցին, որոյ ուկեղէն, արծաթեղէն, ականակուռ և թանկագին անօթեները, որրազան սպասները և ծանրակշեռ պատարագի զգեստները, Անիկն ըերած զարդարանքները շուտով պիտի նոցա ծոցը մտնէին ։

Առ որովհետեւ շատ քահանայք կային, որ Նիկոլի արարմունքին հաւան չէին և միւս հաւատագրուժ քահանայից մ.ջէն հետ աացել էին և եկեղեցւոյ դէմ, Քրիստոսի Հարսի դէմ արած բոնաբարութեան ժամանակը խօյս էին առւել, որ իրանց հոգեոր սուգը անեն ծածուկ, Եղանակը քաղաքի մէջ ցրուեցին լքուեներ և զինուորներ, որ ոչ միայն այն ապատամբ առած քահանաներուն բռնուեն, այլև այն եկեղեցական իշխաններուն, որոնք որ չըկամեցան եկեղեցւոյ դռները բանալ, սլատճառելով թէ նոքա քաղաքապետի հրամանին ընդդէմ են կացել . մինչ որ իրանք Եղութք և իրանց հետ համախոհ քաղաքապետը՝ ոչ թէ միայն թագաւորի հրամանին էին հակառակ գործել, այլև Ասոռեցոյ կամքին և Քրիստոսի հրամանին ։ Այն մեծ ձախու-

թիւնները, որն որ կային այն եկեղեցու և  
միւս երկու եկեղեցիներու գանձարաննե-  
րումը, որն որ Նիկոլ տիրապետեց՝ շու-  
տով սկսան մոմի պէս հալուիլ, Նիկոլ որ  
շատ սկարտքեր ունէր՝ սկսաւ եկեղեցւոյ  
մթներները դարսակել, Հրեից գիւրագին վա-  
ճառել, սկարտքերը տալ և Եզրիթմաց  
խոստացած սկարդները բաժնել։ Հայերը  
մնացին առանց եկեղեցու. եկեղեցիք մնացին  
առանց իրանց ճոխութեան, Նիկոլ մնաց  
եկեղեցւոյ չոր սկարտերու և մէկ քանի չօ-  
քացած քահանաներու առաջնորդ, Ժողո-  
վուրդը սկսու իրա տան մէջ աղօթքը տ-  
նել և իւր Աստուծոն պաշտել. ամեն  
մարդ իւր սրտի մէջ համ խունկ էր, համ  
մոմ, համ պատարագ, համ քահանայ.  
եկեղեցւոյ դրանը կանանց արօտ բուսաւ։  
Այս եղաւ 1630 թուին։

Այն ժամանակ Խաչառուր վարդապետի  
էլ աչքերը բացուեցան. հասկացաւ որ Հա-  
յերը ահա սցս պատճառաւ չեին ուզում  
հաշտուիլ և Նիկոլին ընդունել, տեսաւ որ  
ողորմելի ժողովուրդը իրանց գլխի գալիքը  
ըստ են իմացել և դուշակիլ. և որովհետեւ  
քաղաքի մէջ-էլ եկեղեցի չըմնաց, այդ ամենը  
տիրապետեց Նիկոլը, և մէջերը սկսաւ

Եղուիթաց կարգը, կանոնը, ժամասացութիւնը և պատարագը կարգադրել, լիթանիաներով և մշաներով լքցնել, մէկ սեղանի վերայ օրը քըսան պատարագ անել տալ, կարգաւորներուն մէկ ծնկան վրայ կաղացնել, ժողովրդեան ականջիցը ձեռի զանգակի (զանցուալուն, բուժու) ձայնը ըստադրեցնել, հարիւր անգամ «Ողջոյն քեզ Մարիամ» ասել տալ, «անձայն և ձայնաւոր պատարագը բաժնել, թղթի նման բարակ ձկան փուլի սկզբ չոր նշխարքով առանց բաժակի հաղորդել, «ջրախառը պատարագել», «Հոգին Սուրբի Հօրէ և Որդւոյ բղխած» դաւանիլ, «Փափիը գլուխ եկեղեցւոյ» ճանաչցնել, և պատարագի մէջ փոխանակ Հայոց հայրապետութեան յիշատակել. Խաչատուր վարդապետը երբ որ տեսաւ թէ՝ իւր պատգամաւորութեան դործը վերջացաւ՝ գիր գրեց կաթողիկոսին և հրաման խընդրեց որ վերադառնայ, և մինչև հրաման ըստանալը՝ քաշուեցաւ քաղաքէն դուրս՝ Սուրբ Խաչի վանքը, այն տեղ տրտմութեամբ իւր Աստուածն էր պաշտում, ժողովրդեան թշուառութեան վերայ սուգ անում և երկնային այցելութեան սպատում՝ արտասուզ իւր օրը անցուցանելով :

ԳԼՈՒԽ 9.

Նիկոլի չարախնդաց սրտին այն-էլ ցաւ  
էր որ Խաչատուր վարդապետը կոփուներէն  
փախչելով՝ չէր սկառաստում նորա համար  
քաջագօտի ըմբշամարտութեան կրկէս. ա-  
մենեին յօժարութիւն չունեցաւ որ Խաչ-  
ատուր վարդապետը մնայ հանդարտ Սուրբ  
Խաչ վանքի անկիւնումը առանձնացած. կա-  
մեցաւ նորա սրտի մեջ-էլ երկիւղ գձել,  
զինուորներ ուղարկեց, վանքը շրջապատել  
տուեց. և երբ վանականք հարցուցին թէ՝  
ի՞նչ էք ուզում, զինուորք ասին՝ ինչպէս  
որ Նիկոլը և Եղուիթականք խրատել էին,  
թէ օտար տէրութենէն մէկ լրտես է եկել,  
և այս վանքումը թաք է կեցել, նրան  
ենք ուզում, որ բռնենք ու տանենք քա-  
զաքապետի ատեանը:

Սինդեռ Խաչատուր վարդապետը ահ  
ու գողի մէջ բռնուած՝ թաք կենալու տեղ  
էր սկառատում, այն շվոթի միջոցը հասաւ  
այն տեղ Նիկոլն-էլ, և որպէս թէ չգիտէր  
ոչի՞նչ՝ հարցնում էր թէ՝ ինչի՞ն եկել զին-  
ւորքը և ի՞նչ են ուզում։ Զինուորք էլի  
նոյնը պատասխանեցին, թէ այս տեղ թաք  
կեցած օտար աշխարքէ եկած լրտեսին ենք

սլորտում, որ քաղաքապետի առջև հա  
նենք:

Նիկոլ լաւ մարդ ձեանալով ասաց ղին-  
ւորներուն՝ ո՞Դուք դնացէք, ես վերահասու-  
կը լինիմ: Զինուորները դնացին. Նիկոլ  
մտաւ վանք և խաչատուր վարդապետի հետ  
տեսութիւն արաւ, մեղադրեց նրան, որ  
նա քաղաքը թողել է և վանքն է մեկու-  
սացել. (Երանի թէ ինկմ-էլ ճանաչէր իւր  
կրօնաւորական կարգը և մէքիչ սիրէք վա-  
նական կեանքը). առաւ խաչատուր վարդա-  
պետին և հետը բերեց քաղաք:

Խաչատուր վարդապետը, այն Էջմիածնի  
աշխարհատես եվտուն, փորձ և հին եպիս-  
կոպոսը, շատ լաւ էր հասկանում թէ՝ Նի-  
կոլի արածը ինչ խեղկատակութիւն է. բայց  
որովհետեւ ինքը կաթողիկոսէն ուղարկած  
մարդ էր, և միայն նորա աղդօպուտ հրա-  
մանն էր ուղում կատարել, ուստի քհաս-  
կացող ձեացաւ, դնաց Նիկոլի հետ իլով  
քաղաք և մնաց նորա մատ: Նիկոլն-էլ նք-  
րան պատուով էր պահում. կարելի է թէ՝  
յոյս ունէր, որ խաչատուր վարդապետը նո-  
րա կեղծաւորութեամբ կը լսագուի և նորա  
կողմը կ'անցնի, և ժողովրդեան քիչ քիչ  
համոզելով Եղուիթաց և իւր ցանցերու

մէջ կըլսաւուեցնէք բայց Խաչատուր վարդար  
պետին նօրա տուած պատիւը այնպէս էր  
երևում, ինչպէս մէկ կովի գողի՝ շորա ռա-  
քը ողորմութիւն բաժնելը: Խաչատուր վար-  
դապետը դեռ յոյս ունէր, թէ անօրէն Նի-  
կոլը մէկ դարձ ու զզջումն կ'ունենայ, և մէկ  
հնարիւր Հայոց անտէր անխնամ ժողովար-  
դը Խաղաղութիւն կըդանէ, և վշտացած  
եկեղեցին իւր արտասուրը կըցամքեցնէ.  
այս պատճառաւ սպասում էր, որ այս Խաչ-  
առաակ տեսարանի վերջը հանի. բայց  
երբ որ տեսաւ թէ՝ Նիկոլի եղեռնագոր-  
ծութեան ոչ գոյ վախճան՝ յուսակտաւը  
եղած, թողեց և գնաց Եջմիածին 1631 թուին: >

Խնչ որ Խաչատուր վարդապետը պատմեց  
Մովսէս Կաթողիկոսին, մի և նոյնը Խլավ-  
քաղաքէն ուղարկած ոլտոգամաւորները,  
տէր Ախմոն քահանայ և մէկ հատ աշխար-  
հական իշխան, որ Հասարակութեան գրե-  
րով Եկեղ էին սուրբ Ամեու՝ կրկնեցին,  
հաստատեցին և աղողեցին ի դիմաց ժա-  
զովքեան, որ մէկ օգնութիւն հասցնէ:  
Ինչ պիտի անէր ողորմելի Կաթողիկոսն  
էլ այնքան հեռաւոր տեղին. անձարացած  
մէկ գիր գրեց Հառմայ Փափի վրայ, մէկ  
գիր Վեհաց իշխաններու անունով, մէկ

գիր-էլ իլովի արքեպիսկոպոսի մօտ , որ  
ողորմին տառապեալ Հայոց ազգին և ըթո-  
ղուն նրանց առանց եկեղեցւոյ . և այս գը-  
րերը ուղարկեց Հայերու ձեռքը , որ իրանք  
հասցնեն ում և ինչպէս արժան է :

Ա Եհաց նոր թագաւորը Վլադիսլավ 4-դ  
և Եհաստանի իշխանները լսեցին Կաթո-  
ղիկոսի ազանքը , հաւանեցան և հրա-  
մայեցին Նիկոլին , որ Հայոց եկեղեցիները  
յետ դարձնէ Հայերուն . բայց Եզուիթա-  
կանք ընդդեմ կանդնեցան և ասացին . «Այս  
եկեղեցական գործ է , ձեզ չէ պէտք մեջ  
մտնել և խառնուիլ » : Թագաւորը մարդիկ  
ուղարկեց Իլովի Եհաց արքեպիսկոպոսի  
մօտ , որ նա եկեղեցական իշխանութեամբ  
առնու . Նիկոլին եկեղեցիքը և տայ Հա-  
ժողովրդականաց . բայց Եզուիթք թոյլ ը-  
տուին արքեպիսկոպոսին , որ թագաւորի  
հրամանը կասարէ : Յետոյ ինքը Վլադիս-  
լաւ թագաւորը եկաւ արքայական փառօք  
և հանդիսիւ , որ եկեղեցին բռնութեամբ  
առնու . Նիկոլին և տայ Հայերուն : Երբ որ  
իմացան Եզուիթք , թէ թագաւորը գալիս  
է այն մաքով՝ իսկոյն խրոտ տուին Նի-  
կոլին . Նիկոլի-էլ զգեստաւորուեցաւ պա-  
տարագիչ եպիսկոպոսի նման , և մարմնոյ

և արեան սարսափելի խորհրդոց բաժակը  
ձեռքը առած՝ դուրս եկաւ թագաւորի դէմ  
և նրամով սպառնացաւ թագաւորին։ Թա-  
գաւորնեւէլ վախենալով՝ թողեց ու յետ  
գնաց։ >

Խնչ էր այս, որ այսպէս Եղուիթք և Նի-  
կու վախեցնում էին Համ արքեպիսկոպո-  
սին, Համ թագաւորին, և նոքա վախենում  
էին։ Եղուիթք կարող էին ամբաստանել  
Համ արքեպիսկոպոսի վրայ, Համ թագա-  
ւորի վրայ, և նրանց մատնել ինկվիզիցիայի  
ատենին և այս անօրէն ատեանը կարող էր  
նրանց կենդանւոյն այրել։ Ահա թէ ի՞նչ  
զօրութիւն ունէին Եղուիթք և ի՞նչպէս էին  
նոքա Հռոմայ արքանեկութիւն անում։  
Մէկ խօսքը բաւական էր, և թէ ասէին Եղու-  
իթք Վլագիսլաւի Համար, թէ թագաւորը  
հերետիկոս է։ Խսկոյն ինքվիզիայի դա-  
տաստանը կըխմբուէր, և կրօնամու Հռոմե-  
աղաւանք ոչ թէ միայն խարոյկը իրանք  
կըսպատրաստէին, այլև թագաւորին իրանց  
ձեռքով կըդձէին կրակի մէջ։

Հայերը չդադարեցան։ Հայերու թախան-  
ձագին խնդրանք կեհաց թեագաւորնեւէլ,  
արքեպիսկոպոսնեւէլ գիր գրեցին իրանց կող-  
մանէ և տուին Հայերու ձեռքը, որ իրանք

տանեն Հառմ և տան Փափին. և այս գրեթե  
րու մէջ երկու կողմէն-էլ Հայերուն արդա-  
րացնում էին և ազաշում էին, որ Փափիք  
հրամայէ Հայոց եկեղեցիները տալ Հայե-  
րուն: Հայերը այս նամակիները առած՝ գր-  
նացին Հռոմ: Նիկոլն-էլ Եղուիթաց յանձն-  
աբարական թղթերով հասաւ Հայերու յետ-  
նէն: Հայերը տուին իրանց տարած գրերը,  
որոց մէկը թագաւորի տուածն էր և միւ-  
սը արքեպիսկոպոսի: Բայց ո՞վ էր Հռոմայ  
մէջ մէկ օր տրդար դատաստան տեսել: Եղու-  
իթաց խօսքը աւելի բանեցաւ, քան  
Լեհաց թագաւորի միջնորդութիւնը, որ  
իւր թագաւորութեան մէջ չըկարողացաւ  
իւր իրաւացի ճանաշած գործը առաջացնել:  
և Փափիլ տկարացաւ նորա խնդիրը կատա-  
րել: Անչպէս թագաւորութիւն է, ինչպէս  
իշխանութիւն է, ինչպէս կառավարութիւն  
է, ինչպէս կարգադրութիւն է: Լեհաց թա-  
գաւորը իւր թագաւորութեան մէջ չունե-  
ցաւ կարողութիւն արդար դատաստան ա-  
նել, զրկեալ մարդոց օգնել և զրկանքը  
յետ դարձնել տալ: Տեսաք թէ ինչ էին  
Եպուիթք:

Հայերն-էլ, Նիկոլն-էլ դարձան իլով  
և նատան: Հայերը տրտում, իսկ Նիկոլ

ուրախ իրա յաղթութեան վրայ, քայլց քան  
զայտ աւելի էլ ուրախութիւն չունէր. Եկե-  
ղեցիք մերկացել և աղքատացել էին. Նի-  
կոլի առաջնորդութիւնը միայն ժամկոյնե-  
րու վրայ էր. ժողովուրդը եկեղեցւոյ կողմը  
չըր նոյում. որ յիմարը պիտի երթար  
եղուիթական կարգ ու սարք տեսնելու.  
Նիկոլի բարեկամներն էլ զգուել էին և  
հեռացել և ժամումը մէկ մոմ վառող չը-  
կար. Եղուիթները այնքան բարեկամ էին  
Նիկոլին, քանի որ եկեղեցւոյ փողերը տա-  
լիս էր նրանց, և այս պատճառապ միայն  
տէրութիւն էին անում նրան և չայե-  
րու դէմ ուժ էին տալիս, այնպէս որ երբ  
Հայերը սկսան եկեղեցւոյ փողերու վատնե-  
լու համար բողոքել ոչ թագաւորը, ոչ  
փափր չըկարողացան Նիկոլին սանձել. և  
ինչի՞ պիտի սանձէին, երբ որ Հայերի գան-  
ձը մտնում էր Եղուիթաց գանձարանը ի  
փառս Մեծին Առուեծոյ: Այս ցաւին Փիլիպ-  
պոտ կաթողիկոսն էլ, որ 1633 թուին Մով-  
սէս Կաթողիկոսի տեղ նոտաւ Հայրապե-  
տական աթոռ, չըկարողացաւ ոչինչ դարման  
հասցնել, թէպէտ և շատ ջանք արաւ:

Տեսան Հայերը որ մէկ տեղէ իրանց օդ-  
նութիւն չըկայ սկսան իրան Նիկոլին աղա-

չել : Նիկոլ միայն մեկ բան էր պահանջանջում, որ Հայերը թողնեն իրանց եկեղեցւոյ վարդապետութիւնը և ընդունեն Հռոմայ կրօնի վարդապետարանը և դաւանութիւնը, և ըստ ամենայնի վարուին Եզրիթաց ծէսերով : Հայերը լսել անդամ չեին ուզում այդ բաները, այդ պատճառաւ Նիկոլն-էլ չեր լսում նրանց կողկողադին թախանձանաց :

Տարակուալել էին Հայերը և չըդիտէին թէ, ի՞նչ անեն, իրանց Եկեղեցւոյ կարգն ու դաւանութիւնը փոխել յանձնառու չէին կարողանում լինել, և առանց եկեղեցւոյ մնալ հնար չեին դտնում : Յօժար էին նոր եկեղեցի շինել, բայց ո՞վ կ'ուտար նոցա հրաման, ո՞վ կ'ուտար նոցա քահանայ, ո՞վ կ'օծեր այն եկեղեցին, ամեն տեղ կային եղուիթաց երկիւզը և արհաւիրքը : Տիրել էր Հայերու վրայ յուսահատութեան սուզը երեխայք ծնում էին, և մնում էին առանց մկրտութեան, որովհետեւ եթէ մկրտու էին՝ պիտի լատինական ծէսով մկրտու էին, Հռոմեական ձէսով օծու էին, Եջմիածնի միւռնը այն տեղ չեր բանում : Հիւանդները մեռնում էին, ո՛չ հաղորդող կար, և ո՛չ Հայաստանեաց Եկեղեցւոյ կարգաւորութեամբ թաղող եթէ, հիւանդին հաղորդելու և վերջին

թոշակը տալու քահանայ էին հրաւիրում, >  
Նիկոլ պահանջում էր, որ առաջ հիւանդին  
տունով, տեղով, ազգականով, ընտանիով  
կաթոլիկ շինեն, Փափին հաւատալ տան,  
և ապա հաղորդեն, այն էլ միայն չոր թըզ-  
թանմանն շխարով, ևո՛չ մարմնով և արեամբ  
միասին: Պատկերը օրհնութեամբ կատարող  
չըկար. և ով որ առանց պատկի էր, ինչպէս  
պառնիկ էր դէպ ի դատաստան քաշվում,  
խայտառակութիւն կրում, տուգանաց և  
տուժի տակ ընկնում և ամեն հալածանաց  
հանդիսում:

**Ա**շթէ գնում էին ուրիշ երկիր կամ երե-  
խայ մկուելու, կամ պատկը օրհնել տալու,  
երբ որ յետ էին դառնում, ընկնում էին  
Նիկոլի ձանկը, և նա Եղուիթաց իշխանու-  
թեամբ և անիրաւ Լեհ դատաստանապետ-  
ներու ուժով, նրանց հոգիները փորերէն  
քաշում հանում էր: Շատ մարդիկ թողին  
իլով քաղաքը և բոլոր Լեհաստանը, ուր  
որ Նիկոլի ձեռքը հասնում էր, և ցրիւ  
ընկան օտար երկիրներ. և որովհետեւ եղու-  
իթականք չէին թողնում, որ նոցա կալուած-  
ները մէկ մարդ փող տայ ու գնէ, որ նոքա  
էլ աղատուին, խեղճ Հայերը հարկադրում  
էին թողնել իրանց տուն ու տեղը, և ամեն

ստացուածքը, և փախառականի նման երկրէ երկիրը տարագրուիլ, և սլորուել այնտպէս տեղ, ուր որ Նիկոլի թոյնը չըհաներ բայց էլի չէին ազատվում. Եթուիթաց ձեռքը ամեն տեղ հասնում էր և ամեն տեղ վիսա էր հասցնում Հայերուն Քաջանայից մշցէն-էլ շատը, որոնք որ իրանց հաւատքը ունակովս չարին, իրանց եկեղեցին չուրացան և Նիկոլի վիճակի մշց չըմնային, (և մնալով ինչ սիրի անէին, ում քառ հանայ սիրտի ասուէին, երբ որ ժողովուրդ չըկար) թողին իրանց աղջեալ տաճարները և գնացին ուրիշ երկիրներ, ոմանք-էլ հասան մինչև Եջմիածին և սկառմեցին Փիլիպպոս կաթողիկոսին և Միաբանից Արհանանի Հայերու գլուխն եկած փորձանքը:

Այս Եջմիածին համազարանաներու մշցն մ.կին Փիլիպպոս կաթողիկոսը տեսառ, որ ինքն սցրիացած է և ունի արժանաւորութիւն և խօչեմութիւն՝ ձեռնադրեց եալիսկասլոս և ուղարկեց Խլով, որ մէկ դարման գտնէ. բայց Նիկոլ, Եղուիթաց օդնութեամբ, չժողեց նրան որ մտնի եկեղեցի, և այսալէս մէկ խռովութիւն-էլ նոր վեր կացաւ. Մէկ Գոմինիկեան կարդի կրօնաւոր՝ Պողոս Սիդերնացի, որ Եջմիածին

էլ կեցել էր, և Կոնստանտինուալիս-էլ  
Հայերու հետ ծանօթ էր, և նրանցմէն շատ  
մարդասիրութիւն էր տեսել, եկաւ մեծ  
յուսով, որ իլով քաղաքի Հայերու և Նի-  
կոլի մէջ մէկ հաշտութիւն սերմանէ:  
Բայց որովհետեւ Նիկոլ սինդում էր, որ  
Հայերը բոլորովին իրանց եկեղեցւոյ արա-  
րողութիւնը թողուն և ընդունին Եղուի-  
թաց ծեսէրը, թէպէտ Սիդերնացոյ ցան-  
կութիւնն-էլ այն էր, որ այնքան Հայ միա-  
համուռ կաթոլիկ դառնան, և ինքը Հայե-  
րու առաքեալ կոչուի, ոչինչ չըկարողացաւ  
անել, որովհետեւ Հայերը տեսնում էին, որ  
Գումինիկեան Պօղոսը մէկ նալլէն, մէկ մէկն  
տալով՝ միայն ուղում է Հայերուն կակղեց-  
նել և մեղրով օճած դառը գեղահատը կուլ  
տալ տալ: Պօղոս Սիդերնացին երբ որ  
տեսաւ, թէ հնար ըլկայ՝ գնաց Հռոմ, որ  
Փափէն մէկ օգնութիւն բերէ. բայց նորա  
յետևէն-էլ հասաւ Նիկոլ Հռոմ և Եղուի-  
թաց օգնութեամբ սմեն բան խափանեց:  
Եւ այս տևեց մինչև 1642 ը: Այս տասներկու  
տարի տևած շիտթներու միջոցումը, որ  
Հայերը եկեղեցւոյ երես չէին տեսնում,  
Խղճալի ժողովուրդը օր ըստ օրէ ցրուելով  
սլակսել էին ինչպէս Իլովէն, նոյնպէս և Նի-

կոլի բոլոր վիճակէն, և հազարաւոր տուներէն հաղիւ թէ մնացել էին իլով քաղաքումը վայր ի վերոյ, անձար անձարակ սինլիքոր հարիւր տուն, որ ոչ թէ Նիկոլի նման շռայլ և ցոփ առաջնորդ, այլ և մեկ հատ քահանսոյ սլահելու չէին կարող : Այս պատճառաւ Նիկոլն-էլ աղքատացել էր և սլարտքի մէջ խեղզվում էր: Այժմ ինքը սկսաւ հաշտութեան ճանփաներ սլարտել. բայց ո՞ւմ հետ սիտի անէր այն հաշտութիւնը, որ ժողովուրդ մնացած չէր. մնացած աղքատներն-էլ այնսկէս էին զզուել, որ հաշտութեան անունը ևս լսել չէին ուզում. որովհետև արդէն 1648 թիւը հասել էր, քսանումէկ տարի էր, որ Նիկոլ նրանց հետ մաքառում էր, և տասնութը տարի էր, որ առանց եկեղեցւոյ մնացել էին, — էլ ի՞նչ հաշտութիւն սիտի լինէր: *7*

Եղուիթք-էլ որ տեսան թէ՝ Նիկոլը աղքատութեան և սլարտքի մէջ սլարանոցաթաղ ընկղմել է, ծիծաղելով նորա յիմարութեան վրայ՝ թողին ու հեռացան: Նիկոլ մնաց կոլի հօտօշչ նման բաց: *7*

Չորս տարի-էլ վրայ անցաւ հասաւ 1652 թիւը: Այս տարի Փիլիպոս կաթողիկոսը իւր Հայրատագետական պաշտօնէն ըս-

տիսլուած՝ աղզի գործերու համար եկաւ  
Կոնստանտինուալոլիս: Աներես Նիկոլը, որ  
այնքան ժամանակ, (քսանուերեք տարի)  
Էջմիածնին և Հայրապետին անսրգել էր,  
Եկեղեցին և կրօնը վըշտացրել, լրբար  
մտքումը դրեց երթաւ կաթողիկոսի մօտ և  
նրամով մէկ հաշոռմեան հնար գտնել.  
բայց չուներ ճանփու ծախսը անելու փող: 7

Հայոց Եկեղեցւոյ գանձարանի գողը,  
աւաղակը և յափշտակողը, Քրիստոսի գան-  
ձանակի ցեցը, ուտիձը և ասլականողը՝ էլի  
Հայ վաճառականի ողորմութեան ասլաւի-  
նելով՝ ճանփու ծախսը ստացաւ: Յւղոկիա-  
ցի Մարկոսի որդի Սիմոն Հայ վաճառա-  
կանը, երբ որ լսեց թէ այն անառակ որդին  
սկիտի դտունսոյ առ իւր Հոյրը՝ գթացաւ և  
տուեց երկու հաղար դահնեկան: Այս փո-  
ղով Նիկոլ ճանփայ ընկաւ և հասաւ Պօ-  
լիս, ուր որ երկրորդ գալն էր Հայերու-  
ոգնութեամբ: Իլովցիքն-էլ իրանց դատա-  
ւորներէն մէկին՝ Խաչիս անունով, ուղարկե-  
ցին, որ Նիկոլէն առաջ հասաւ Պօլիս, և  
խօսեցաւ Փիլիպոս կաթողիկոսի հետ: Իլովցիք  
կաթողիկոսէն այս էին պահան-  
ջում, որ եթէ Նիկոլ (Աստուած մի՛ ա-  
րասցէ) սկիտի մնայ նրանց վրայ առաջնորդ՝

այս երեք պայմանը անշուշտ թող կատարէ. նախ որ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը ինչպէս որ կար՝ այնպէս պահէ անխախտ. երկորդ՝ Հայոց Եկեղեցւոյ ծէսէրը, տօները, պատարագի կարդը կամ միւս պաշտամունքը և նոցա ձևերը Նիկոլը ընհամարձակուի փոխելու. երրորդ՝ Եկեղեցւոյ մէջ միայն կաթողիկոսի անունը յիշատակէ, և մի՛ բնաւուրիշ անուն, ով կ'ուզէ լինի. այս յատկապէս Փափի անուան համար էին ասում :

Մինչև այս տեղ պատմութիւնը չունի պատճառ երկրայութեան մէջ ձգելու ընթերցողին, որովհետև Խլով քաղաքի մէջ գրուած մատեաններու յիշատակարանները ևս հաստատում են այդ ամենը. բայց այսուհետև, նոյն յիշատակարաններու հիման վրայ մենք չենք կարող հաւատալ, թէ և հաղար ականատես և ականջալուր վկաներու բերնէն լսէինք, թէ գործը այնպէս է վերջացել, ինչպէս որ պատմութիւնը աւանդել է: Միքայէլ Չամշեանը կամեցել է միայն ցոյց տալ, որ Խլովցիք հնազանդուել են Նիկոլին, և այն սլատճառաւ Փիլիստպոս կաթողիկոսին-էլ մէջ է բերել. ուստի պատմութիւնը շարունակում է սյսպէս.

Եկատ Նիկոլն-էլ Պօլիս և տեսութիւն

արաւ կաթողիկոսին։ Կաթողիկոսը որ լսել  
էր նորա ոստիսներու ամբաստանութիւնը՝  
նրա ասածներն-էլ լսեց. (արդեօք Նիկոլ  
ինչ խօսեցաւ իւր անձին ջատագովութեան  
համար). յետոյ կաթողիկոսը ժողովրդեան  
սլահանջած պայմանները առջեր դրեց և  
իրանմեն-էլ աւելացուց մէկ բան, որն որ՝  
ժողովրդականք մոռացել էին, բայց շատ  
հարկաւոր էր համարել կաթողիկոսը. այս՝ որ  
Նիկոլ և իւր յաջորդները լինին միշտ էջ-  
միածնի կաթողիկոսին հպատակ, և միշտ  
էջմիածնի կաթողիկոսէն ունենան ձեռնա-  
դրութեան և առաջնորդութեան հրամանը։  
Նիկոլ որովհետև Եզրուիթաց օգնութիւնը  
էլ չունէր (ուրեմն, եթէ ունենար՝ չէր յօ-  
ժարիր), ամեն պայմանի յանձնառու-էլ եղաւ  
և ձեռագիր տուեց. բայց յետոյ շատ աղա-  
ցեց կաթողիկոսին, որ երբ ինքը Նիկոլ  
լինի պատարագիչ՝ կարողանայ կաթողի-  
կոսի անունէն յետ Փափի անունն-էլ յի-  
շատակել։ Փիլիպպոս կաթողիկոսն-էլ խա-  
ղաղասէր մարդ լինելով, ներողաբար հրա-  
մայեց, թղթերը տուեց Խաչկոյի ձեռը  
և հրամայեց, որ տանի Խլով, տայ ժողո-  
վրդեան և պատուիրէ, որ զգուշութեամբ  
պահեն (որ Նիկոլը ըգողանայ և չը ոչնչա-

ցնէ), և այնու հետև այնպէս վարուին.  
իրան Նիկոլին-էլ արձակեց բանագրանքէն  
և հրաման տուեց, որ երթայ իւր առաջ-  
նորդութիւնը անէ այն կարդուլ, ինչպէս որ  
ուխտել էր : 7

Այսրբ որ Նիկոլ ու Խաչկոյ հասան իլու<sup>շ</sup>  
իմացուցին ժողովուրդին կաթողիկոսի տը-  
նօրինութիւնը (որ Վելքիաէթ կաթողիկո-  
սի տնօրինութիւնէն տակաս չէր), և Խաչկոն  
ցոյց տուեց Նիկոլի ձեռագիրը, ժողովուրդը  
թէսլէտ ուրախացան, բայց Նիկոլի երեսը  
էլի տեսնել չէին ուղում : (Այն ի՞նչ ուրա-  
խութիւն էր, որ Նիկոլին չէին ուղում  
տեսնել . աստ ի՞նչի վրայ էին ուրախացել)։  
Տէր Զաքարիա աւագ երեցն-էլ շատ ջանք  
արաւ, բայց ժողովրդեան սիրաը չէր զի-  
ջանում :

Ալ սեց Փիլիսոլոս կաթողիկոսը Նիկոլի  
նեղութիւնը և խնայեց, միաբը բերելով  
որ իւր նախորդ կաթողիկոսի ձեռնագրածն  
է՝ ուղարկեց իւր աշտկերտներէն մեկին  
Արղնցի Յովհաննէս վարդապետին, որ Խլովի  
ժողովրդեան և Նիկոլի մէջ հաշտութիւն  
դձէ: Յոհաննէս վարդապետը շատ օր քա-  
րոզեց ժողովրդեան, խրատեց, յորդո-  
րեց և աղաչեց թէ իւր կողմանէ և թէ կա-

թողիկոսի կողմանէ, թէ առանձին և թէ  
հրավարակաւ, մինչև կարողացաւ նոցա  
բարկութիւնը մեղմել: Երբ որ տեսաւ թէ  
փոքր ինչ ժողովուրդը սկսաւ քաղցրանալ՝  
առաւ ամենեցուն հետ Նիկոլին-էլ և տա-  
րաւ բազմութեամբ եկեղեցւոյ դուռը. և  
այն տեղ առաջ եկեղեցւոյ առջև աղօթք  
կատարեց, օրհնեց ժողովրդեան կաթողի-  
կոսի կողմանէ, յետոյ առաւ բանալիքները  
եկեղեցականներէն, համբուրեց Նիկոլի աջը,  
և տուեց բանալիքը Նիկոլի ձեռքը, որ ին-  
քը, որպէս առաջնորդ՝ բանայ եկեղեցին:

Նիկոլ զշմամբ և արտասուաք բացեց  
եկեղեցւոյ դուռը, ահիւ և դողութեամբ  
սասանած ներս մտաւ. ժողովուրդն-էլ նորա  
յետելին ներս թափեցան՝ մեծակալան ձայ-  
նիւ ողբալով և լալով իրանց այնչափ անձ-  
կութեան և կարօտանաց համար, որով նոցա  
սիրտերը տուորվում էին և այրվում. քսան  
քսանուերեք տարի իրանց եկեղեցին որ-  
բացած և այրիացած լինելով և թափառ-  
թեան մեջ մաշուելով: Երբ որ առաջին  
հառաջանքն ու արտասուաքը, լացն ու ողբը  
դադարեցան, Յոհաննէս վարդասկետը ելաւ  
բեմը, և մէկ լու միսիթարական քարոզ ա-  
սաց. և երբ աւարտեց, խոնարհութեամբ

մօտ եկաւ Նիկոլին ու խնդրեց, որ Նա-էլ ժողովրդեան հետ խօսի և օրհնէ: Նիկոլն էլ առաւ խաչը և Աւետարանը, տեառնադրեց և օրհնեց ամենեցուն: Սրամով ժողովրդեան սիրտը դարձաւ, ամենեքեան մեծ ու սպատիկ սկսան լալ, հետ զհետէ գալ և Նիկոլի սուրբ աջը համբուրել, նորա հսյրական և քահանայապետական օրհնութիւնը առնուլ, և ամենեքեան հաւատոյ շինութեամբ միսիթարուած՝ ուրախութեամբ գնացին իրանց տները: (Զարմանք է, որ նորա ուժի տակի հողն-էլ ըստարան իրանց հետ՝ հոգւոց և մարմնոց բժշկութեան դեղ: Երեխ տարել են, բայց Զամշեանը մոռացել է գրել, կամ համեստութիւնը չէ ներել):

Դյարբ որ լսուեցաւ քաղաքի մ.ջ այս հաշտութեան լուրը, ասում է պատմիչը, ամենեքեան, ոչ թէ միայն Հայք և Լեհք, այլև Հրեայք ուրախացան և գալիս էին Նիկոլի մօտ շնորհաւորութի, (ինչո՞ւ, — որ կարողացաւ էլի իւրցանկութեան համել, որով նոցապարտքերն-էլ կը հատուցանէր): Եկաւ իլովի արքեպիսկոպոսն-էլ Հայոց եկեղեցի և շնորհակալութիւն խօսեցաւ դէալ ի Յոհաննէս վարդապետը, և օրհնեց ժողովրդեան (ինչո՞ւ, — որ Հռոմայ եկեղեցւոյ վարդապետու-

թեան դէմ քսանուերեք տարիի կռիւ արին):  
ո Եւ որովհետև Եան Կաղիմիր Երկրորդի  
յաջորդ՝ Վլադիսլաւ 5-րդ, այն օրերը Խլով  
էր եկել, նա-էլ երբ լսեց, ուրախացաւ և  
զարմացաւ (ինչու, —որ Նիկոլ այնքան յա-  
մառ գոլով կաթոլիկութեան մէջ, այդպէս  
հեշտ ընդունեց Հայոց Եկեղեցւոյ հնազանդու-  
թիւնը), կանչեց իւր մօտ Յոհաննէս վար-  
դապետին, և շատ շնորհակալութիւն ասաց-  
(ինչու, —որ Նիկոլին հանեց Հռոմեական եկե-  
ղեցիէն և տարաւ Հայոց եկեղեցի), և շատ  
սկարգեներ-էլ տուեց: Նիկոլ յիսունուհինք  
տարի առաջնորդութիւն արաւ: (Երեի որ  
նախասահմանութիւնը նրան տուեց երկար  
ժամանակ, որ նա իւր անթիւ անհամար  
յանցանքներու համար կարողանայ զզջալ  
և ապաշխարել). բայց Խլով քաղաքը միւս  
անգամ իւր առաջուան հայաբնակ բազմու-  
թեան շինութիւնը չունեցաւ. Հայերը հե-  
ռացել էին և վաճառւականութիւնը իրանց  
հետ արդէն տարել էին օտար աշխարքներ:

Բայց որքան հեռայ են արևելք արևմուտ-  
քէն, այնքան հեռի է այս վերջաւորութիւ-  
նը Ճշմարտութենէն: Խնչպէս թոյլ կուտա-  
յին Եղուիթք Նիկոլին, որ նա իւր խոստ-  
ման դէմ նոցա իշխանութեան տակէն դուրս

գար, որ նա կրկին Հայ անունը վրեն առնուր, և միւսանգամ եպիսկոպոս և Հայոց առաջնորդ լինէր: Լեհացիք թոյլ կուտային. ի՞նչպէս սլատահեցաւ, որ յանկարծ ամեն դայլերը դառնացան: Առւտ է այս. կաթոլիկական աշխարքի մէջ Հռոմոց յանցը ընկնիլը շատ հեշտ է, այլ այն յանցէն դուրս գալը՝ շատ դժար և անկարելի:

Խլով քաղաքի Լեհազդի բնօնլչաց, Հռոմէառուան կրօնաւորաց, մոլեռանդ կաթոլիկաց և նոյն խոկ տէրութեան կողմանէ այնքան խոչ և խուժ պիտի դուրս երեէին, որ Նիկոլ ո՛չ թէ Հայոց եպիսկոպոսութիւնը ստանար, Հայոց Հայրասլետին հնազանդէր և Հայ ժողովրդեան առաջնորդութիւն անէր, այլև եթէ միայն մտքէն անցուցանէր միւսանգամ հոյութիւնը, իւր բարերար և իւր բարեկամ Եղուիթաց ձեռքով կ'ընկնէր ինկովովիցիսցի կրակի մէջ, որպէս պատարագ ողջակէվ ի հոտ անուշից:

Վշրբ և ի՞նչ սլատձառու Եղուիթք տկարացան այդքան, որ Նիկոլ ըստ իւր հաճոյից գլխաբեկը շքջեց յայս կոյս և յայն, և նոքտ շքկաբողացան նրան մէկ բան անել, որ երբեմն թագաւորներուն էին ընդդիմանում, և տէրութիւններու հակառակ կան-

դնում էլի այս երկրումը, և այն Նիկոլի  
համար: Ուրեմն այս ջամշեանի սլատմածը  
պիտի համարինք Եղուիթաց թելադրու-  
թեամբ արած, և ո՛չ կատարեալ զգջմամբ.  
ուրեմն Նիկոլ ուղեցել է խարել, և խարել  
է իսկ: Տեսնենք թէ Փիլիսլոս կաթողի-  
կոսն-էլ հեշտ խարվելս մարդ էր. տեսնենք  
թէ՝ նա կարսղ էր գանել իւր մէջ բաւա-  
կան զօրութիւն, որ այն անդեղջ յանշաւո-  
րին ներէր:

ԳԼՈՒԽ 10.

Փիլիսլոս կաթողիկոսը ո՞րքան թմրած  
հոգի սկստի ունենար, որ այնպէս շուտով  
ներէր Նիկոլին, երբ որ Նիկոլ նորա նա-  
խորդին և նրան իսկ, այնքան տարի և այն-  
քան զանազան և բազմասլատիկ անդգա-  
մութեամբ վշտացուցել էր, և մեկ ընդար-  
ձակ վիճակ, քառասուն հազար դերդաստանէ  
քաղկացած, քարուքանդ էր արել, և աշ-  
խարքի երեսին ցրիւ էր տուել՝ միայն իւր  
չար դիտաւորութեան մէջ կամակոր կինա-  
լու համար: Թէպէտ և Փիլիսլոս կաթո-  
ղիկոսը այդ սխալման մէջ գտնուած չէ,

սակայն թէ և նորա համբերութիւնը, հեղութիւնը, անյիշաջարութիւնը՝ երանելոյն Յորայ առաքինութիւններու հաւասար լինէր, այս տեղ վորքը ինչ անօխակալութիւնը նրան յաւիտենական նախատանքի տակ սկիտի թողուր: Միքայէլ Զամշեանը թէսլէտ և գովում է. Փիլիպոս կաթողիկոսին այս մասին, բայց նորա գովասանութիւնը այս տեղ քան զհայհոյելը աւելի վատ է. այն գովասանութիւն չէ, այլ ծազը է, որում ո՛չ երբէք է արժանի Փիլիպոս կաթողիկոսը: Զամշեանը այն ոճով է գովում Փիլիպոս կաթողիկոսին, ինչպէս որ սովորութիւն ունի բոլոր պատմութեան մէջ, որ այն կաթողիկոսները որոնք որ կամ Յունաց, կամ Հռոմայեցոց առջև ցոյց են տուել թէ՝ կրօնական ներողամութիւն են ունեցել, նրա գրչի տակը վահանէլ էն. իսկ որոնք որ Հայոց Եկեղեցւոյ ճշմարտութեան ջատադով են գտնուել, նորա պայծառութեան համար խօսել են և օտար աղքաց կարծիքներէն իրանց բանաւոր հօտը աղատ են պահել՝ մշտէլ էն: Զամշեանը այս առարկայի մէջ այն սկատմիներէն է, որ Ռուբենեանց թագաւորներու մշտէն Հռոմայ Հպատակութեամբ խմորուածներուն և նո-

ցա եղեդան հնչիւնով կաքաւող թերամիտ  
և թեթևամիտ հաստագլուխներուն ի՞նտե-  
ռուն և բորիդուշտ անուն են տալիս:

Եյս տեղ-էլ ջամշեանը Փիլիսպոսի Պօլիս  
գալը իւր բանաստեղծութեան յարմար  
գտնելով, Նիկոլին-էլ է բերել Պօլիս, իլուց-  
ցոց պատգամաւորին-էլ, և Փիլիսպոս կա-  
թողիկոսին էլ տեսութիւն է անել տուել.  
և իրը թէ Փիլիսպոս կաթողիկոսը մէկ  
ազգի հաճոյ և օգտաւէտ բան արած լինե-  
լով՝ ներողամիտ է ձևացուցել: Նիկոլին-էլ  
կաթողիկոսի հրամանին հնաղանդ է ցոյց  
տուել այն նստատակաւ, որ վերջը ասէ թէ  
Նիկոլի խնդրանօք կաթողիկոսը հաճու-  
թիւն է տուել, որ Նիկոլը իրաւունք ունե-  
նայ իւր սլատարագի մէջ Փափի անունը  
յիշել: Տե՛ս թէ այս անիրաւ սլատոմիջը ո՞ր-  
քան յիմար է կարծել ազգին, որ այսպիսի  
առասպելները դրել է և դրել է Հայոց  
ազգի առջեր, որ կարդան ու հաւատան,  
թէ Փիլիսպոս կաթողիկոսը ներել է Նիկո-  
լին՝ հոգւով Եղուիթներուն յարեալ չեսլիս-  
կոպոսին, և բաց յայսմանէ՝ նրան համար-  
ձակութիւն է տուել Փափի անունը յիշել,  
և յետոյ հրամայել է ազգին, որ հաշտուին  
և նրան առաջնորդ ճանաչեն. այն միտք չը-

բերելով, որ Հայերը այն կաթողիկոսին  
հայրապետ ալիտի չըճանաչեն, ով որ նրանց  
առէ թէ՝ Նիկոլին առաջնորդ ճանաչեցէք.  
և այս այնալէու մարդու վրայ, ինչպէս որ  
Փիլիպոս կաթողիկոսն է, որոյ անունը  
Հայոց եկեղեցւոյ մ.ջ տեղիս տեղիս Առաքե-  
լոցումն են միշտ յիշում։ Եւ իւր այս սուտը  
լաւ կուլտաւ տալու համար՝ զովում է  
Յոհաննէս վարդապետ Արքացուն, որ այն-  
պէս հաշտութիւն արաւ, մինչև Եան Կա-  
ղիմիր թագտուրի յաջորդ Վլադիմարը  
շնորհակալութիւն խօսեցաւ, և Իլովու ար-  
քեսլիսկոպոսը ու Հրեայք շնորհաւորեցին։  
Այս Զամշեանի խօսքերը սպատմութիւն չէ,  
այլ բանաստեղծութիւն է կամ առասպելա-  
կան հետեւ է, որ միշտ հարսանիքով  
վերջ կըլինի։

Ի՞նչ էր Փիլիպոս կաթողիկոսը։ Ազգի  
հայրապետ, և ո՛չ թշնամի։ Նա ի՞նչպէս էր  
կարող ներել այն մարդուն, որ ազգին այն-  
քան վեաս էր տուել. և ի՞նչպէս կըկամե-  
նար միւսանգամ զին տալ այն մարդու  
ձեռքը, որ դահիճութիւն անելով էր ծե-  
րացել. ունէ՞ր այնքան իրաւունք, որ Նի-  
կոլի նման վեասալարտ մարդուն ներէր.  
ուրիմն Մեհրուժան Արծրունուն-էլկարող էր

ներել. Վասակին-էլ, Ամբատ Ապլաբասին-էլ,  
Գագիկ Արծրունուն-էլ, Վեստ Սարդիսին-  
էլ, և նոցա նմաններուն-էլ, որ եթէ գային կա-  
թողիկոսի ոտքերը լնկնէին, լսյին, ողբային՝  
նա կարող էր նրանց միւսանդամ բարե-  
սլաշտ և բարի Հոյ անել: Փիլիսոփոս կա-  
թողիկոսը ի՞նչ հարկադրութիւն ունէր Հա-  
յոց ազգի վիրաւորուած սրտին վերս ի  
վերս վիրաց և ցաւս ի վերս ցաւոց ա-  
ւելացնելու: Հոյոց ազգը միթէ ոլակա՞ս  
ապարազդէ էր նրամտվ, որ Մելքիսէթ կա-  
թողիկոսը՝ Նիկոլին՝ լնդդէմ ազգի կամաց  
եսլիսկոս էր արել և առաջնորդ էր գը-  
րել. ի՞նչ իրաւամբք պիտի Փիլիսոփոս կա-  
թողիկոսը ասէր ազգին՝ «Պաշտեցէք այս  
կուռքը»: Ի՞նչ հրովարտակներով էր եկել  
Նիկոլ, որ Փիլիսոփոս վախսնար. ի՞նչ ոլար-  
զելեստթիւն ունէր Պօլսոյ Հոյերու առջի,  
որ Հայրազետը ի սէր նոցա անէր: Զունէր  
իրաւոնք. կամ չը՞ր կարող, կամ շատ յան-  
ցաւոր կը համարուէր, եթէ Յամանցոց դրան  
իմացում տար Նիկոլի համար, թէ Կիհաց  
թագաւորութենէն եկած Հոյոց ազգի սց-  
քան տարուան հալածողն է, և աքսորէր  
մէկ կողմը. կամ ինչպէս նա էր ասել Խա-  
չատուք վարդապետի համար թէ՝ լրտես է:

ի Հարկէ, Փիլիպպոս կաթողիկոսը այդպիսի  
անարդ և ազտեղի ճանապարհներով ման  
եկող մարդ չէր. բայց այն-էլ նրա համար  
շատ անվայելուչ բան է, եթէ որ միայն այն  
մասին, որ Նիկոլը եկել է նորա ոտքերը  
համբռւրել է՝ նա նրան ներել է և կրկին  
Հայոց Եկեղեցւոյ փեսայացրել է. ուրեմն  
Փիլիպպոս կաթողիկոսը լաւ չէ իմացել թէ  
ինչ է Հայրապետութիւնը և թէ ինչ է  
ազգի Հովուապետ լինելը։ Աստուած մի  
արասցէ։

Փիլիպպոս կաթողիկոսը միայն կարող  
էր ներել Նիկոլին այն մասին, ինչ որ արել  
էր նա նորա դէմ. իսկ ինչ որ արել էր  
նորա նախորդներուն, ինչ որ արել էր եկե-  
ղեցւոյն, ինչ որ արել էր ազգին, կրօնին,  
ինչ որ արել էր հօգեսոր ծէսերու դէմ,  
տեսնենք թէ Քրիստոս ինքը կըկամենար  
թսղութիւն տալ, որ Կաթողիկոսը տար:  
Քրիստոս մոտաւ Զաքէոսի տուն։ Զաքէոս  
ասաց, ո՞Տէ՞ր, զիէս ընչից իմոց տաց աղ-  
քատաց։ Քրիստոս պատասխան չըտուեց.  
բայց երբ ասաց Զաքէոս. ո՞Եթէ զոք զըր-  
կեցի՞ հատուցից չորեքին միայն այն ժա-  
մանակը ասաց Քրիստոս. ո՞Այսօր եղեւ փըր-  
կութիւն տանս այսորիկ։ Նիկոլը չէր զըր-

կեւ մէկ ողս. այլ հազար և բիւր ողս. ունմն  
էր ի՞նչ հատուցել, ո՞չ թէ չօրեքին, այլեւ  
մէկ քաղցր խօսքով՝ այն թունաբեր դառ-  
նութեան չար արմատը. որ Փիլիպալոս կա-  
թողիկոսն-էլ տեսնելով նորա արժանի ա-  
պաշխարութեան սկսուզը՝ տասլարը չըդնէր  
առ արմին ծառոյն, ու առաս առատ ներո-  
զութիւն տար, առաջնորդ անէր, Փափի  
անունը յիշելու թոյլ տար և ժողովրդեան  
գլխին մարձ ուղարկեր Յոհաննէս վարդա-  
պետին, որ անշուշտ հաշտուին: Այս ի՞նչ  
առասպելաբանութիւն է, ինչի՞ ճշմարիտը  
չէ զրում, ինչ որ կարող է բանականու-  
թիւնը թելազրել: Աեր ժամանակակից  
հեղինակներու մէջէն սրարիր Բռնը մէկ  
առարկայի վրայ քննութիւն անելով, ա-  
սում է. ո՛չ թէ այն մասին է վեճը, որ  
մէկ առարկայի մէջ հաւանականութիւնը  
սկակաս է, այլ այն մասին է՝ որ ճշգրտու-  
թենէն զուրկ է. և խակասէս այն կէտի մէջ  
պատմութիւնը և տարեգիրը մէկ զմէկէ  
տարածայնվում են: Այսպէս մենք-էլ շենք  
ասում թէ անկարելի էր Նիկոլին գալ  
Պօլս, Հանգիսկիլ Կաթողիկոսին և Խընդ-  
քի նրամին ներողութիւն. այլ միայն այն  
էր անհաւատալի ու անհնարին, որ այն-

պիսի աղդասէր Կաթողիկոսը աղդի մահա-  
բեր թշնամուն ներէր, աղդի վրայ առաջ-  
նորդ դնէր. մինչ որ աղդը նորա դէմ մա-  
քառելով՝ անդարձ վեսաներ էր քաշել և  
անփոխարինելի չարաբաստութեանց տակ  
էր ընկել: Պատմութիւնը Նիկոլին այդ-  
պէս պատկերացուցանելով լոելոյն տալիս  
է նրան մէկ այնալիսի լեզուի ճարտարու-  
թիւն, որ ոչ Գեմութենէսն է ունեցել,  
և ոչ Կիկերոն, որ երբ ընկել է Փիլիպոս  
կաթողիկոսի ոտքերը, և թափել է նորա  
առջև իւր պերճախօսութեան մարդարիտ-  
ները, իսկոյն Փիլիպոս կաթողիկոսը հա-  
լուել է ինչպէս մամ առաջի հրոյ և ինչ-  
պէս ձիւն ի ջերմութիւնէ արեւու: Այժմ  
մաքով նկարագրենք այն պատկերը, որն  
որ պիտի լինէր այն ժամանակը, երբ որ  
Նիկոլ ուզում էր ներկայանալ Փիլիպոս  
կաթողիկոսի առջև: Գիցուք թէ Նիկոլ դը-  
րած ունէր դլսին մէկ սև վեղար: Այս վե-  
ղարը կամ նոր էր գտել, կամ այն իւր  
հինն էր, որ քսան տարի իւր դլսէն յետ  
էր դրել և նորա տեղ Եղուիթաց եռան-  
կիւնի շափակն էր կրում: Այն վեղարը  
դէս ի մէկ կողմը կախ, փիլոնը ուսերուն  
մտաւ Նիկոլ այն սենեակ, ուր որ կար

նատած Փիլիսոփոս կաթողիկոսը, սուրբ Լուսաւորչի աթոռոյ գահակալը և նորա հոգեծին զաւակաց Հովուապետը: ՆիկոԼդրան շեմումը ծունկի չոքեցաւ և սկսաւ բարձրաձայն աղաղակել, իջի պէս միկալով.

Ընդ անառակի որդւոյ գոչեմ առ Հայրդ գթած,  
Մեղայ յերկնու և առաջի քո, քաւի՛ չանցանաց.  
Ե՛լ ընդ առաջ սիրով, զրկեա՛ համբորիւ.  
Մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Յետոյ ասաց խօսելու նման. Շնորհաղարդ սուրբ Հայրապետ. Երուսաղեմին դէսի ի Երիքով իջանող ճանապարհորդի նման՝ իմ չար բնաւորութեանց աւաղակներու. Ճեռք ընկած, կարեվէր խոցուած սլառկած կամ կիսաշունչ ճանապարհի վրայ. ինձ սլատահեցաւ քահանայն (քո նախորդ Մովսէս կաթողիկոսը) և դանց արաւ զինեւ. ինձ սլատահեցան Վետականքն (Գրիգոր և Խաչատուր Կեսարացիք), և ոչինչ օդնութիւն չարարին. այժմ դու՝ սուրբ Սամարացիդ դժութիւն արած ինձ, սլատեած զվէրս իմ այն ձիթոյ և գինւոյ ըստասաւոր կարգելով, որոց որ ես սյսքան ամ էի ոտնհար, մեկը իսպառ եկեղեցիէն և աղդէն մերժելով, և միւսը մէջը ջուր խտոնելով. զիրքո հայրախնամ ողորմութեան դրաստի

վրայ, և հասցուք ի պանդոկ եկեղեցւոյ,  
որ այն տեղ երկուց գահեկանաց վարձու  
նորոգուիմ ի կեանս։ Կամ ասաց թէ՝ «ինձ  
այդսկէս բազմավէր դտաւ Մելքիսէթ կա-  
թողիկոսը և եմոյծ ի պանդոկ Հայաստան-  
եայց Սուրբ Նկեղեցւոյ. այլ ես մօռանա-  
լով նորա երախտիքը՝ Մաղքոսի նման ա-  
ռաջին ասլտակը ծեփեցի Հայրապետութեան  
երեսին, և Եղուիթաց սուսերաւ անկացնե-  
րէս զուրկ մնացիո։ Եւ այս ամենը ի հարկէ  
ասած սլխոի լինի այլակերպ ծամածուռու-  
թեամբ, ունչն ու սլինք խեղաթիւր ծըռ-  
մոկելով. որպէս թէ լալագին կերպարանք  
բռնելով, աչքէն սոխի ջուր կաթեցնելով,  
ոնդունքն և բերնէն լորձունքը և շողիքը  
թորթորելով, որ աւելի խղճահար սնէ, և  
ի դութ շարժէ։ Բայց տեսնենք թէ՝ Փիլիպ-  
պոս կաթողիկոսն-էլ սյնովէս էր նորա վրայ  
մտիկ անում, ինչպէս որ նա էր կամե-  
նում. նա էլ երեսը այնովէս խանդաղառեց-  
նում էր, թէ աչքերը, ունքերը խրթնեցը-  
նում, և դեռ ևս բերանը չըբացած մոքի  
մէջ ասում. «Զի՞նչ խօսի սա զհայհոյու-  
թիւնս»։ Երբ որ Նիկոլ կարկաչում էր թէ՝  
ինձ ողորմիք, տեսնենք նա մոքումը չէր  
ասում, թէ ես քեզ այնքան կ'ողորմիմ, որ-

քան որ դու իմ տառապեալ ազգիս և զաւակներուս ողորմեցար, երբ որ նոքա քսան տարիէն աւելի Աստուծոյ տան դուռը իրանց առաջև փակած էին գտնում: Այս տեղէն մենք պիտի մակաբերենք, որ Փիլիպոս կաթողիկոսը երբ որ տեսաւ Նիկոլի դարշելի երեսը, և լսեց նորա անտանելի խօսքերը, որ էլի սկզբում էր, թէ իմ սպատարագիչ ժամանակը Փափի անունը յիշեմ, ուրեմն պատարագի ժամանակն-էլ նա էլի խելք ու միտքը պիտի Փափի հետ ունենար, էլ ի՞նչ զզջումն էր, և ի՞նչ դարձ էր այն, որ եկել էր մեզաց էր ասում, և հաշոռթիւն էր խնդրում. եթէ չասաց. «Թէ ամեն ասեմ քեզ՝ ո՞չ դիտեմ զքեզ. կամ եթէ չասաց, «Ե՛րթ յինէն անիծեալ ի հուրն յաւիտենական, զոր սլատրաստեալ է դործակցաց քոց սատանացի և հրեշտակաց նորա», եթէ իւր սրբադան աստիճանին և հայրագութ խնամոց անվայելուչ համարեցաւ անարդանօք դուրս հանել իւր ասենէն այն աղքաւեր մարդուն, ասելով. «Հանէք զդա ի խաւտիրն արտաքին, զի անդ դատապարտեսցի ի լալ և ի կրծել զատամունս», գէթ միտքը բերելով իւր համազգի որդւոց բազմամեաց տառասլանքը

ասաց. «Ո՞րդեակ, շատ եմ ցաւում, որ ես  
ռքեզ չեմ կարող ոչինչ օգնութիւն անել.  
առելի՝ ես ցաւացրել ազգի սիրաը, աւելի  
ևս վշտացրել Հայոց հոգին. Էլ քամի  
օխաղալու ծակ չես թողել: Ես ինչ երե-  
առվ ասեմ ազգին թէ՝ հաշտուեցէք: Ազգը  
ոիմ արծաթաղին ծառայքս չեն: Գու աղ-  
ոզին ես վշտացրել՝ ազգէն խնդրէ ներո-  
ւղութիւն: Գու եկեղեցւոյն ես վշտացրել՝  
և եկեղեցին խնդրէ թողութիւն: Գու կրօ-  
նին ես վշտացրել՝ կրօնէն խնդրէ: Ես ոչ  
ազգ եմ, ոչ եկեղեցի եմ և ոչ կրօն: Եթէ  
ևս ազգի Հայրապետ եմ՝ ազգի պահպա-  
հութեան համար եմ, և ոչ ոտնակիս ա-  
նելու համար: Եթէ ես եկեղեցւոյ գլուխ  
և եմ՝ եկեղեցւոյ պաշտամութեան, և ոչ  
անսպատուութեան համար եմ: Եթէ ես  
ոկրօնի դիտապետ եմ՝ կրօնի ջատագովու-  
թիւնը սուրբ և անբիծ պահելու, և ոչ  
ածաղը ու ծանակ անելու համար եմ: Ես  
ամրայն իմ կողմանէ կարեմ ներել և կընե-  
արեմ, էլ չեմ յիշիր քո այն ամեն անդրա-  
ւմութիւնը, ինչ որ ինձ արիր. իսկ ազգի  
ոկողմանէ չունիմ ես երեսփոխանութիւն  
և չեմ կարող ոչինչ անել, ոչինչ խոստա-  
նալ, ոչինչ տնօրինել: Եւ եթէ ես առանց

ապդէս լիակարողութիւն ունենալու քեզ  
«ընդունիմ» , ներեմ , քո խնդիրը կատա-  
գրեմ՝ ես ինքս պիտի իրաւամբ ընկնիմ  
ապդի արդար բարկութեան տակ . ազգը  
ալիտի ինձմն վիրաւորուի , վշտանսց , ինձ  
ալիտի ատէ , բամբասէ , անիծէ . քեզ պիտի  
ամոռանսց , խակ ինձ նզովէ , որովհետեւ ես  
ալիտի քեզ ազգի աշքի մէջ փոշի և գե-  
գրանի նման զրած լինիմ : Չէ , որդեսիլ ,  
այդ անհնարին է , ոչ միայն այն մասին ,  
որ ազգը ինձ իրաւունք դեռ չէ տուել ,  
այլև այն մասին , որ ես դեռ ազգէս հար-  
ցուցած չեմ , և ինչովէս հարցնեմ , որ  
զու ազգը աշխարքի չորս հողմերուն մատ-  
նած ցրուել ես : Քո վշտացուցած ազգը  
առւր է այժմ , որ ես երթամ նոցա հետ  
«խօսիմ» և յորդորեմ , որ հաշտուին : Ուր  
ևն քառասուն հաղար Հայազգի գերդաս-  
տունները , որ մինչև քո շփոթը մեկ տեղ  
«համախմբած» երջանիկ խաղաղութեան մէջ  
էին բարդաւաճած . Լեհաստանը նոր Հա-  
յաստան էին արել . բարբարուաց հալա-  
ծանքներէն ազատուած՝ սկսել էին շունչ  
«քաշել , սկսել էին դրականութեան սկարա-  
սլիլ . սկսել էին լուսաւորուիլ , սկսել էին  
«Եւրոպական հրահանգութեան բաժանորդ

« Ադանուիլ . այն քառասուն հաղթար տունեն  
անքան են մնացել , Խլովումը քանի տուն  
ական այժմ . մնացածը ուր են , ուր ցրուե-  
ացիր . « Ուր է եղբայրն քո Արէլ . » ուր  
է սիրելին իմ Յովսէփ . դու գիտե՞ս , թէ  
ուր ցրուեցան և ուր գնացին , Եղուիթա-  
կան գայլերը նրանց ո՞ր տեղերք վարատե-  
ացին : Այժմ այն մէկ քանի անտէր անձար  
ապահատ տները , այն իմ սովարաղդ հօտի  
ավատուժ ոչխարները , որ կարօտ են անձ-  
անաղիր և քաջ հովուի՝ չեմ կարող նոր  
« ի նորոյ գայլի ճանկը մատնել , կամ ան-  
« հաւատարիմ վարձկանի յանձնել » :

« Եշթէ ես քեզ ներեմ՝ աղդի , եկեղեցոյ  
և կրօնի դէմ արտծներդ , և կրկին քեզ  
անդիսկոպոս ճանշնամ կամ անարժան և  
անհանձար առաջնորդութիւնդ քեզ յետ  
սում՝ աւելի սխալած կրկինիմ , քան թէ  
« իմ նախորդ հանդուցեալ Մելքիութէ կա-  
ռժողիկոսը , որ քեզ վրայ դրել է իւր աջը ,  
արայց Հոգւոյն Սրբոյ շնորհը չէ հրաւիրել  
ոք դլսի վրայ . նրա անունը քո սպատճա-  
ռաւ մնաց աշխարքի մէջ արատաւոր , որտէս  
« թէ կաշառ առաւ և անարժան ձեռնա-  
« զրութիւն արաւ . ինձ համար էլ սիրտի  
ասմեն թէ՝ Քրիստոսի փոքր հօտի մէջ գայլ

աներս թողեց. ես ի՞նչ եմ առել՝ որ այդ  
ավատ անունը ժառանգեմ, տամ քեզ այն՝  
որ չունիմ իրաւունք և հարկ տալու։  
«Աթէ դու լինեիր մեկ այնպիսի յան-  
ոյաւոր, ինչպէս որ են գողերը, աւազակ-  
ները, սլունիկները, մարդասալանները,  
«զղջայիր և գայիր ինձ խոստովանեիր քո՝  
«մեղքը, ես էլ տեսնէի քո ի սրտէ դարձը՝  
«կարող էի և պարտաւոր իսկ էի ո՛չ թէ  
ամեկ անգամ կամ եօթն, այլև եօթանառ-  
անեկի եօթն անգամ ներել և թողուլ. ո-  
«րովհետեւ մեր վրայ հարկ է դրած թողուլ  
«զմեղս և թողուլ պարտասանաց զսկարտա-  
«Այլ քո յանշտնքն մեղքայի տեղ չունի.  
«դու Հոգւոյն Սրբոյ հակառակ էիր, դու  
«զլյուրք Հողին հայհոյեցիր, և մի՛ թողքի  
«քեզ ո՛չ աստ, և ո՛չ ի հանդերձելումն:  
«Գու քո մոլորամիտ և մտախար համոզմանց  
«կամակարութեամբ՝ ընդգէմ յայտնի ճշմար-  
«ռութեան պատերազմեցար. դու գիտակ-  
«ցութեամբ մտաց արիր յանդդնութիւնը  
«ընդգէմ հոգեւոր գեղոց. դարձեալ չարա-  
«մտութեամբ գահավիթեցար ի խորխորատ  
«յուսահատութեան։ Դու ամեն ինչ յառա-  
«ջագոյն մտածելով և դիտաւորութեանդ  
«ամեջ ամբասկնդելով արիր ամեն ինչ այնպէս,

«ինչպէս որ շատ տարի առաջ Եղուիթք  
առզում էին անել և չեին կարողանում.  
«Դու նոցա ձեռին դատար սլատրաստական  
առնօթ ընտիր միայն ի կորուստ յարմա-  
քրեալ: Ես քո մեջը տեսնում եմ մարմնա-  
ցած բոլոր Եղուիթաց կարգը, կրօնաւո-  
քրութիւնը, ընկերշակութիւնը, Լոյնուան  
առրբանեկաց մեքենաները, և քո սրտի մեջ  
անշէջ է վասվում ինկվիզիցիայի բոցը,  
«ինչպէս մեկ ժամանակ հրատաշոից ատ-  
քրուշանի մեջ՝ մշտակեզ կրակը:»

«Նեռացի՞ր ինձմեն, որդեակ, որ ես կա-  
պրողանամ քո այնքան անողորմ սրով մա-  
քտաղ արած զոհերու սուզը սգալ և ողբը  
ռողբալ: Գու շատ ծաղկունք թառամեցու-  
ցիր Լուսաւորչի սլարտիզէն, որ կարկտա-  
հար վարդերու նման ընկած են. շատ դառ-  
ներ գիշատեցիր Թագէոսի հօտէն, որ շաղ-  
պակեր ժանեօք փշրվում են. շատ զաւակ  
առտարացուցիր Հայաստանի մայրական ծո-  
ցէն, որ այժմ Հռոմայ ճանկերումը հե-  
ռում ու հառաջում են: Գնա, մի՛ երեիր  
աչքիս, որ քեզ տեսնելով՝ հոգւոյս վերըը  
ոչըպայրանան և ցաւերս չընորոգուին: Զէ  
մկարող հայրը հաշտուիլ իւր զաւակներու  
ամարդախոշոշ կոտորողի հետ. չէ՛ կարող

ածնողը ուղիղ աչքով նսյել իրան անդաւակ և ստեցնողի երեսին: Քո սկատառած ոչխար- աներու դիակունքը դեռ չեն իսպառ հողա- ցել. քո արծարծած հրդեհի կայծակուն- քը դեռ չեն բոլորովին դազախացել. գնա և իմ երեսին. ես չեմ կամենում որ իմ ազ- գը մեկ օր ինձ համար-էլ ասէ թէ՝ Փի- ւլիսլալոս կաթողիկոսը ներողութիւն է տու- աել Նիկոլին: Այդպիսի ներողութիւն Լու- սաւորիչն էլ չէր տար. այդպիսի հաշտու- թիւն Մեծն Ներսէսն-էլ չէր կամենար. այդպիսի խազազութիւն Սահակ Պարթևն էլ չէր յերազէր. այդպիսի հայրորդիու- թեան, ինչպէս որ դու ես կամենում ունե- նալ ինձ հետ, կամ իլովացոց հետ, Ներ- սէս Շնորհալին և Ներսէս Լամբրոնացին էլ չին ցանկար: Միոքան բեր քո սկաշտած Փափմերու կայսերաց հետ ունեցած ներո- ղութիւն համար խեղկատակութիւնը: (\*)

(\*) Հենրիխ 4-դ Գերմանացոց Հռոմեա- կան կայսրը, որ մեկ քանքարաւոր մարդ էր, իւր դաստիարակի սկատճառաւ բարկացել էր Սաքսոնացոց վրայ և միշտ նոցաւ ասլրս- տամբութեան եղջիւրը ջարդում էր սաս- տիկ սկատուհամներով: Սորա թագաւո-

«ԵՌՈՂԵՐԱԿԻ, ՊՐԵՇՆԱՎՈՅՆԻ ԼԻՆԴՐԵՆՑԵՐ. և մի մեղա-  
պղբեր ինձ՝ ՀԱՅԿ ՍՊԱՀՆՈՒՄՊՈՎԱ, ՊՐՈՒՀԵԿԱ-  
ՇԱՐԱՅՆԱՐ ԼԻՆԴՐԵՆՑԵՎ»:

«ԳԻՒԹԻՄ որ այժմ այս բռակէիս զղջացած  
աեւ, բայց քո զղջումն՝ Կայենի զղջումն է.  
առանձին լուսը չո լուսուն. Արէլը անշունչ ըն-  
կած է գիւթինացած, ևս քեզ ինչալէս թու-  
ազութիւն տամ, մինչ Ագամ և Եւսոյ կո-  
պրինակորոյս առիւծուց նման երկինք ու  
աերկիր գոռացնում են իրանց ճիշով ու

---

ըութիւնը տեսեց 1056 թուն մինչև 1106  
թիւը: Այս այն թուականն էր, որ հասա-  
րակ ժողովրդեան հասկացողութեամբ Յո-  
հաննու տեսլեան կապանաց հազարամետ-  
կը լրանում էր, և սատանայ վիշտավը սիստի  
ազատուէր և իւր իշխանութիւնը սիստի  
տար մեծ գաղանին, և նորա առջև սիստի  
խաղար փոքր գաղանը: Այս միջոյներումը  
նստաւ Հռոմայ քահանացավետական աթո-  
ռը Գրիգոր Եւլուէրութ Փափը, որ առաջ  
Հիւրենութ էր կոչվում: Սա Հռոմայ իշ-  
խանութիւնը զօրացնելու և համաշխարհա-  
կան շնորհու մտքով քահանացից ձեռքեն  
կին ունենալը և ամուսնանալը խլեց. և ու-  
զում էր, որ ամեն թագաւորներու վրայ

Ականչով : Քո զղջումն Սաւուղայ զղջման  
հնման է . Դաւիթին յոգիս ասլաստան ես  
«արել . Քահանայից Դովելիներու ձեռք ես  
«մատնել , Սամուելի վերարկուն ես պատ-  
ռակ , Ամաղելի աւարին ես աղահել , և  
այժմ ասում ես թէ մեզայ և դարձեալ  
«ասում ես՝ առաջնորդ լինիմ և Հայոց  
«եկեղեցումը Փափին յիշեմ . ուր է քո  
«իսօսքի մէջ առողջ տրամարանութիւն . այդ  
«է քո դարձը . միթէ այս քանուերեք տա-

---

թագաւոր լինի և կայսերաց վրայ՝ կայսր :  
Սորա կամեցած բաներէն շատը յաջողից :  
Սաքսոնայիք երբ որ տեսան դորա յաջո-  
ղութիւնը , դիմեցին նորա ոտքը , որ նա  
դատաւոր նստի իրանց և Հենրիիս կայսեր  
մէջ : Փափին-էլ խօ այդ էր ցանկանում :  
Երբ որ Փափը կանչեց կայսերը իւր ատ-  
եսն , և նա ըրկաց , Փափը նրան բանագրեց , և  
կայսեր իշխանըք , որ բարեկամ չէին նրան ,  
աղահանջեցին , որ նա կամ մէկ տարուան  
մէջ կարողանայ Փափի հետ հաշտուիլ և  
բանագրանքը վրայէն վերցնել , կամ կայ-  
սերական աթոռէն հրաժարուի : Կայսրը  
մնաց նեղ տեղ : Իւր հաւատարիմ կնոջ և  
միայն մէկ ծառայի հետ եկաւ Քանուեան

զոին այդ խօսքերու դէմ չէին ոգորում իմ  
պաղճալի ժողովուրդը և իմ ողորմելի նա-  
պարորդը Մոլսէս կաթողիկոսը, և մեծարելի  
գրիգոր և խաչտուր Կեսարացիք այդ  
այաւերով ջրմաշուեցան. ես ո՞ր մեկ մեղացդ  
վժողութիւն տամ: Քո զղջումը Յուդայի  
զղջման հաւասար է. անալարտ արիւնը  
և ամատնուել է և արդէն թափուել է. արծա-  
ւթը մտել է մատնիչի անյատակ և անյագ  
ածոցը. արծաթասէրը դուրս է ընկել առա-  
քելական դասէն. քեզ ոչ եթէ խղճմտան-  
աքըն է բերել ինձ մօտ, այլ աղքատու-  
թիւնը. աղքատացրիր Ճոխ եկեղեցիքը,  
աղքատացար ինքդ-էլ. Նեղութիւն տուիր  
աժողովրդեանդ, ինքդ-էլ ընկար նեղութեան

---

բերդադարակը, ուր որ կենում էր Փափը  
գեղեցիկ Մատիլդա՝ Թոսքանայի Մարկորա-  
ֆինայի մօտ: Բայց շուտով ջրտեսաւ Փափի  
երեսը: Երեք օր երեք գիշեր ձմեռը ցուրտ  
բացօթեայ երկնքի տակը՝ բոկոտն և դըլ-  
խիբաց կայսրը կողկողում էր, և հաղիւ  
ստացաւ բանադրանքէն արձակումն, թէսլէտ  
և ինքը շատ աւելի և շատ առաջ արձակ  
և աղատ էր ամեն նախալաշարմունքէն,  
որոյ մէջ այն դարը պարանոցաթաղ էր:

«մէջ. ցրուեցիր ոչխարներդ, ինքդ-էլ մնացիր ինչպէս հովիւ առանց հօտի, զրկուեցար կաթէն ու բուրդէն. քո գառներու աղարարտութիւնը՝ ձարան ու ամուճը կերան Եղուիթք. դու այժմ աստ սռչուման և ինընչես:

«Գնած բեր քո ցրուած խաշն, թողանոքա ասեն ինձ՝ ԱՄԵՆՔ ներում ենք ես և էլ կներիմ: Գրուած է՝ Որ Հանճարեղն աէ՝ զառաջնորդութիւն նա ստասցի: Ո՞ւր աէ քո Հանճարը. Հանճարեղ առաջնորդ էիր քո ժողովրդեան համար: Ի՞նչպէս քեզ առաջնորդութիւն այն ժողովրդեան պիրայ, որոյ համար այսքան տարի գու աղահիձ էիր: Ի՞նչ ասեմ ժողովրդեան՝ քեզ աջառադովելու և նրանց համովելու համար, երբ որ դու, մնալով ի նոյնութեան, ամիշտ գործում ես զնոյն: Հանէ՛ միտքեդ «Հայոց առաջնորդութիւնը: Կարո՛ղ ես իլու ավու առաջնորդ լինել, բայց ո՛չ Հայոց: Քիո ձեռին են բռնութեամբ յափշտակած աւ գողութեամբ մերկացուցած և նոր ի նորոյ օրհնավելու կարօտ մնացած եկեղեցիները. եթէ այն տեղ կ'ուգան կրօնափոխ ժաղովուրդներ, ծիսափոխ քահանաներ, «Հաւատադրուժ մարդիկ՝ նոյտ վրայ կա-

«րող ես ո՞չ թէ միայն առաջնորդ դառնալ,  
այլև եթէ Եղուիթք օգնեն, թէ կամիս  
աֆափ-էլ դառիր. այն ժամանակը ո՞չ թէ  
«միայն Հռոմաց քահանայապետին, այլև  
«Հռոմաց բոլոր ժամակոներուն կարես քո  
առւրբ պատարագի մէջ յիշել։ Այլ թէ  
ազու կամենում ես, որ ես քեզ իմ Հայրա-  
ալետական իշխանութեամբ ներեմ, ահա  
այս է ճանապարհը. գնալ Էջմիածին, բը-  
ճնակէ վանականաց խցումը, կե՛ր Էջմիածնի  
«Հացը, ապաշխարէ, լաց քո անցեալ մեզ-  
«քերուդ վրայ. և երբ մեռնելու ժամանակդ  
«Հասնի՝ ես կը հրամացեմ, որ քեզ Հայոց  
«կարգաւորը խոստվանեցնէ, հաղորդէ և  
«եթէ մեռնիս՝ թաղէ ինչպէս կարգաւոր-  
«քայց առանց մահու վտանգի չեմ կարող  
«քեզ ո՞չ թէ եպիսկոպոս ընդունիլ, կամ  
«կարգաւոր, այլև ո՞չ Հայ քրիստոնեայ։

«Երկնաւոր Հօտապետ՝ որ ինձ կաթո-  
«ղիկոս է արել, այն մաքով չէ տուել ինձ  
«Հռոմալետութիւն, որ ես նորա փոքր  
«Հօտի վրաց քեզպէս մարդագայլ հովհանք  
«պնեմ։ Աստուած ո՞չ անէ, որ ես այսպիսի  
«ախալմանց մէջ գտնուիմ, և այդ վատ  
«յիշատակը մնայ աշխարքի երեսին։ Այդ  
«գործը կը լինի այնպիսի անմտութեան կո-

«թող, որ քան զեջմիածնի իմ շինած զան-  
գակատունը բարձր կ'երևի, և ամեն կող-  
մանց կլոտեսնուի, և ամեն ժամ, երբ որ  
«այն զանգակատան մէջ զանգակի ձայն կը-  
«հնչէ՝ պիտի Հայոց ազգին միտքը ձդէ, թէ  
«այս զանգակատունը շինել է այն մարդը՝  
ոոր Նիկոլին Հայոց ազգի առաջնորդ է,  
ողբել։ Աորա գոյժը աւելի կրյինի, քան  
«թէ Կայենի ճակատին բուսած առասպե-  
«լեալ եղջիւրը, որ Արէլի սպանութեան  
«համար ճիւաղական ձայներով խայտառա-  
«կում էր եղքայրասպան սրիկային։ Մի՛ կար-  
«ածեր որդեակ՝ որ ես կամենամ յետագայ  
«Հայկազանց անէծքը, գժգոհութիւնը, վրէս  
«առնուլ, և իմ ոսկերքը գերեզմանիս մէջ  
«անհանգիստ անել։ Օրհնեալ լինիք քո ա-  
«ռաջնորդութիւնն-էլ, գու-էլ, քեզ ներողն  
«էլ։ Գնա՞ ուր որ կամիս, առաջնորդ դա-  
«ռիր, Փափ դառիր՝ որոց որ կամենաս.  
«թող Փափը քեզ առաջնորդ անէ, և վեց  
«հաղար սպայմանեալ թալէրը տայ կրօնա-  
«կոխութեանդ վարձը. թող Եզուիթք քեզ  
«առաջնորդ անեն, քեզ՝ յե՛տ տան իրանց  
«առածները. ես անխառն եմ»։

«Ապա եթէ կամենում ես, որ ես-էլ քո  
այսքան տարուան զործերուդ մասնակից

«լինիմ, և քո առաքինութեանց երանակից,  
«շնորհակալ եմ քեզմէն, դու միայն վայելէ  
«քո սերմանած պտուղներու արգասիքը,  
«դու ստացիր քո աշխատութեանց արդիւն-  
«քը. Ես չեմ ուզում. որ ինձ համար ասեն  
«լաւ մարդ էր, ներող հայր էր, ողորմե-  
«ցաւ անառակին և կրկին հագցրուց մեր-  
«մկացած պատմուձանը: Ես յօժար եմ, թող  
«ասեն՝ դառնահոգի մարդ էր, չունեցաւ  
«անյիշաչարութիւն, ցոյց չըտուեց անօխակա-  
«լութիւն. թող ինձ այս մասին չըգովեն,  
«ոյիւղ մեղաւորի մի օծեկ զգլուխ իմ «. այդ-  
«ալիսի արարմանց դէմ անյիշաչար լինիւլչեմ  
«կարող, չեմ կամենում և չեմ յօժար. քեզ  
«առաջնորդ կարգելու Հայոց ազգի վրայ  
«չեմ համաձայն. և եթէ այդ քո կամեցած  
«ապայմաններով ժողովուրդը կըկամենայ քեզ  
«ընդունիլ, այն ժողովուրդը իմ որդիք չեն,  
«Էջմիածնի ծնունդ չեն, և ես այդպիսի  
«թէութիւնների հաճ և հաւան չեմ. գնա՛.  
«Աստուած բանդ աջողէ»:

Ակերք.

